

**ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶԿԱՅ ԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼ ՍԱՐԱՆ**

ՆԱԶԵԼԻ ՌՈՒԲԵՐՏԻ ՀԱԿՈՒՅԱՆ

**«ՆԱԿԱՆԶ» ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԸ ՀԱՅԵՐԵՆՈՒ ՄԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒ ՄԵՎ
ԴՐԱ
ՄԻԱԿՈՐՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՅ ԱՏԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԱՏԵՆԱԿՈՍՈՒ ԹՅՈՒՆ

Ժ.02.02 - «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն»
մասնագիտությունը բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման համար

**Գիտական ղեկավար՝
բ.գ.դ., Եղիազարյան Գ. Վ.**

ԵՐԵՎԱՆ – 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆ

ՆԵՐԱՃՈՒ ԹՅՈՒՆ 2

ԳԼՈՒԽ 1. «ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ	10
1.1. ԲԱՌԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ՝ ՈՐՊԵՍ ԼԵԶԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ	10
1.2.ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ	27
ԳԼՈՒԽ 2. «ՆԱԽԱՆՁ» ԵՎ «ENVY» ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԵՐԻ ՉՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ	39
2.1 «ՆԱԽԱՆՁ» ԵՎ «ENVY» ԱՐՄԱՏՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԵՎ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ	40
2.2 «ՆԱԽԱՆՁ» ԵՎ «ENVY» ԻՄԱՍՏՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱԿՈՐՆԵՐԻ ՉՈՒԳՈՐԴԱՅԻՆ ԴԱՇՏԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ.....	82
ԳԼՈՒԽ 3. «ENVY» ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԻ ԱՌԿԱՅԱՑՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ ԵՎ ԴԱՇՏԻ ՄԻԱԿՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ	93
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	135
ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	140
ՀԱՎԵԼ ՎԱՃԵՐ	149

ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից լեզվաբանությունն այսօր ուսումնասիրում է ոչ միայն լեզվական առանձին երևույթները, այլև կարևորում լեզվաբանության և հարակից այլ գիտակարգերի առնչությունների քննությունը: Այդ համատեքստում համեմատական

ուսումնասիրությունների ոլորտ են ներառվում լեզվական կառույցները և իմաստային դաշտերը, ինչպես նաև այդ դաշտերում ընդգրկված միավորների թարգմանության և համարժեքության հիմնախնդիրները: Տիպաբանության համար գլխավոր հետաքրքրությունն ներկայացնող խնդիր է լեզուների միջև լեզվական կրկնվող իրողությունների բացահայտումը, որոնք վկայում են լեզվական ընդհանրությունների գոյության մասին (տե՛ս Եղիազարյան 2007:7):

Սույն առենախոսության ուսումնասիրության շրջանակներում առավել կարևորվում է բառապաշարում համակարգային կապերի, լեզվում բառիմաստային կապերի ուսումնասիրությունը, բառերի առանձին խմբերի բնույթի և այդ խմբերի միջև եղած հարաբերությունների ուսումնասիրությունը: Սրա հետ կապված ժամանակակից լեզվաբանության մեջ ուսումնասիրության օբյեկտ հաճախ դառնում են լեզվական համախմբումների տարբեր տիպեր, որոնց համար ընդհանրական է սեռանիշ (гипероним) «**դաշտ**» եզրույթը (տե՛ս Նազարյան, Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն բառարան, այսուհետ՝ ԼՏԲ 1993:243):

«Իմաստային դաշտ» հասկացությունն առաջին անգամ առաջարկվել է գերմանացի և շվեյցարացի լեզվաբանների՝ Յո.Տրիրի, Վ.Պորցիգի, Գ.Իփսենի, Լ.Վայսգերբերի կողմից 20-րդ դարի 20-30-ականներին: Դրա զարգացման պատմությունը կապված է նաև խորհրդային լեզվաբաններ Ա. Ուֆիմցևայի, Յուլ. Կարաուլովի, Վ. Գակի, Լ. Նովիկովի, Յուլ. Ապրեսյանի և այլոց անունների հետ:

«**Դաշտ**» եզրույթը բնորոշվում է որպես «ընդհանուր նշանակություն ունեցող բառերի միասնություն» (Ipsen 1932:225): Ըստ լեզվաբանական հանրագիտարանային բառարանի՝ **իմաստային դաշտ** «հարացուցային կապ ունեցող բառերի կամ դրանց առանձին նշանակությունների շարք է, որն իր կազմում ունի ընդհանուր իմաստային հատկանիշ և տարբերվում է առնվազն մեկ տարբերակիչ հատկանիշով» (տե՛ս Лингвистический энциклопедический словарь, այսուհետ՝ ЛЭС 1998:380): Այսպիսով, լեզվի բառապաշարը կարելի է խմբավորել տարբեր իմաստային խմբերում ու դաշտերում՝ ելնելով նրանց իմաստային ընդհանրությունից:

Ուսումնասիրելով *իմաստային դաշտի* հասկացությանը նվիրված աշխատությունները, մասնավորապես՝ Լ. Վասիլևի, Ե. Դիբրովայի, Ռ. Գայսինայի, Ի. Չումակ-ժուկի, Չ. Պոպովայի, Ի. Ստերնինի, Ի. Սալոմատինայի դրույթները՝ որպես ատենախոսության տեսական հիմք ենք ընդունել Ի. Ստերնինի տեսակետը, որն առանձնացնում է *իմաստային դաշտի* հետևյալ **հատկանիշները**՝ դաշտը համակարգային հարաբերություններով փոխադարձաբար կապված միավորների ամբողջությունն է, որի միավորներն ունեն *իմաստային* ընդհանրություն: Դաշտի մեջ առանձնացվում են **միջուկային** ու **եզրային** բաղադրիչները:

Միջուկային բաղադրիչներն առավել հստակ են իրականացնում դաշտի գործառույթը. գործածության ավելի բարձր հաճախականություն ունեն, հիմնականում պարզ կառուցվածք ունեցող բառեր են և հարանշանակորեն չեզոք են, իսկ *եզրային* բաղադրիչները ունեն ավելի բարդ կառուցվածք, հնացած կամ ոչ այնքան հաճախ կիրառվող և հարանշանակային իմաստներ պարունակող բառեր են (այստեղ ընգրկվում են նաև դարձվածային միավորները): *Միջուկի* և *եզրի* միջև սահմանը հստակ չէ՝ տվյալ դաշտի բաղադրիչները կարող են պատկանել *միջուկին*, իսկ մեկ այլ դաշտում լինել *եզրային* գոտում, տարբեր դաշտեր տրամախաչվում են՝ այդպիսով կազմելով անցումային գոտիներ, և դա լեզվի համակարգի դաշտային կազմակերպման օրինաչափությունն է (տե՛ս Стернин, Саломатина 2011; Попова, Стернин 2009):

Տարբեր լեզուներում դաշտերը ներկայանում են ոչ միայն լեզվական միավորների ընդհանրությամբ, այլ նաև տարբերություններով, որոնք առավել ներկայանալի են գեղարվեստական թարգմանության մեջ:

Վ. Կոմիսարովը նշում է, որ «թարգմանության ժամանակ բախվում են տարբեր մշակույթներ, տարբեր անհատներ, տարաբնույթ մտածողություններ, զանազան գրականություններ, տարբեր դարաշրջաններ և զարգացման ամենատարբեր մակարդակներ, ավանդույթներ ու սովորույթներ» (Комиссаров 2002:23): Իսկ ցանկացած թարգմանության խնդիրն է թիրախ լեզվի լեզվական միջոցներով հաղորդել բնագրի ամբողջական և ճշգրիտ բովանդակությունը՝

պահպանելով նրա **իմաստային, գործաբանական, ոճական** ու **արտահայտչական** առանձնահատկությունները, այսինքն՝ պահպանել **համարժեքությունը**: Իսկ բնագրի և թարգմանության միջև համարժեքությունը կարող է ձեռք բերվել ինչպես բազմազան **թարգմանական փոխակերպումների՝ հնարների** (*հավելում, գեղջում, փոխհատուցում, պատճենում, խոսքիմասային փոխակերպում* և այլն), այնպես էլ տարբեր տեսակի թարգմանությունների միջոցով (*համարժեք, նկարագրական, բառացի*):

Ատենախոսության մեջ «*թարգմանական համարժեք*» ասելով հիմնականում կարևորում ենք *իմաստային համարժեքությունը* և ոչ թե լեզվական բոլոր օրինաչափություններին համապատասխանող համարժեքությունը:

«Թարգմանության փոխակերպումների մեծամասնության եությունը ելակետային տեքստի ձևական (ձևական-քերականական), բառային, իմաստային և ոճական բաղադրիչների փոփոխությունն է, ընդ որում, հաղորդման համար նախատեսված հիմնական տեղեկատվությունը՝ անփոփոխակը, պահպանվում է:

Չամպատասխանաբար առաջանում են քերականական, բառային և ոճական փոխակերպումներ» (Նազարյան 2000:341):

Չարկ է նշել, որ լեզվական միավորների բովանդակության պլանը նույնքան ինքնատիպ է, որքան և վերջիններիս արտահայտման դաշտը: Թարգմանության ժամանակ բոլորովին էլ չի կատարվում բնագրի միավորների իմաստի փոխանցում կամ վերարտադրում մեկ այլ լեզվի իմաստով, այլ տեղի է ունենում մեկ լեզվի իմաստների փոխարինում մեկ այլ լեզվի իմաստներով: Կիրառելով բառերի իմաստային և քերականական միավորների **բաղադրական վերլուծությունը** (տե՛ս Ջահուկյան 1989:11) պարզ է դառնում, որ այդպիսի փոխարինման դեպքում թարգմանություններում տեղի է ունենում բնագրի համապատասխան արտահայտությունների հմակային կազմի միայն մասնակի համընկնում (Catford 1965:20-21):

Ներկայումս լեզվաբանական ուսումնասիրությունները կատարվում են նաև տարբեր լեզուների *իմաստային դաշտերի* վերլուծության և դրանց գուգադրման կարևորության փաստի հիմնավորմամբ: Չ.Պոպովան և Ի.Ստերնինն արդարացիորեն նշում են,

որ տարբեր լեզուների նույն իմաստային դաշտն ունի ազգային յուրահատկություն, որն արտահայտվում է այդ դաշտը կազմող միավորների քանակով, նրանց միջև եղած իմաստային հարաբերությունների քանակով և տեսակներով: Ըստ նրանց՝ ժողովրդի կյանքի ու կենցաղի պայմանները նպաստում են, որ այս կամ այն իմաստային դաշտն առավել մանրամասն կառուցվի (Попова, Стернин 2007:258-259): Նման ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռում բացահայտել ու տարբեր լեզվակիրների ազգային ու աշխարհընկալման նրբերանգները և վերհանել նրանց մշակութային ինքնության նմանություններն ու տարբերությունները:

Չափազանց հետաքրքիր են համընդհանուր, սակայն իմաստային որոշակի նրբերանգներով տարբերվող զգացումներն ու զգացողություններն արտահայտող բառույթների համեմատական ուսումնասիրությունները: Այս կամ այն զգացողության լեզվականացման առանձնահատկությունները պարզաբանելու համար կարևորվում են ոչ միայն դրա բառարանային սահմանումները, այլև գեղարվեստական գրականությանից քաղված օրինակների վերլուծությունը: Առավել հետաքրքրական է, երբ գեղարվեստական երկում առկա հասկացությունների իմաստային առնչությունները համեմատվում են այդ երկերի թարգմանություններում առկա միևնույն հասկացությունների հետ:

«**Նախանձ**»¹ իմաստային դաշտի լեզվամշակութային առանձնահատկությունների դիտարկումը մեծ հետաքրքրություն է ներկայացնում՝ նպաստելով գուճադրվող լեզուների ազգային, մշակութային, պատմական, հասարակական կարևորություն ունեցող արժեքների բացահայտմանը: Թեպետ ռուս լեզվաբանության մեջ *Նախանձ* բառույթի վերլուծության փորձեր արվել են², ինչպես նաև հրապարակվում առկա են տարբեր իմաստային դաշտերին նվիրված

¹ Ատենախոսության մեջ *Նախանձ* և *envy* արմատները կիրառվել են թե՛ չակերտներով, թե՛ առանց չակերտների:

² Տե՛ս Григоренко Н., Концепт «envy» и его языковая репрезентация в современном английском языке, дис...канд. филол. наук, 10.02.04- Белгород, 2008, 156 С.; Несветайлова И., «Зависть» и «ревность» как эмоциональные концепты русской и английской лингвокультур, дис...канд. филол. наук 10.02.20: Армавир-2010, 215 С.: Երկու աշխատանքում էլ «*Նախանձը*» դիտարկվել է որպես հասկացույթ՝ հոգեբանության, փիլիսոփայության, հանրաբանության, աստվածաշնչյան մեկնաբանությունների համատեքստում:

բազմաթիվ ուսումնասիրություններ, «**Նախանձ**» իմաստային դաշտը չի ուսումնասիրվել հայերենում, ավելի, գուգադրական քննության չի ենթարկվել հայերենում և անգլերենում: Յետադոտության մեջ ոչ միայն առաջին անգամ քննության են ենթարկվել «*Նախանձ*» և «*envy*» իմաստային դաշտերը, այլ և այդ դաշտերն ուսումնասիրվել են թարգմանական համարժեքության տեսանկյունից՝ տարբեր դարաշրջաններում և մշակույթներում ստեղծագործող հեղինակների գեղարվեստական տեսքերում և վերհանվել այդ հեղինակների աշխարհընկալման տարբերությունները՝ խնդրո առարկա՝ «*Նախանձ*» զգացումի ներկայացման համատեքստում: Վերլուծելով «*Նախանձ*» և «*envy*» իմաստային դաշտերը հայերենում և անգլերենում՝ փորձ է արվում անգլերեն ստեղծագործություններում և հայերեն համապատասխան թարգմանություններում գտնել դրանց լեզվական, ոճական ու գործաբանական առանձնահատկությունները՝ լեզվամշակութային գործոնների հաշվառմամբ:

Սույն ատենախոսության ուսումնասիրության նյութ են տարբեր լեզվական միավորներ՝ գոյականներ, բայեր, ածականներ, դարձվածային միավորներ, որոնք ուղիղ կամ փոխաբերական իմաստով վերաբերում են «*Նախանձ*» իմաստային դաշտին: Ուսումնասիրվող միավորները դուրս են գրվել տարբեր աղբյուրներից, **հայերենում**՝ Յ. Աճառեանի «*Յայերեն արմատական բառարան*», Գ. Ջահուկյանի «*Յայերեն ստուգաբանական բառարան*», Է. Աղայանի «*Արդի հայերենի բացատրական բառարան*», Ս. Մալխասյանցի «*Յայերեն բացատրական բառարան*», Պ. Ճիզմեճեանի «*Յայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան*», Ա. Տերխաչատուրեանի, Յ. Գանգրունիի և Կ. Տոնիկեանի «*Յայոց լեզուի նոր բառարան*», Գ. Ճերեճեանի, Կ. Տոնիկեանի և Ա. Տերխաչատուրեանի «*Յայոց լեզուի նոր բառագիրք հայերեն լեզուի*», Ա. Սուքիասյանի «*Յայոց լեզվի հոմանիշների բառարան*», Ա. Սուքիասյանի «*Յայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան*», Յ. Գայայեանի «*Բառարան գանձարան հայերեն լեզուի*», Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի «*Յայոց լեզվի դարձվածաբանական բառարան*», ՅՍՄՅ ԳԱ «*Ժամանակակից հայոց լեզվի բացատրական*

բառարան», Պ. Բեդիրյանի «Յայ երեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան», ՅՍՍՅ ԳԱ «Յայ ոց լեզվի բարբառային բառարան», Յ.Պետրոսյանի, Ս. Գալստյանի, Թ. Ղարաբյուրյանի «Լեզվաբանական բառարան», Գ. Ալեքսանյանի, Խ. Սիլվեստրյանի, Ս. Ալեքսանյանի «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Ա. Ղանալանյանի «Յայ կական առածանի», **անգլ երենում** A New English Dictionary on Historical Principles, Online Etymological Dictionary (www.etymonline.com), Roget's International Thesaurus 3rd Edition, Roget's Thesaurus of English Words and Phrases Online (<http://www.thesaurus.com>), The Random House Dictionary of the English Language, Oxford Advanced Learner's Dictionary (New 7th Edition), Webster's New Dictionary of Synonyms, The Oxford American Dictionary and Thesaurus, Collins Dictionary Online (www.collinsdictionaryonline.com), Hornby's Oxford Advanced Learner's Dictionary (<http://www.oxfordlearnersdictionaries.com>), Cambridge Advanced Learner's Dictionary (3rd Edition), Longman Dictionary of Contemporary English (6th edition), English Proverbs and Proverbial Phrases, The Oxford Dictionary of Proverbs, A Dictionary of American Proverbs, The Penguin English Proverbs, The Multicultural Dictionary of Proverbs, Dictionary of Proverbs, The Holy Bible, Containing the Old and New Testaments (According to the Authorized Version with Explanatory Notes, Practical Observations and Copious Marginal References), Russian – English Dictionary of Proverbs and Sayings, L. Դեմոնյանի «English Proverbs and Sayings», Ս. Սեֆերյանի, L. Յոզիանյանի, Ա. Լազարյանի «English-Armenian Phraseological Dictionary», Ե. Ազարովայի «Английские, немецкие, французские пословицы и поговорки», Ա. Նազարյանի «Անգլ երեն դարձվածքների ուսումնական համառոտ բառարան», Ա. Նազարյանի «Անգլ երեն առածների և ասացվածքների պատկերազարդ բառարան», Ա. Կոլոնի «Большой англо-русский фразеологический словарь», Յ. Ասմանգուլյանի, Ս. Յոզիանյանի «Անգլ երեն-հայ երեն բառարան», ինչպես նաև ներառվել են Արևելահայ երենի ազգային կորպուսի (<http://www.eanc.net>), Բրիտանական ազգային կորպուսի (<http://www.natcorp.ox.ac.uk>) տվյալները, <http://www.multitran.ru>, <https://www.foboko.com>, <http://www.oxfordlearnersdictionaries.com>, <https://www.merriam-webster.com> ինտերնետային աղբյուրները:

«Նախանձ» հասկացողն էլ իմաստային առանձնահատկություններն ուսումնասիրելու և թարգմանական

խնդիրները վեր հանելու նպատակով գեղարվեստական գրականությանը ունից առանձնացվել են «**Նախանձ**» իմաստն արտահայտող օրինակներ, որոնք ընտրվել են 19-րդ դարի անգլիացի գրող Ու. Թեքերեյի «**Ունայնությունն սոնալան**» («**Vanity Fair/ A Novel Without a Hero**»), 20-րդ դարի ամերիկացի գրող Ջ. Լոնդոնի «**Մեծ տան փոքրիկ սիրուհին**» («**The Little Lady of the Big House**») և 20-րդ դարի անգլիացի գրող Դ. Յ. Լորենսի «**Լեդի Չաթլըրլիի սիրեկանը**» («**Lady Chatterley's Lover**») վեպերից, որոնցում, ըստ մեզ, լավագույնս են արտացոլված *Նախանձ* զգացումի գեղարվեստական ընկալումները:

Ատենախոսության մեջ ներկայացվել է *Նախանձ* և *envy* արմատների ստուգաբանությունը, վերլուծվել են «*Նախանձ*» և «*envy*» իմաստն արտահայտող գոյականների, բայերի, ածականների բառիմաստային խմբերը և դարձվածային միավորների իմաստային խմբերը, ինչպես նաև «*Նախանձ/envy*» իմաստային դաշտը մասնավորեցնող բոլոր բառիմաստային ենթախմբերի զուգադրության արդյունքում վեր են հանվել նշված միավորների իմաստների ընդհանուր և տարբերակիչ իմակները հայերենում և անգլերենում:

Ուսումնասիրվել է նաև «*Նախանձ*» իմաստային դաշտի միավորների առկայացումը անգլերեն գեղարվեստական ստեղծագործություններում և ընտրված օրինակները համեմատվել են հայերեն թարգմանությունների հետ, որի արդյունքում վեր է հանվել աղբյուր և թիրախ տեքստերում «*Նախանձ*» և «*envy*» իմաստային դաշտերի միավորների և համատեքստային շերտերի համարժեքության աստիճանը:

ԳԼՈՒԽ 1
«ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏ» ՀԱՍԿԱՑՈՒ ԹՅՈՒՆԸ ԹԱՐԳԱՆԱԿԱՆ
ՀԱՄԱՐԺԵՔՈՒ ԹՅԱՆ ՀԱՐԱՑՈՒ ՅՑՈՒՄ

1.1. ԲԱՌԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ՝ ՈՐՊԵՍ ԼԵԶՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՈՒ ՄՆԵՐԸ

Լեզվի համակարգային բնույթի ընկալումը 20-րդ դարի լեզվաբանության նվաճումն էր: Համակարգային հարաբերությունների ընդլայնված և նպատակային ուսումնասիրությունը կապված է \$- դը Սոսյուրի անվան հետ: Նա նշում էր, որ լեզուն համակարգ է, որի բոլոր բաղադրիչները կազմում են մի ամբողջություն, իսկ մեկ բաղադրիչի իմաստն իրականանում է միայն մյուսների միաժամանակյա առկայության դեպքում: «Լեզվական համակարգի յուրաքանչյուր միավոր այժմ ուսումնասիրվում է ոչ միայն որպես առանձին տարր, այլ և առավել մեծ միավորների հետ հարաբերության մեջ: <...> Լեզվական համակարգը ներառում է ենթահամակարգեր, այսինքն՝ այն հանդես է գալիս որպես ենթահամակարգերի համակարգ» (Сосиор 1977:147): Նմանատիպ ձևակերպում է ներկայացնում նաև 2.Պոպովան՝ «Համակարգը փոխապես մանավորված և փոխադարձ կախվածություն ունեցող բաղադրիչների բարդ կազմություն է, որը, արտաքին պայմանների հետ հարաբերակցելով, հանդես է գալիս որպես մեկ ամբողջություն և կատարում միասնական գործառույթ» (Попова 1987:198): Այսպիսով, լեզվի համակարգը ուսումնասիրելու և հասկանալու համար անհրաժեշտ է առանձնացնել վերջինիս տարրերը, սահմանել այդ տարրերը միմյանց կապող հարաբերությունները, որոնք էլ ապահովում են համակարգի ամբողջական լինելու փաստը: Ինչպես հայտնի է, լեզվի հաղորդակցական գործառույթը ենթադրում է, որ այդ համակարգի

բաղադրիչները պետք է լինեն հաղորդակցական, կրեն ինչ-որ տեղեկատվություն, իսկ այն միավորը, որն ինքնուրույն է և կարող է տեղեկատվություն, իմաստ հաղորդել, **բառ** է:

Վ. Ժիրմոնսկին ներկայացնում է *բառի* կառուցվածքի սպառիչ պատկերը, այն է՝ առկա է բառի կենտրոնը, որը ձևավորում են տվյալ բառի փոփոխակները, որոնց հատկանիշները ներկայացված են համալիր և հստակ: Կենտրոնից հեռու գտնվում է եզրը, որտեղ առկա են անհամապատասխանություններ, հատկանիշների անլիարժեքությունն ու անհամաչափությունը: Եզրային գոտում գտնվում են ածականների համեմատության աստիճանները, բայի դերբայական ձևերը, սեռի ձևերը և այլն: Միջուկային բառաձևերը լավագույնս են ներկայացնում բառիմաստը՝ լիովին համապատասխանեցնելով իմաստային և քերականական ամբողջականության չափանիշները: Բառի եզրային գոտում կարելի է նկատել որոշ շեղումներ այս չափանիշներից, ինչպես նաև վերլուծական ձևեր և մեկ բառի հարացույցում տարարմատ բառաձևերի միավորում (տե՛ս Попова 1987: 239):

Ըստ Չ.Պոպովայի՝ «Բառերից է ստեղծվում լեզվական ամբողջ համակարգը, միաժամանակ առանձին բառերը կարող են ինքնուրույն դիտարկվել որպես իմաստային բաղադրիչների և ինչույթների համակարգեր, իսկ բառերի խմբավորումները կարող են լինել լեզվական տարբեր ենթահամակարգերի, օրինակ՝ շարահյուսական ենթահամակարգի բաղադրիչներ» (Попова 1987:198):

Ինչպես հայտնի է «բառն ունի *արտահայտողական* և *բովանդակողական* պլան (Попова, Стернин 2009:27): «Արտահայտողական պլանում բառի մեջ առանձնանում է *բառույթը* (лексема) (տե՛ս LSF:1993:279), իսկ *բովանդակողական* պլանում՝ *իմաստույթը*» (семантема) (տե՛ս LSF:1993:441) (ЛЭС:1998:464): «*Բառույթը*՝ նույն **բառի նշանակողությամբ** և նույն խոսքի մասին պատկանող բառաձևերի դաս է (հարացույց), այսինքն՝ նույնական իրենց շարահյուսական գործառույթով, խոսքամասային նշանակողությամբ» (Васильев 1990:33):

Տարբեր լեզվաբաններ տարբեր կերպ են սահմանել «բառի նշանակողական» գաղափարը: Ըստ Լ. Վասիլևի՝ «**Բառի նշանակողողական** տվյալ *բառույթի* նշանակողություններից բոլոր

բառաձևերի իրենց քերականական նշանակությունն ից զատ ընդհանուր (անփոփոխակ) նշանակությունն է (եթե բառույթը մենիմաստ է) կամ բառույթի անփոփոխակ նշանակություններից մեկը (եթե այն բազմիմաստ է): Նույն բառույթը (հիարկե և եզվի այլ նշանային միջոցների հետ գուգակցմամբ) կարող է արտահայտել մի քանի նշանակություն (բազմիմաստություն) և հակառակը, նույն բառային նշանակությունը կարող է արտահայտել մի քանի բառույթներով և իրենց գործառույթով համարժեք դարձվածքներով (հոմանիշություն)» (Васильев 1990:36):

Ըստ Ի. Ստերնինի՝ «Բառի նշանակությունը որոշ մտային կառույց է, իմաստների միասնություն, որը կարելի է փոխանցել հնչողության միջոցով» <...> «Բառի նշանակության մեջ առանձնացվում է առարկայական-տրամաբանական կամ *հիմնանշանակային* մասը և ևրացուցիչ, *հարանշանակային* մասը, որն արտացոլում է մարդկային ընկալման սուբյեկտիվ վերաբերմունքը տվյալ հասկացության և նրա անվանման վերաբերյալ» (Стернин 1985:28):

2. Պոպովան և Ի. Ստերնինը մանրամասն դիտարկում են և եզրակացնում համակարգում բառի *նշանակության* տեսակները՝ «մեկ բառույթն արտահայտում է մի քանի նշանակություն, որոնցից յուրաքանչյուրն անվանում են **իմույթ** (տե՛ս Ջահուկյան:1989:12, LSF:1993:445) եզրույթով: Որոշ իմույթներ հիմնանշանակային են, որոնք արտահայտում են արտաքին աշխարհի առարկաները, մյուսները՝ առավել ապես հարանշանակային, որոնք արտահայտում են գնահատականներ, հույզեր և այլն <...> Իմույթների միասնությունը, որն արտահայտում է մեկ բառույթով, կոչվում են *իմաստույթ* եզրույթով: Մեկ իմաստույթի մեջ ներառված իմույթները մեկը մյուսի հետ գտնվում են ստորակարգային փոխհարաբերությունների մեջ: Այսպիսով, իմաստույթն ունի իր կառուցվածքը և եզրակացնում համակարգում առանձին կառույց է (Попова 1987:243-246): Հատկանշական է, որ իմաստույթի կառուցվածքն ու կազմությունը յուրաքանչյուր բառույթում յուրօրինակ է՝ «Տարբեր բառույթներում, առավել ևս տարբեր և եզրույթներում, որպես կանոն, միանման իմաստույթներ չեն և ինու մ» (Попова 1987: 246):

Բառերի միջև հարաբերությունները սահմանվում են ոչ թե ամբողջապես իմաստույթներով, այլ առանձին իմույթներով: Այդ իսկ պատճառով բազմաթիվ բառագետներ իմաստաբանության հիմնական միավոր համարում են բառի բառիմաստային տարբերակը (բառույթ+իմույթ) (Ոսոբա 1987:248):

Իմույթն իր հերթին ունի բաղկացուցիչ տարրեր: Դրա իմաստային հատկանիշների բաժանելիության գաղափարն առաջ է քաշվել Լ. Ելմսլևի կողմից, որը հաստատում է, որ նշանակությունները կարող են բաժանվել ֆիզուրների, որոնք չունեն համապատասխան հարաբերակիցներ արտահայտության պլանում (Ոսոբա 1987:248): Այս գաղափարի հետագա վերամշակումը բերեց **իմակների** (տե՛ս Ջահուկյան: 1989:12, ԼՏԲ:1993:441) մասին ուսմունքի ստեղծմանը, որտեղ նշանակալի ներդրում ունեցան ֆրանսիացի իմաստաբաններ Բ. Պոտյեն, Ա. Գրեյմասը և այլք:

Բաղադրական վերլուծության մեթոդի հիմնական միավորը **իմակն** է: Այս մեթոդը բառի նշանակության վերլուծության հիմնական մեթոդներից մեկն է, որի զարգացմանը նպաստել են եվրոպացի լեզվաբաններ Ֆ. դը Սոսյուրը, Լ. Ելմսլևը, Ն. Տրուբեցկոյը: Սակայն նշված մեթոդի ձևավորման և կայացման առանձնահատուկ դերը հատկացվում է Էթնոլեզվաբանության ամերիկյան դպրոցին (Գուինաֆ, Լաուսսբերի), որին հարող լեզվաբանների կատարած ուսումնասիրությունները հենք հանդիսացան հետագա հետազոտությունների համար: Այս ասպարեզում պատկառելի են նաև Ջ. Գրիմասի, Ի. Առնոլդի, Յու. Նայդայի, Յու. Կացի, Վ. Գակի, Յու. Ապրեսյանի, Օ. Սելևերստովայի, Ի. Ստերնիսի, Յու. Կարաուլովի և այլոց ներդրումները:

Ըստ Գ. Ջահուկյանի՝ «Բաղադրական վերլուծությունը կապված է առաջին հերթին հնչույթաբանական վերլուծության սկզբունքները իմաստաբանության բնագավառը տեղափոխելու հետ: Բնականաբար, արտահայտության պլանում հնչույթի և նրա տարբերակիչ հատկանիշների առանձնացումը բերում է այն գաղափարին, որ բովանդակության պլանում էլ կարելի է տարբերակել իմաստային համապատասխան միավոր և առանձնացնել միավորի տարբերակիչ հատկանիշներ» (Ջահուկյան 1989:11-12):

Ըստ Լ. Վասիլևի՝ «Բաղադրական վերլուծության մեթոդը բառիմաստի լիարժեք պատկերացման գիտական գործընթաց է, որը լեզվի բառիմաստային համակարգում իրականացվում է բառիմաստային հատկանիշների միջոցով, որոնք զանազանում են բառի տվյալ նշանակությունը բոլոր նմանատիպ նշանակություններից: Բաղադրական վերլուծության մեթոդը լեզվի իմաստակիր միավորների բովանդակային կողմի հետազոտության մեթոդ է, որի նպատակը նշանակության բաշխումն է նվազագույն իմաստային միավորների» (Васильев 1990:87):

Տարբեր լեզվաբաններ տարբեր կերպ են ներկայացրել «*իմակ*» հասկացությունը: Այսպես, Մ. Բիրվիշը *իմակները* բնորոշում է որպես «տեսական մեծություններ, որոնք ծառայում են տվյալ լեզվի բառային միավորների միջև իմաստային հարաբերությունների նկարագրմանը» (Бирвиш 1981: 177-198):

Մ. Ստեպանովան *իմակն* ընկալում է որպես «լեզվի միավորի տեղեկատվության նվազագույն բաղկացուցիչ մաս: Իմակը՝ որպես իմաստի տարրական միավոր, որը ենթակա է հետագա մասնատման, հակադրվում է ն՝ ձևույթին, ն՝ բառին՝ որպես լեզվի միավորի: <...> Լեզվի միավորի նշանակությունը կարող է ներառել մեկ կամ մի քանի իմակ, մյուս կողմից՝ միևնույն իմակը կարող է գտնվել տարբեր միավորների նշանակության կազմում» (Степанова 1966: 23-28):

Գ. Յելբիգը *իմակը* բնորոշում է որպես «նշանակության տարրական բաղադրիչ, որն իրացվում է բառույթի և իմույթի ներսում» (Шафиков 1996:47):

Անդրադառնալով *իմակներին*՝ նշենք, որ իմաստաբանները տարբերակում են իմակի հետևյալ հիմնական տեսակները՝ **դասույթներ** (классемы) (տե՛ս LSF:1993:98) (խոսքի մասերին համապատասխանող առավել ընդհանրացված հատկանիշներ), **տարբերակիչ իմակներ** (дифференциальные семы) (տե՛ս LSF:1993:444) (հատկանիշներ, որոնց հիման վրա հակադրվում են ընդհանուր կարգային հատկանիշ ունեցող բաղադրիչի շուրջ համախմբված բառերը, և որոնցով հնարավոր է տարբերակել մեկ իմույթը մյուսից (տե՛ս Попова 1987: 249): **Սեռանիշ ընդհանրական իմակը** (родовая сема) (տե՛ս LSF:1993:444) բնորոշ է տվյալ դասի բոլոր միավորներին և

արտացոլում է այդ միավորների ընդհանուր կարգային հատկանիշները: <...> *Տարբերակիչ իմակը տեսականիշ իմակն* է (видовая сема) (տե՛ս LSF:1993:444), որի օգնությամբ նկարագրվում են իմաստային դաշտի միավորների տարբերությունները: Ընդհանրական և տարբերակիչ իմակները միմյանց նկատմամբ գտնվում են *սենանիշային-տեսանիշային* (гиперогипонимические) հարաբերությունների մեջ (ЛЭС:1998:437):

Այսպիսով, ընդհանրացնելով ներկայացված տեսակետները, կարելի է փաստել, որ լեզվաբաններն ընդհանուր առմամբ միակարծիք են, որ *իմակը* բառույթի բովանդակության նվազագույն միավորն է: Սակայն ոմանք ընդունում են, որ իմակը նշանակության բաղադրիչ է, որին համապատասխանում է իրականության ինչ-որ «մասնիկ», մյուսները իմակը դիտարկում են միայն որպես վերլուծության հետազոտական գործիք:

Իմաստային ընդհանրություն ունեցող բառերի առկայությունը համակարգում ապահովում է նաև ողջ բառապաշարի համակարգային բնույթը: Բառապաշարի՝ որպես համակարգի, լեզվի առանձին տարրերի մասնականության և փոխայմանավորվածության հարցը լեզվաբանության պատմության մեջ առաջին անգամ առաջադրվեց 20-րդ դարի սկզբին: Լեզվի բառապաշարի՝ որպես *համակարգի* հետազոտության մեթոդից, նպատակներից ու խնդիրներից էլ նեղվ՝ կարելի է առանձնացնել ուսումնասիրությունների երեք հիմնական ուղղություն՝

- 1) բառապաշարի ուսումնասիրություն՝ ըստ առարկայական խմբերի,
- 2) միևնույն կամ տարբեր լեզուների բառիմաստային խմբերի պատմական-իմաստաբանական ուսումնասիրություն,
- 3) բառապաշարի ուսումնասիրություն՝ ըստ հասկացական և իմաստային դաշտերի (Уфимцева 1962:18):

1) Բառապաշարի ուսումնասիրություն՝ ըստ առարկայական խմբերի

Ըստ առարկայական (թեմատիկ) խմբերի՝ լեզվի բառապաշարի դասակարգման գաղափարն ակունքներով գնում է դեպի խոր միջնադար և իր արտահայտությունն է գտնում տարբեր տեսակի

հանրագիտարանային բառարանների ստեղծման մեջ (տե՛ս Шухардт 1950):

Թեմատիկ բառարանների կազմության տեսական հիմքերն ու սկզբունքներն առավել լիարժեք շարադրված են Ռ. Յալիգի և Վ. Վարտբուրգի աշխատություններում: Վ. Վարտբուրգն առաջարկում է այբբենական բառարանները փոխարինել թեմատիկներով, որտեղ հիմնական սկզբունքը մասնատման օրենքն է, այն է՝ ամբողջ բառապաշարը բաժանվում է հասկացական ոլորտների: Նրակարծիքով, «բառային ֆոնդին պետք է վերաբերել որպես հասկացությունների համակարգի, տարբեր լեզուներում յուրովի մասնատվող թեմատիկ խմբերի և ոլորտների» (տե՛ս Уфимцева 1962:19):

Թեմատիկ բառարանի հենքում Վ. Վարտբուրգը դնում է բառերի խմբերը՝ ոչ թե ըստ իրենց նշանակությունների կամ գործածության ոլորտի, այլ զուտ ըստ տրամաբանական գաղափարների, որոնք, ի հակադրություն բառերի փոփոխական իմաստների, դիտարկվում են որպես անփոփոխ տվյալներ: Սակայն նա հստակ պատկերացում չի տալիս բառապաշարի համակարգի իրական բնույթի մասին ամբողջ լեզվական կառուցվածքում (տե՛ս Уфимцева 1962:19):

2) *Բառամատային խմբերի պատմական-իմաստաբանական ուսումնասիրություն*

19-րդ դարի երկրորդ կեսին լույս տեսան Ա.Պոտեբնյայի մի շարք աշխատություններ, որոնք նոր մոտեցում էին ներկայացնում, այն է՝ կատարվում էր միևնույն հասկացության շուրջ խմբավորված բառերի պատմական ուսումնասիրություն: Վերլուծելով մի շարք բառերի ազգակցական կապերը՝ լեզվաբանը սահմանում է համեմատվող բառերի միջև օրինաչափությունները և որևէ հասկացության հիման վրա նորի ծագման խիստ հաջորդականությունը: Բառերի իմաստային կապերը և վերջիններիս փոփոխությունները վերլուծելիս նա ուսումնասիրում է տվյալ ժողովրդի պատմության փաստերը (Потебня 1864:137):

Ի հակադրություն արևմտյան իմաստաբանների, որոնք ուսումնասիրում էին բառիմաստի տրամաբանական-հոգեբանական, այլ ոչ թե լեզվական կողմը՝ Մ. Պոկրովսկին առաջ է քաշում նոր

դրույթ, այն է՝ գոյություն ունեն բառերի իմաստային գուգորդային կապեր ու իմաստային գուգահեռ փոփոխություններ (տե՛ս Ջահուկյան 1960-62:563): Լեզվաբանն ուսումնասիրում է ոչ թե առանձին բառերի նշանակությունների պատմությունը, այլ բառերի ամբողջական շարքերն ու համակարգերը: Ըստ նրա՝ «բառի նշանակության պատմությունը մեզ համար ընկալելի կդառնամիայն այն ժամանակ, երբ մենք կսկսենք ուսումնասիրել այդ գլխավոր բառը նույն պատկերացումների շրջանակին պատկանող իր հոմանիշների հետ» (Покровский 1895:12): Այսպիսով, Լեզվաբանը կարևորում էր ամբողջական իմաստային խմբերի ուսումնասիրությունը, վերջիններիս հոմանշային կապերը՝ այդպիսով իմաստաբանությունը համարելով գիտություն ոչ միայն Լեզվական նյութի, այլև բառապաշարի համակարգային բնույթի մասին:

Պատմական-իմաստաբանական հետազոտության ընդհանուր տեսության համար արժեքավոր են նաև Լ. Ծչերբայի կողմից առաջադրված դրույթները, «Յուրաքանչյուր Լեզվի բառերը կազմում են համակարգ և նրանց նշանակությունները փոփոխությունները լիովին ընկալելի են միայն այդ համակարգի ներսում» (Щербак 1940: 89): Լ.Ծչերբան համեմատել է բառային համակարգերը տարբեր Լեզուներում, դրանց կառուցվածքները և մեկ Լեզվի միջոցներով հասկացությունների համակարգի՝ մյուս Լեզվին փոխանցման առանձնահատկությունները: Նագտնում էր, որ հասարակության կառուցվածքի փոփոխություններն ազդում են Լեզվի նշանային կողմի փոփոխությունների վրա (Щербак 1940:89):

Բառապաշարի՝ որպես համակարգի, ուսումնասիրությունը պատմական-իմաստաբանական տեսանկյունից կապվում է նաև ռուսական Կ.Վինոգրադովի աշխատությունների հետ: Լեզվաբանը ենթադրում է, որ բառի նշանակությունը պայմանավորված է ոչ միայն այդ բառի՝ տվյալ հասկացության հետ փոխհարաբերությամբ, այլև նույն չափով կախված է Լեզվական համակարգի առանձնահատկություններից և այն խոսքի մասի օրինաչափություններից, որին պատկանում է այդ բառը: Այն սահմանվում է բառի իմաստային կապերով՝ բառային ֆոնդում առկա

հոմանիշ կամ հականիշ բառերի հետ, բառի հուշարտահայտչական երանգավորման աստիճանով (Виноградов 1953:81-83): Այդ իսկ պատճառով «բառը՝ որպես լեզվի իմաստային միավոր», արտացոլում է իրականության այս կամ այն հատվածը, արտահայտում է նրա հասարակական ընկալումը և տվյալ բառիմաստային համակարգի բաղադրատարրն է (Виноградов 1953: 186):

Ընդունելով ներկայացված տեսակետները և միավորելով դրանք՝ գտնում ենք, որ բառը վերաբերում է իրականության որևէ հատվածին, արտացոլում է ժողովրդի պատմությունը և արտահայտում է իր նշանակությունները ոչ թե ինքնին, այլ միայն նշանակությունների ամբողջ համակարգի միջոցով, որն էլ ձևավորում է լեզվի իմաստային կազմը:

3) Բառապաշարի ուսումնասիրությունը՝ ըստ հասկացական և իմաստային դաշտերի

Կախված հետազոտության առարկայից՝ բառապաշարի ուսումնասիրությունը ըստ հասկացական և իմաստային դաշտերի բաժանում են **երկու** հակադիր խմբերի:

Առաջին խմբի ներկայացուցիչներն են Յո. Տրիրը և Լ. Վայսգերբերը, որոնք կարևորում են լեզվի հասկացական բովանդակության ուսումնասիրությունը: Երկրորդ խումբը ներկայացնում են Գ. Իփսենը, Վ. Պորցիգը, Ա. Յոլլեսը, Վ. Վարտբուրգը և նրանց բազմաթիվ հետևորդներ, որոնք լեզվաբանական հետազոտության հիմք համարում են բառերի խմբերը կամ լեզվի ամբողջ բառաֆոնը:

Առաջին խումբը ներմուծեց **«հասկացական դաշտ»** եզրույթը՝ հասկանալով «մաքուր հասկացությունների դաշտը»: Գիտնականների երկրորդ խումբը, հետազոտելով բառերի և դրանց նշանակությունների կապերը, առաջնորդվում է **«իմաստային դաշտ»** հասկացությամբ, որը բառերի խմբավորումն է՝ ըստ նշանակության (տե՛ս Уфимцева 1962: 28):

Լեզվի բառապաշարն իմաստային դաշտերով ներկայացնելու գաղափարի հեղինակը Յո. Տրիրն է, սակայն **«դաշտ»** եզրույթը ներմուծել է Գ. Իփսենը: Վերջինիս կարծիքով բառերը միավորվում

են, ինչպես «խճանկարում»։ արդյունքում ուրվագծերը համընկնում են, և դրանք բոլորը միասին կազմում են բարձրագույն կարգի իմաստային միասնությունն՝ *իմաստային դաշտ* (Ipsen 1924: 225):

Յո. Տրիբը գտնում է, որ «ամեն միավոր ստանում է իր իմաստը միայն ամբողջից», և «բառն ունի իմաստ միայն այն պատճառով, որ իմաստուն են նաև նրան հարակից բառերը»։ Ըստ նրա՝ «դաշտից դուրս բառն ընդհանրապես չի կարող ունենալ նշանակություններ» (Trier 1931:5): Նա առանձնացնում է երկու տեսակի դաշտեր՝ *հասկացական* և *բառային*՝ պնդելով, որ բառային դաշտի միավորները՝ բառերը, ամբողջովին ծածկում են հասկացական դաշտի միավորներին (Trier 1931:5):

Լ.Վայսգերբերը համակարծիք է Յո. Տրիբի հետև գտնում է, որ բառը նվազագույն միավորն է, որը գոյություն ունի շնորհիվ բառային դաշտի և մեծապես կախված է վերջինից՝ «Առանձին բառի իմաստը հասկանալու համար անհրաժեշտ է պատկերացնել ամբողջական դաշտը և գտնել այդ դաշտի կառուցվածքում այդ բառի տեղը» (Weisigerber 1962:185): Ըստ նրա՝ բառը մեկ անվան և մեկ հասկացության անբաժանելի միասնությունն է, այսինքն՝ նա բացառում է բազմիմաստության գաղափարը (Weisigerber 1927:161-183):

Ինքնատիպ է նաև Ա. Յուլլեսի ուսումնասիրությունը։ Ըստ նրա՝ լեզվում գոյություն ունեն նշանակություններ, որոնք չեն կարող արտահայտված լինել առանձին բառերով։ Նա առաջարկում է դրանք անվանել «հոմանիշ»՝ հասկանալով դաշտի միջուկը, որին ձգտում են դաշտի բոլոր անդամները։ Ի հակադրություն դաշտի մասին տրիբյան ընկալման՝ որպես ժամանակի մեջ անփոփոխ սուբստանցի, Ա. Յուլլեսի հոմանշությունը մշտապես ընդարձակվում է, քանի որ որքան կարևոր է դառնում տրված խումբը կազմող հասկացությունը, այնքան ավելի շատ բառեր են այնտեղ ընդգրկվում լիարժեքորեն արտահայտելու համար տվյալ հոմանշային իմաստը (տե՛ս Шафиров 1999:11):

Պետք է նշել, որ սկզբնական շրջանում քննարկման կենտրոնում էր աշխարհի ճանաչողական և լեզվական կադապարների բաղադրիչների հարաբերակցության, միևնույն տարրի՝ մեկ դաշտի կամ այլ դաշտերի պատկանելության խնդիրը, հետագայում դաշտը

դիտարկվում է արդեն որպես անփոփոխակ հասկացություն, և բանավեճը վերաբերում է արդեն միայն լեզվում դաշտի առանձնացման ձևին, դաշտի կարգավիճակին ու իմաստային դաշտերի դասակարգմանը:

Դաշտի տեսության զարգացման գործում կարևոր ներդրում է արվել Ա. Ռուդսկոգենի կողմից: Ըստ նրա՝ բազմիմաստ բառերը մտնում են տարբեր հասկացական ոլորտներ, ընդ որում, նշանակություններն ու հասկացական դաշտերը կարող են կիրառվել ինչպես նմանատիպ եզրույթներ (Rudskogen 1952:12): Այսինքն՝ Ռուդսկոգենի կարծիքով՝ բազմիմաստության հետևանքով յուրաքանչյուր բառ հաճախ մտնում է մեկից ավելի բառիմաստային հարացույցների մեջ: Սակայն, հակառակվելով Յո. Տրիրին, Ա. Ռուդսկոգենն ընդունում է, որ գոյություն ունեն հատվող խմբեր: Դաշտի տարրերը լեզվաբանը պատկերացնում է տարբեր չափերի օղակների տեսքով, որոնք հատում են միմյանց յուրաքանչյուր ենթադաշտի ներքո տարբեր ձևերով՝ կախված այս կամ այն հատկանիշի բնորոշման աստիճանից, և, նույնիսկ, կարող են մասամբ դուրս գալ մեկ օղակի սահմաններից: Ընդ որում, համեմատվող լեզուներից յուրաքանչյուրն ունի ենթադաշտերի իր առանձին հատուկ կառուցվածքը, որն առաջանում է բառ-օղակների փոխազդեցություններից (տե՛ս Reuning 1941:20):

Հոգելեզվաբանական մոտեցումը, որն առանձնացնում է անփոփոխակ բովանդակություն ունեցող բառային ոլորտները, բնորոշում է Ծ. Բալլիի գուգորդային դաշտը: Նրա ըմբռնմամբ՝ լեզվական համակարգը մարդուն ներկայանում է որպես հարափոփոխ գուգորդությունների մշտական ցանց, որը տարածվում է բոլոր խոսքի մասերի վրա, նաև շարահյուսության, ոճագիտության, բառապաշարի ու բառակազմության, հնչյունների և առոգանության հիմնական ձևերի վրա (Балли 1955:30):

Օ. Դուխաչեկը լեզվական դաշտերը սահմանում է որպես «շարակարգային ամբողջություններ»՝ լեզվական բոլոր տեսակի դաշտերը բաժանելով *ձևաբանականի*, *շարակարգայինի* և *գուգորդայինի*: *Ձևաբանական* դաշտում ածանցյալները խմբավորվում են միջուկային բառի շուրջ, *շարակարգային*

դաշտում՝ կենտրոնական անդամի շուրջ՝ ձևային-իմաստային նմանության հիման վրա, իսկ *զուգորդային* դաշտում՝ սուբյեկտիվ հոգեբանական զուգորդությունների հիման վրա՝ արտահայտման և/կամ բովանդակության պլանում (տե՛ս Ducháček 1967: 32)

Ժամանակակից բառագիտության մեջ լեզվաբանները հաճախ փոխարինում են *իմաստային դաշտ* եզրույթը ավելի նեղ լեզվաբանական եզրույթներով՝ *հոմանիշային շարք*, *բառիմաստային խումբ* այլն: Այս եզրույթներից յուրաքանչյուրն առավել հստակ բնորոշում է դաշտի անդամ դարձած լեզվական միավորի և վերջիններիս միջև գոյություն ունեցող կապերի տեսակները: Այնուամենայնիվ, մի շարք աշխատություններում տվյալ անվանումները կիրառվում են որպես եզրույթաբանական հոմանիշներ:

Յարկենք համարում այս հասկացությունները սահմանազատել և ատենախոսության մեջ *բառիմաստային խումբ* եզրույթը կիրառել ենք որպես նույն խոսքի մասին պատկանող միավորների իմաստային խմբի, իսկ *իմաստային դաշտ* եզրույթը՝ որպես *բառիմաստային խմբեր* ընդգրկած իմաստային խմբի անվանումներ: *Յոմանիշային շարքեր* եզրույթը ընդգրկվել է և՛ *բառիմաստային խմբերում*, և՛ *իմաստային դաշտերում*՝ իմաստով մոտայլ միավորների հետ միասին: Ուստի դրանք առավել հստակ սահմանելու նպատակով ներկայացնենք տարբեր լեզվաբանների դրույթները:

Վ. Բելոշապկովան *իմաստային դաշտը* սահմանում է որպես «ընդհանուր (անփոփոխակ) իմաստով միավորված զանազան բառային միավորների ստորակարգային կառույց» (Беловапкова 1997:265):

Բ. Գորոդեցկին *իմաստային դաշտը* համարում է որպես «իմաստային միավորների միասնություն, որոնք որևէ իմաստային շերտում ունեն Ֆիքսված նմանություն և կապված են իմաստային յուրօրինակ հարաբերություններով»: Ընդ որում, լեզվաբանն առանձնացնում է հատուկ տիպի իմաստային դաշտ՝ յուրաքանչյուր «իմաստային շերտի» համար՝ նշանակային, հիմնանշանակային, հարանշանակային (Городецкий 1969:173):

Լ. Վասիլևն առանձնացնում է *իմաստային դաշտի* երկու տեսակ՝ «*հարացուցային*» և «*շարակարգային*»: Դրանցից առաջինը ներառում

Ե միայն այն իմակաները, որոնք «ուսեն ընդհանուր միջուկ և դասվում են իմաստային նույն շարակարգին»: Ըստ նրա՝ այս դաշտին են վերաբերում բառերի այնպիսի խմբեր, ինչպիսիք են հոմանշային ու հականշային խմբերը, բառիմաստային խմբերը, խոսքի մասերը, բառակազմական շարքերը և այլն: Հարացուցային դաշտերը լեզվաբանը բաժանում է երկու տեսակի՝ շարահյուսորեն միասեռ, որոնք ուսեն նույն շարակարգային իմակաները (օրինակ՝ քնել, նստել, կանգնել և այլն) և շարահյուսորեն տարասեռ, որոնք ուսեն միայն հարացուցային ընդհանրություն (օրինակ՝ նայել, տեսնել, և այլն): Հարացուցային դաշտի միավորները գտնվում են տրամաբանական տարանջատման (дизъюнкция), իսկ շարակարգային դաշտի անդամները՝ տրամաբանական բազմապատկման (конъюнкция) հարաբերության մեջ (Васильев 1971:102):

Ա. Ուֆիմցևան, ներդրելով «*իմաստային դաշտ*» հասկացության սահմանները, ներկայացնում է այն որպես «բառիմաստային խումբ»՝ փոխելով ծավալը (Уфимцева 1962, 1986): Ս.Կանցելսոնը բառիմաստային դաշտը անվանում է «*հասկացական*», Յու. Սորոկինը՝ «*թեմատիկ խումբ*» (Васильев 1971), Դ. Շմելյովը՝ «բառիմաստային հարացույց» (Шмелев 1977):

Ռուս լեզվաբան Ե.Դիբրովան տալիս է *իմաստային դաշտի* հետևյալ սահմանումը՝ «*իմաստային դաշտը* բառերի ստորակարգային խումբ է, բառեր, որոնք միավորված են մեկ **սեռային նշանակությամբ** (родовое значение) (տե՛ս LSF:1993:448) և լեզվում ներկայացնում են որոշակի իմաստային ոլորտ» (Диброва 2001:260-262): Նա նաև ներկայացնում է դաշտի իմաստային կառուցվածքը՝ առանձնացնելով վերջինիս հետևյալ մասերը՝ 1. դաշտի միջուկը ներկայացնում է **սեռանիշ ընդհանրական իմակը**, որի շուրջ հավաքվում է իմաստային դաշտը, 2. դաշտի կենտրոնը կազմում են այն միավորները, որոնք միջուկի հետ ուսեն ընդհանուր իմաստային հատկանիշ, 3. եզրային գոտին ընդգրկում է այն միավորները, որոնք իմաստով ավելի հեռացած են միջուկից և կարող են ուսենալ համատեքստային նշանակություն, կարող են հարաբերության մեջ մտնել մյուս իմաստային դաշտերի հետ՝

այ դպիսով ապահովելով լեզվական համակարգի բառիմաստային անընդհատականությունը (Диброва 2001: 260-262):

Ըստ Ռ. Գայսինայի՝ *իմաստային դաշտն* ունի հետևյալ հիմնական հատկանիշները՝ 1. իմաստային դաշտը ինտուիտիվ կերպով հասկանալի է լեզվակրին և ունի հոգեբանական իրական արժեք, 2. իմաստային դաշտի միավորները կապված են իրար հետ այս կամ այն տիպի իմաստային հարաբերություններով, 3. իմաստային դաշտն անկախ է և կարող է առանձնացվել իբրև լեզվի ինքնուրույն ենթահամակարգ, 4. իմաստային յուրաքանչյուր դաշտ կապված է լեզվի այլ իմաստային դաշտերի հետ, և այ դպիսով դրանք կազմում են լեզվական համակարգը (Гайсина 1981:12):

Իմաստային դաշտի հատկանիշների առավել մանրակրկիտ սահմանման հանդիպում ենք Ի.Չուլմակ-ժուկի դիտարկումներում, այն է՝ 1. իմաստային դաշտը ձևավորվում է բազմաթիվ նշանակություններով, որոնցից գոնե մեկն ընդհանուր է (այս ընդհանուր իմաստային բաղադրիչն արտահայտվում է **սեռանիշ բառույթով** (архилексема, лексема с родовым значением) (տե՛ս LSF 1993:75), այսինքն՝ առավել ընդհանրական իմաստ ունեցող բառույթով, 2. իմաստային դաշտում առանձնացվում են ենթադաշտեր՝ իմաստային միավորումներ, որոնց անդամները կապված են ընդհանուր հատկանիշով, որը սովորաբար արտահայտվում է ենթադաշտի սեռանիշ բառույթով. ենթադաշտի արտաքին կառուցվածքը ներկայացնում է միջուկը և մի քանի շերտերը, որոնցից որոշները կարող են մոտ գտնվել միջուկին (մոտակա եզր), իսկ որոշները՝ դաշտի եզրում լինել (հեռավոր եզր), 3. իմաստային դաշտի ներքին կառուցվածքը ենթադրում է հարաբերությունների համակարգ, որ կապում են իմաստային միավորները, 4. իմաստային դաշտի միավորները փոխադարձաբար ենթադրում են միմյանց և կարող են երբեմն փոխարինել իրար, 5. իմաստային դաշտերն իրարից առանձնացված չեն (լեզվի յուրաքանչյուր բառ մտնում է որոշակի իմաստային դաշտի մեջ, ընդ որում, բազմիմաստության հետևանքով այն կարող է լինել ոչ թե մեկ, այլ շատ դաշտերի կազմում), 6. մի իմաստային դաշտը կարող է ներառվել իրենից ավելի բարձր մակարդակի դաշտում (Чумак-Жуны 1996: 11):

Ի. Ստերնինը, ընդհանրացնելով *իմաստային դաշտի* հասկացությունը նվիրված աշխատությունները, առանձնացնում է հետևյալ հատկանիշները՝ «1. դաշտը համակարգային հարաբերություններով փոխադարձաբար կապված միավորների ամբողջություն է, 2. դաշտը կազմող միավորներն իմաստային ընդհանրություն ունեն 3. դաշտը միավորում է համասեռ և տարասեռ միավորներ, 4. դաշտը կազմվում է ենթադաշտերից, որոնց թիվը չպետք է երկուսից քիչ լինի, 5. դաշտն ունի հորիզոնական և ուղղահայաց դասավորություն, որտեղ ուղղահայացը ենթադաշտերի կառուցվածքն է, հորիզոնականը՝ ենթադաշտերի փոխհարաբերությունը, 6. դաշտի մեջ առանձնացվում են միջուկային ու եզրային բաղադրիչները, միջուկը խմբավորվում է միջուկային բաղադրիչների շուրջ, 7. միջուկային բաղադրիչներն առավել լավ են կատարում դաշտի գործառնությունը. ավելի շատ են գործածվում դաշտի մյուս բաղադրիչների համեմատությամբ և պարտադիր են այդ դաշտի համար, 8. դաշտի ու եզրային միավորների գործառնությունները տարբերակված են. որոշ գործառնություններ իրականացնում է միջուկը, մյուսները՝ եզրը, 9. միջուկի և եզրի միջև սահմանը հստակ է, 10. տվյալ դաշտի բաղադրիչները կարող են պատկանել միջուկին, իսկ մեկ այլ դաշտում լինել եզրային գոտում, 11. տարբեր դաշտերը տրամախաչվում են՝ այդպիսով կազմելով անցումային գոտիներ, որը լեզվի համակարգի դաշտային կազմակերպման օրինաչափությունն է» (Стернин 1985:29-31):

Հատկանշական է, որ իմաստային դաշտում դարձվածային միավորների տեղը տարակարծությունների առիթ է հանդիսացել: Որոշ լեզվաբաններ դարձվածային միավորները չեն ներառում իմաստային դաշտի շրջանակներում: Այս ուղղության կողմնակիցները դեմ են ընդհանուր իմաստային դաշտում բառերի ու դարձվածային միավորների միավորմանը և վերջիններս դիտարկում են որպես ինքնուրույն համակարգեր (Черная 1974, Донской 1977): Նրանք գտնում են, որ դարձվածային միավորների հարանշանակային իմաստը գերակշռում է հիմնանշանակայինին, հետևաբար դարձվածային միավորները և բառերը հարկավոր է դիտարկել որպես տարբեր դաշտերի տարրեր: Երկրորդ ուղղության

կողմնակիցների առավել ընդհանրական մեկնաբանություները կարելի է գտնել Ե.Նոժինի մոտ, որը փաստում է, որ «բառերի և դարձվածային միավորների իմաստային դաշտերը համագոյակցում են. ընդհանուր հասկացությունները վերաբերում են ինչպես բառերի, այնպես էլ դարձվածքների որոշակի շրջանակների, հետևաբար բավականին խելամիտ է բառադարձվածային դաշտեր կազմելը» (Ножин 1966:117):

Հիմք ընդունելով վերոնշյալ լեզվաբանների դրույթներ՝ մենք հակված ենք դարձվածային միավորները դիտարկել իմաստային դաշտի ներքո, մասնավորապես եզրային գոտում, քանի որ եզրային գոտու անդամներին բնորոշ է հարանշանակային բովանդակություն, բարդ կառուցվածք և հաճախականության ցածր մակարդակ՝ ի հակադրություն կենտրոնական ու մոտակա եզրին պատկանող միավորների, իսկ դարձվածային միավորները ներկայանում են բոլոր այս հատկանիշներով:

Իմաստային դաշտում ընդգրկված է *բառիմաստային խումբը*, որի միավորները պատկանում են նույն խոսքի մասին և միավորվում են ընդհանուր իմաստով: Այսպիսի խմբերն անվանում են նաև *իմաստային դաս* կամ *բառիմաստային հարացույց*:

Օ. Ախմանովան բառիմաստային խումբ է համարում «բառերի այնպիսի շարքը, որի միավորներն իրենց հիմնական նշանակությամբ որոշ չափով պատկանում են նույն իմաստային դաշտին» (Ахманова 1966:114): Վ. Գակի կարծիքով, բառիմաստային խումբը «բառերի այն իմաստների միասնությունն է, որոնք ունեն համապատասխան ընդհանուր կարգային իմակ» (Гак 1977:35): Իսկ Ֆ. Ֆիլինը գտնում է, որ «բառիմաստային խմբեր են կազմում բառերի այն միասնությունները, որոնք ունեն զանազան երանգավորումներերով ու տարբերակիչ հատկանիշներով մոտ (հոմանիշներ) նաև հակառակ (հականիշներ) և նման նշանակություններ» (Филин 1982:225):

Ուսումնասիրելով բառիմաստային խմբի վերաբերյալ տարբեր լեզվաբանների սահմանումները՝ համակարծիք ենք Գ. Ստեպանովայի կողմից առաջարկած բնորոշմանը, ըստ որի՝ «բառիմաստային խումբը նույն խոսքի մասին պատկանող իմաստային ընդհանրություն ունեցող բառերի խմբավորումն է» (Степанова 1980: 72):

Յոմանշայի նշարքը նույն գլխավոր անդամի շուրջ միավորված հոմանիշների խումբն է: Գլխավոր անդամն ունի առավել ընդհանուր իմաստ և սովորաբար կարող է փոխարինել մյուս հոմանիշներին որոշակի համատեքստերում, ոճական տեսանկյունից էլ սովորաբար չեզոք է (Попова, Стернин 2007:257):

Յականշայի ն գոլգերը ընդհանուր իմաստային բաղադրիչով հակադրվող միավորներն են:

Բառարարձվածայի ն շերտն ընդգրկում է այն դարձվածային միավորները, որոնք իմաստային ընդհանրություն ունեն տվյալ դաշտի գերիմակի հետ:

Թեմատիկ խումբը մեծ թվով բառերի, կայուն բառակապակցությունների, դարձվածքների, նույն գործունեության ոլորտին վերաբերող տարբեր խոսքի մասերի ամբողջությունն է:

Չուգորդայի ն խումբը այն բառերի ամբողջությունն է, որոնք մարդու գիտակցության մեջ կապված են որևէ բառ-խթանի հետ: Այս խմբի մեջ կարող են մտնել տարբեր խոսքի մասերին պատկանող միավորներ: Չուգորդային խմբերի միավորները չունեն ստորակարգային դասավորվածություն և չեն մտնում մյուս իմաստային խմբավորումների (*թեմատիկ խումբ-բառիմաստայի ն դաշտ-բառիմաստայի ն խումբ-հոմանշայի ն նշարք*) մեջ, այլ բոլոր ուղղություններով թափանցում են լեզվի բառային համակարգ (Попова, Стернин 2007:259-260):

Ի մի բերելով իմաստային դաշտի մեկնաբանման վերոնշյալ մոտեցումները՝ ուրվագծենք վերջինիս կառուցվածքը. իմաստային դաշտն ունի միջուկ, կենտրոն, մոտակա ու հեռավոր եզրեր: Միջուկն ընդգրկում է միջուկային բառույթը, որն արտահայտում է ընդհանուր հասկացությունը, այսինքն՝ իր նշանակության մեջ պարունակում է դաշտը միավորող մյուս անդամների ընդհանրական կարգային իմակը: Կենտրոնական եզրի անդամները հիմնականում պարզ կառուցվածք ունեցող բառեր են, որոնք օժտված են կիրառման բարձր հաճախականությամբ և հարանշանակորեն չեզոք են: Մոտակա եզրի անդամները հնացած կամ ոչ այնքան հաճախ կիրառվող բառեր են և հաճախ ունեն ավելի բարդ կառուցվածք: Յեռավոր եզրի անդամները

հարանշանակային իմաստ պարունակող բառեր են (այստեղ են ընգրկվում նաև դարձվածային միավորները), կամ այնպիսի անդամներ են, որոնց բառային նշանակությունների մեջ ընդհանրական կարգային իմակն ավելի թույլ է արտահայտված համեմատած միջուկային և մոտակա եզրերի անդամների հետ: Իմաստային դաշտի սահմանները հստակ չեն. անդամները կարող են մոտակա եզրից տեղաշարժվել հեռավոր եզր և հակառակը:

Այսպիսով, իմաստային դաշտը լեզվական միավորների փոխկապակցված ամբողջություն է, որոնք միավորվում են սեռանիշ ընդհանրական իմակով: Իմաստային յուրաքանչյուր դաշտ կապված է լեզվի այլ իմաստային դաշտերի հետ և դրանց հետ միասին կազմում է լեզվական համակարգը: Այլ կերպ ասած, լեզուն՝ որպես ամբողջություն, կազմված է բազմաթիվ իմաստային դաշտերից, որոնք լրացնում են իրար ու ամբողջացնում լեզվի բառապաշարը, որոնք էլ իրենց հերթին, ազգի լեզվական մտածողության արտացոլանքն են:

1.2.ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ

Յուրաքանչյուր լեզվի բառային ֆոնդը յուրօրինակ է և արտացոլում է տվյալ լեզվի լեզվակիրների յուրահատուկ լեզվամտածողությունը, հոգեբանությունը, պատմությունը, կենցաղը, աշխարհագրական դիրքը, բարքերն ու սովորույթները, արժեքներն ու վարքագծի նորմերը: Երբեմն դժվարություններ են առաջացնում, երբ փորձում ենք թիրախ լեզվի լեզվական միջոցներով փոխանցել բնագրի բառային միավորների ամբողջական և ճշգրիտ բովանդակությունը, քանի որ թարգմանության ժամանակ անհրաժեշտ է պահպանել նրանց իմաստային, ոճական ու արտահայտչական առանձնահատկությունները:

Ի սկզբանե թարգմանությունն իրականացրել է հաղորդակցական կարևորագույն գործառնությո՝ հնարավոր դարձնելով մարդկանց միջլեզվական շփումները: Ըստ Վ. Կոմիսարովի՝ «Թարգմանությունը՝ որպես մարդկային գործունեության միջոց,

ուևսի հնագույն պատմություն: Գրավոր թարգմանությունների տարածումը մարդկանց առջև մեծ հնարավորություններ բացեց դեպի այլ ազգերի մշակութային ձեռքբերումները, հնարավոր դարձրեց մշակույթների և գրականությունների փոխազդեցությունն ու փոխարստացումը» (Комиссаров 1990:7):

Չնայած թարգմանության՝ որպես մարդկային գործունեության յուրահատուկ տեսակի տևական պատմությանը, թարգմանական գործընթացի օրինաչափությունների մասին գիտությունը ծագեց միայն 20-րդ դարի կեսերին:

Չ. Ստայները թարգմանության պատմությունը բաժանում է *չորս* փուլի: Առաջինն սկսվում է Կիկերոնի և Յորացիոսի ժամանակաշրջանից և ավարտվում է 1792թ.: Այս փուլում թարգմանությունը բնորոշվում է գործնական ուղղությամբ: 1792թ. Թայթլերը հրատարակում է իր «*Թարգմանության հիմնական սկզբունքներ*» աշխատությունը, և թարգմանության տեսությունը մտնում է նոր՝ երկրորդ փուլ: Այս շրջանում ձևավորվում են թարգմանության նոր դրույթներ և սկզբունքներ: Չ. Ստայները երրորդ փուլը կապում է մեքենական թարգմանությունների հետ, իսկ 1960-ականներից սկսվում է թարգմանության պատմության չորրորդ փուլը, որն ամենակարևորն է թարգմանության տեսության զարգացման համար, քանի որ հենց 20-րդ դարում են թարգմանության տեսական հարցերն ու վերլուծությունները ստանում ավելի համակարգված բնույթ (տե՛ս Steiner 1998:248-251):

Քանի որ մեր աշխատանքում նպատակ չենք դրել վերլուծել թարգմանության տեսության զարգացումը և թարգմանության վերաբերյալ տարբեր լեզվաբանների դրույթները, նպատակահարմար ենք գտնում սոսկ համառոտ անդրադառնալ մեզ հուզող թարգմանական համարժեքության խնդրին:

Յա. Ռեցկերը պնդում է, որ «թարգմանությունը պետք է ունենա լեզվաբանական կայուն հիմք: Նման հիմք պետք է ծառայի լեզվական երևույթների համեմատական ուսումնասիրությունը և բնագիր ու թարգմանվող լեզուների համապատասխանությունների հաստատումը» (Рецкер 1950:156): Հիմնվելով երկու լեզուների գուգադրության գուտ լեզվաբանական սկզբունքների վրա՝ նա

օրինակ ափ համապատասխանության ներքին շարքին է դասու մ`

- 1) համարժեք համապատասխանության ներքին, համամասնության փոփոխակները,
- 2) տարբերակային և համատեքստային համապատասխանության ներքին,
- 3) թարգմանական փոխակերպումների բոլոր տեսակները (Рецкер 1950:156):

Ժ. Մուսկուն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում լեզվի իմաստային կառուցվածքին` «թարգմանությանը մի լեզվի բառերի փոխարեն մեկ այլ լեզվի բառերի սովորական դասավորությունն է. այն մշտապես կախված է որոշակի փոխակերպումներից, լեզուների փոխարարությունից»: Լեզվաբանն անհրաժեշտ է համարում կատարել թարգմանության *լեզվական* յուրօրինակության բազմակողմանի ուսումնասիրություն (Мунэх 1978:36):

Ա. Ծվեյցերը գտնում է, որ թարգմանության առարկան «մուտք է գործում թարգմանական գործընթաց լայն հասարակական մշակութային համատեքստով, և անհրաժեշտ է հաշվի առնել դրավրա ազդող արտալեզվական գործոնները (հասարակական, մշակութային և հոգեբանական)» (Швейцер 1988:8):

Օ. Կադեն պնդում է, որ «թարգմանության իմաստային և միկրոլեզվաբանական հետազոտությունը պետք է դառնա առավել լայն մոտեցման մաս», որը հեղինակն անվանում է «մակրոլեզվաբանական»: Վերջինս պետք է հաշվի առնի ոչ միայն լեզվական և ոչ լեզվական գործոնների փոխազդեցությունը թարգմանության գործընթացում, այլև, մասնավորապես, խոսքային գործունեության հասարակական հայեցակերպերը և վերջիններիս ազդեցությունն արդյունքի, այսինքն` թարգմանության` որպես խոսքային ստեղծագործության վրա (տե՛ս Kade 1979:3-11):

Բ. Մինյար - Բելորուսները ևս կարծում է, որ թարգմանական գործընթացը չպետք է սահմանափակվի զուտ լեզվաբանական հայեցակերպով. այն պետք է ուսումնասիրի «թե՛ ելակետային տեքստի ծագման պայմանները, թե՛ թիրախ տեքստի ընկալման պայմանները, թե՛ հաղորդակցվողների հասարակական կարգավիճակը, թե՛ խոսքային իրադրությունը և թե՛ այլ միջնորդական

երևույթներ, որոնք երկու լեզվի կիրառությամբ ներառվում են «հաղորդակցություն» բարդ հասկացության մեջ» (Миньяр-Белоручев 1996:6):

Թարգմանությունը, ըստ Ա. Նազարյանի, երկկողմանի միջլեզվական հաղորդակցության ակտ է, որի ընթացքում գուգադրվում են երկու լեզուներ, դրանց զանազան առանձնահատկությունները՝ քերականական, բառային, ոճական և այլն (տե՛ս Նազարյան 2000:11): Հարկ է նշել, որ թարգմանության գործընթացի վրա գաղափարադեմոստրացիայի թողնում արտալեզվական գործոնները: Թարգմանվող ցանկացած տեքստ, հատկապես հրապարակախոսական կամ գեղարվեստական, ոչ միայն որևէ տեղեկատվություն է հաղորդում, այլև արտահայտում է հեղինակի վերաբերմունքն այդ տեղեկատվության նկատմամբ, իսկ հաճախ նաև արտացոլում է նրա որոշակի գրական, գեղարվեստական բարոյաէթիկական, փիլիսոփայական և այլ հայացքներ, որոնց իմացությունն ու իմաստավորումն անհրաժեշտ է լիարժեք թարգմանության համար (տե՛ս Նազարյան 2000:12):

Պ. Նյումարկը ներկայացնում է հետաքրքիր դրույթներ, որոնք վերաբերում են բնագիր տեքստի մեկնաբանության և թարգմանության լավագույն տարբերակների ընտրության գործընթացին: Նա առաջարկում է տարբերակել թարգմանության երկու տեսակ՝ *հաղորդակցական* և *իմաստային*: *Հաղորդակցական* թարգմանությունը ձգտում է ընթերցողի վրա գործել նույն ազդեցությունը, ինչը ծագում է բնագրի ընթերցողներն են ունենում: *Իմաստային* թարգմանությունը ձգտում է փոխանցել բնագրի համատեքստային իմաստն այնքան ճշգրիտ, որքանով թույլ են տալիս թիրախ լեզվի իմաստային և շարահյուսական կառույցները: Նա հատուկ ընդգծում է իմաստային թարգմանության կարևորությունը, որն ապահովում է բնագրի առավել լիարժեք վերարտադրություն: Ըստ նրա՝ թարգմանիչը սկզբում պետք է ապահովի այդ տեսակի վերարտադրություն և միայն հետո ձգտի թարգմանությունը դարձնել առավել «հաղորդակցական», այսինքն՝ ավելի հասանելի ու ազդեցիկ նրանց համար, ում հասցեագրված է (Newmark 1981:89):

Այս պիսով, թարգմանության տեսության հիմնական խնդիրը «թարգմանական *համարժեքության* և դրան հասնելու պայմանների նկարագրությունն է» (Catford 1965:27): Ըստ Ջ. Քեթֆորդի՝ «*համարժեքությունը* պետք է սահմանվի էմպիրիկ կերպով, թարգմանությունների և վերջիններիս բնագրերի համադրման ճանապարհով» (Catford 1965:27):

Հիմք ենք համարում լեզվաբանի այն դրույթը, որ «թարգմանության ժամանակ բնագրի միավորների նշանակությունը չի փոխանցվում կամ վերարտադրվում մեկ այլ լեզվի միավորների նշանակությամբ, այլ տեղի է ունենում մեկ լեզվի նշանակությունների փոխարինում մեկ այլ լեզվի նշանակություններով» (Catford 1965:20-21):

Յա. Ռեցկերը, համարժեքներ ասելով, հասկանում է «մշտական նույնանշանակ համապատասխանությունները, որոնք, որպես կանոն, կախում չունեն համատեքստից»: Նրա կարծիքով, «համարժեքներ են թարգմանության այն միավորները, որոնք, ունենալով մշտական համապատասխանություններ աղբյուր լեզվում, բոլորից շուտենի հայտ գալիս թարգմանչի գիտակցության մեջ և օգնում նրան՝ հասկանալու համատեքստի և, ընդհանուր առմամբ, ամբողջ ասույթի իմաստը, նույնիսկ եթե վերջինս պարունակում է թարգմանչին անծանոթ բառեր» (Рецкер 1974:10):

Վ. Կոլլերը կարծում է, որ «համարժեքություն» հասկացությունը ձեռք է բերում իրական իմաստ միայն այն դեպքում, երբ ճշգրտվում է տեքստերի միջև համարժեքային հարաբերությունների տեսակը: Տեսաբանն առանձնացնում է համարժեքության հինգ տեսակ.

- 1) *հիմնանշանակային*, որը նախատեսում է տեքստի առարկայական բովանդակության պահպանում,
- 2) *հարանշանակային*, որը նախատեսում է տեքստի հարանշանակության փոխանցում հոմանշային լեզվական միջոցների նպատակային ընտրության ճանապարհով,
- 3) *տեքստային-նորմատիվ*, որը ներկայացնում է տեքստի ժանրային հատկանիշները, լեզվական և խոսքային նորմերը,
- 4) *գործարանակալ*, որն ուղղված է հասցեատիրոջը,

5) *ձևային*, որը կարևորում է բնագրի գեղարվեստական-գեղագիտական, բառախաղային և ձևային այլ հատկանիշները (տե՛ս Швейцер 1988:169)

Ուշագրավ է, որ Վ. Կոմիսարովը թարգմանությունը դիտարկում է միջլեզվական հաղորդակցության շրջանակներում: Նման մոտեցումը, ըստ նրա, թույլ է տալիս լուծելու թարգմանության առարկայի հարցը՝ «Թարգմանությունը լեզվական միջնորդության տեսակ է, որի ժամանակ մեկ այլ լեզվում ստեղծվում է տեքստ, որը նախատեսված է բնագրի լիարժեք փոխարինման համար՝ որպես վերջինիս հաղորդակցական համարժեքի» (Комиссаров 2002:53): Նա ձևակերպել է նաև *համարժեքության մակարդակների* տեսությունը, համաձայն որի՝ թարգմանական գործընթացում բնագրի և թարգմանության համապատասխան մակարդակների միջև սահմանվում են համարժեքության հարաբերություններ: Տեսաբանը բնագրի և թարգմանության բովանդակային պլանում առանձնացրել է համարժեքության հինգ մակարդակ՝

- 1) *հաղորդակցության նպատակ*
- 2) *իրադրության նկարագրությունը*
- 3) *ասույթը*
- 4) *հաղորդում*
- 5) *լեզվական նշաններ (բառեր)* (տե՛ս Комиссаров 1973: 76)

Համարժեքության ստորակարգային կադապարին առավել մոտ է Վ.Գակի և Յու.Լվինի կադապարը, որտեղ առանձնացվում է համարժեքության երեք տեսակ՝

- 1) *ձևային համարժեքություն*
- 2) *իմաստային համարժեքություն*
- 3) *իրադրային համարժեքություն* (Гак, Львин 1970:10):

Ըստ նրանց՝ թարգմանության գործընթացում թարգմանիչը ձգտում է կիրառել *ձևային համարժեքները*՝ վերարտադրելով բառային համապատասխանությունները, շարահյուսական կարգը, սակայն ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական գործոններն ստիպում են կիրառել *իմաստային* և *իրադրային համարժեքություն*:

Մեկ այլ՝ հետաքրքիր մոտեցում է առաջարկել ամերիկացի լեզվաբան Յու. Նայդան՝ տարբերակելով համարժեքության երկու տեսակ՝ *ձևական* և *դինամիկ*: Հայտնի տեսաբանը *դինամիկ համարժեքությունը* սահմանում է որպես թարգմանության այնպիսի տեսակ, որի դեպքում բնագրի բովանդակությունը փոխանցվում է ընդունող լեզու այնպես, որ վերջինիս հակազդեցությունը հիմնականում նման է ելակետային լեզվով հաղորդումն ընդունողի հակազդեցությանը: Իսկ *ձևական համարժեքությունը* պարզապես բնագրի բառային միջոցների և քերականական կառույցի համապատասխանությունն է թարգմանությունում (Nida, Taber 1969:202):

Լ. Բարխուդարովը համարժեքությունը համարում է «իմաստային, ոճական և գործառնությանին-հաղորդակցական տեղեկատվության հարաբերական կայունությունն պահպանումը»: Ըստ նրա՝ «համարժեք է այն թարգմանությունը, որն իրականացվում է այն մակարդակում, որն անհրաժեշտ է և բավարար անփոփոխ բովանդակության փոխանցման համար՝ թարգմանվող լեզվի կանոնների պահպանմամբ» (Бархударов 1975:186): Իսկ Վ. Վինոգրադովն էլ կարծում է, որ «թարգմանության և բնագրի համարժեքությունը հարաբերական է: Բնագրի հետ մերձեցման աստիճանը կախված է բազմաթիվ գործոններից՝ թարգմանչի վարպետությունից, լեզուների և մշակույթի համարման առանձնահատկություններից, թարգմանության ձևից, թարգմանելի տեքստերի բնույթից» (Виноградов 2001:18):

Այսպիսով, ամփոփելով վերոնշյալ տեսակետները, կարող ենք փաստել, որ *համարժեքությունը* բնագրի բառային, քերականական, ոճական և գործառնական միջոցների համապատասխանությունն է թարգմանությունում, ինչպես նաև լեզվամշակութային առանձնահատկությունների փոխանցումը՝ ելակետային լեզվից թիրախ լեզու:

Բառիմաստը, անտարակույս, խեղաթյուրվում է մեկ լեզվից մեկ այլ լեզու թարգմանելիս: Ըստ Վայսգերբերի՝ «իմաստը փոխվում է այն պատճառով, որ յուրաքանչյուր լեզու արտահայտում է իր իսկ լեզվակրի տրամաբանությունը» (Вайсгербер 1993:93): Իմաստային *համարժեքությունը* թարգմանությունում պահպանելու նպատակով

կատարվում են տարբեր *փոխակերպումներ*:

Թարգմանական փոխակերպումները համարվում են թարգմանչի «գործիքները» և օգնում են նրան առավելագույնս փոխանցել ու բնագրի գեղարվեստական պատկերը: Փոխակերպումը, պահպանելով թարգմանության համար նախատեսված էլակետային տեքստի տեղեկատվությունը, կատարում է ձևական (բառային կամ քերականական փոխակերպումներ) կամ իմաստային (իմաստային փոխակերպումներ) փոփոխություն (Миньяр–Белоручев 1996:201):

Յա.Ռեցկերը փոխակերպումները բնորոշում է որպես «բառային մտածողության հնարներ, որոնց օգնությամբ բացահայտվում է համատեքստում կիրառված օտար բառը, և գտնվում է համապատասխան իմաստը, որը չի համընկնում բառարանային նշանակության հետ» (Рецкер 1974:38): Լ. Բարխուդարովը գտնում է, որ «թարգմանական փոխակերպումներն այն բազմաթիվ և որակապես բազմազան վերափոխումներն են, որոնք իրականացվում են թարգմանական համարժեքության ձեռքբերման նպատակով՝ չնայած երկու լեզուների ձևական և իմաստային համակարգերի տարբերություններին» (Бархударов 1975:190): Ա.Շվեյցերը կարծում է, որ «փոխակերպում» եզրույթը փոխաբերական իմաստով է կիրառվում թարգմանաբանության մեջ: Իրականում խոսքը սկզբնական և վերջնական լեզվական արտահայտությունների հարաբերությունների, թարգմանության ժամանակ արտահայտման մեկ ձևը մյուսով փոխարինելու մասին է (Швейцер 1988:118): Վ. Գակնել, *թարգմանական փոխակերպում* ասելով, հասկանում է «երկու լեզուներում առկա գույքի միջոցների կիրառությունից հեռացումը» (Гак 1988:63-75): Վ.Կոմիսարովը կարծում է, որ «թարգմանական փոխակերպումները կազմավորումներ են, որոնց օգնությամբ կարելի է իրականացնել նշված իմաստով բնագրի միավորներից անցում թարգմանության միավորների: Եվ քանի որ թարգմանական փոխակերպումներն իրականացվում են լեզվական միավորներով, որոնք ունեն ինչպես բովանդակության, այնպես էլ արտահայտման պլան, վերջիններս կրում են ձևական իմաստային բնույթ՝ փոխակերպելով ինչպես կադապրը, այնպես էլ էլակետային միավորի նշանակությունը» (Комиссаров 1990:172):

Նշանավոր լեզվաբանների կողմից առաջարկվել են թարգմանական փոխակերպումների բազմաթիվ դասակարգումներ: Դիտարկենք դրանցից մի քանիսը:

Ջ. Քեթֆորդը թարգմանական գործընթացը բաժանում է երկու մասի՝ սահմանափակված թարգմանություն և ամբողջական, այլ կերպասած՝ «միկրոթարգմանություն» և «մակրոթարգմանություն»: Առաջինը բառային միավորների և քերականական ձևերի փոխանցումն է, իսկ երկրորդը վերաբերում է «թարգմանական տեղաշարժերին», այսինքն՝ անցումը մեկ լեզվական մակարդակից, մեկ լեզվական դասից՝ մյուսին: Այս անցումները «լիիրավ հիմքով կարելի է համազոր համարել թարգմանական փոխակերպումներին» (տե՛ս Золря 2000:76-77): Խոսելով թարգմանական տեղաշարժերի մասին՝ նա առանձնացնում է երկու տեսակ՝

1) *Տեղաշարժեր՝ ըստ մակարդակների (Level-shifts)*՝ ելակետային լեզվի միավորը մեկ լեզվական մակարդակում (օրինակ՝ քերականական) ունի իր համարժեքը թարգմանության լեզվի մեկ այլ մակարդակում (օրինակ՝ բառային):

2) *Տեղաշարժեր՝ ըստ դասերի (Category Shifts)*, որը ենթաբաժանվում է չորս խմբի՝

ա) *կառուցվածքային տեղաշարժ*՝ նախադասության կառուցվածքի փոփոխություն,

բ) *դասային տեղաշարժ*՝ մեկ խոսքի մասի փոխարինում մյուսով,

գ) *միավորների տեղաշարժ*, օրինակ՝ բառը կարող է թարգմանվել բառակապակցությամբ,

դ) *տեղաշարժ համակարգի ներսում*՝ ելակետային և թարգմանության լեզուների համակարգերն ունեն մոտավորապես նույն կառուցվածքները, սակայն թարգմանության ժամանակ կիրառվում է արդյունք-լեզվին չհամապատասխանող եզրույթ: Օրինակ՝ ելակետային լեզվի եզակի թվով միավորը թարգմանության լեզվում վերածվում է հոգնակի թվով միավորի (Catford 1965: 73-82):

Ա. Շվեյցերն առաջարկում է փոխակերպումները բաժանել չորս խմբի՝

- 1) *Փոխակերպումները իմաստային արժույթականության (վալյուեռականության) մակարդակում*, որոնք ենթադրում են տարբեր տեսակի փոխարինումներ (օրինակ՝ ձևաբանական միջոցների փոխարինում բառայիններով):
- 2) *Փոխակերպումները գործարանական մակարդակում*, որոնք իրականանում են հետևյալ հնարներում՝ թարգմանական փոխհատուցումներ, այս կամ այն ոճական միջոցների փոխարինում փոխակերպումներով, ոճական բանադարձման փոխարինում համաբանությանամբ, ինչպես նաև մեկնաբանող, պարզաբանող թարգմանություն:
- 3) *Փոխակերպումները վերաբերային մակարդակում*: Դրանք են կոնկրետացումը, ընդհանրացումը, իրականությունների փոխարինումը, ինչպես նաև թարգմանությունը՝ փոխաբերական, փոխանվանական փոխակերպման օգնությամբ:
- 4) *Փոխակերպումները ոճական մակարդակում*, որոնք ընդգրկում են խտացումը և ընդլայնումը: Խտացման հնարն ընդգրկում է գեղջումը՝ բացթողումը, իմաստային միաձուլումը և բառային սեղմումը, իսկ ընդլայնման հնարը ենթադրում է բացատրություն, նկարագրություն, կրկնություն (Швейцер 1988:123):

Ա. Ֆիտերմանը և Տ. Լևիցկայան տարբերակում են թարգմանական փոխակերպումների երեք տեսակ՝

- 1) *Քերականական փոխակերպումներ*. որտեղ դասվել են հետևյալ հնարները՝ տեղափոխում, գեղջում, հավելում, նախադասությունների վերակազմավորում և փոխարինում:
- 2) *Ոճական փոխակերպումներ*, այս դասին կարող են վերաբերել այնպիսի հնարներ, ինչպիսիք են՝ հոմանշային փոխարինումները և նկարագրական թարգմանությունը, փոխհատուցումը և փոխարինման այլ տեսակները:
- 3) *Բառային փոխակերպումներ*, որոնցից են փոխարինումը և հավելումը, նախադասությունների կոնկրետացումը և

ընդհանրացումը, ինչպես նաև զեղչումը (Левицкая, Фитерман 1976:88):

Յա. Ռեցկերն առանձնացնում է միայն երկու տեսակի փոխակերպում՝

- 1) *Քերականական փոխակերպումներ*՝ խոսքի մասերի կամ նախադասության անդամների փոխարինում:
- 2) *Բառային փոխակերպումներ*՝ կոնկրետացում, ընդհանրացում, նշանակությունների տարբերակում, հականշային թարգմանություն, թարգմանության գործընթացում ծագող, ինչպես նաև իմաստային զարգացման և ամբողջական փոխակերպման ժամանակ առաջացած կորուստների փոխհատուցում (Рецкер 1974:38):

Լ. Բարխուդարովը նշում է չորս տեսակի փոխակերպում՝

- 1) *տեղափոխություն*
- 2) *փոխարինում*
- 3) *բացթողում /զեղչում*
- 4) *հավելում* (Бархударов 1975: 189):

Ռ. Մինյար-Բելորուչևը թարգմանական փոխակերպումները բաժանում է երեք տեսակի՝

- 1) *Բառային*՝ կախված այն բանից, թե ելակետային տեքստի ինչպիսի պլան պետք է թարգմանել՝ ձևական (արտաքին), թե իմաստաբանական (բովանդակային): Այստեղ են դասվում ընդհանրացումը և կոնկրետացումը:
- 2) *Քերականական*, որը ներառում է կրավորականացումը, խոսքի մասերի և նախադասության անդամների փոխարինումը, նախադասությունների միավորումը կամ նրանց մասնատումը:
- 3) *Իմաստային*, որի մեջ մտնում են փոխաբերական, հոմանշային փոխարինումները, հասկացությունների տրամաբանական զարգացումը, հականշային թարգմանությունը և փոխհատուցման հնարը (Миньяр-Белоручев 1980:201):

Ժ. Դարբելեն և Ժ. Վինը տարբերակում են թարգմանության տեսնիկական հնարների երկու խումբ՝

- 1) *Ուղիղ թարգմանական հնարներ*՝
բառացի թարգմանություն և, պատճենում, փոխառություն:
- 2) *Անուղղակի՝ միջնորդավորված թարգմանության հնարներ*՝

համարժեքություներ (ասույթներ, աֆորիզմների իմաստների փոխանցում այլ բառերով), տեղափոխում (մեկ խոսքի մասի փոխարինում մյուսով, մոդուլյացիա (առկա տեսանկյան փոփոխություն), հարմարեցում (Вине, Дарбельне 1978:157-167):

Վ. Կոմիսարովն առանձնացնում է փոխակերպման հետևյալ տեսակները՝

- 1) *Բառային*, որի մեջ մտնում են հետևյալ թարգմանական միջոցները՝ տառադարձում, գրադարձություն, պատճենում և բառիմաստային փոխարինումներ (կոնկրետացում, ընդհանրացում, մոդելավորում կամ իմաստային զարգացում),
- 2) *Քերականական*, որը ներառում է հետևյալ հնարները՝ շարահյուսական առնմանում (բառացի թարգմանություն), նախադասության մասնատում, նախադասության միավորում, քերականական փոխարինումներ (բառածների, նախադասության անդամների և նախադասության տեսակների փոփոխություններ),
- 3) *Բարդ (բառաքերականական)*, որն ընդգրկում է բառաքերականական թարգմանություն, հականշային թարգմանություն, բացատրություն կամ նկարագրական թարգմանություն ու փոխհատուցում (Комиссаров 1990:170):

Ինչպես նկատում ենք, թարգմանական փոխակերպումների առաջարկված դասակարգումներում թարգմանական հնարները գրեթե նույնական են՝ տարբերվելով միայն փոխադարձ հարաբերակցությամբ, դասերի բաշխմամբ, երբեմն էլ եզրուղիքանությամբ: Մեր աշխատանքում, որպես թարգմանության ելակետային դրույթ, ընդունում ենք Վ. Կոմիսարովի առաջարկած դասակարգումը, քանի որ այն, ըստ մեզ, ներկայացնում է թարգմանական փոխակերպման հնարների առավել համապարփակ պատկեր:

Այսպիսով, թարգմանական փոխակերպումների մեծամասնությունը հիմնված է ելակետային տեքստի ձևական, բառային, իմաստային և ոճական բաղադրիչների փոփոխության վրա, մինչդեռ հաղորդման հիմնական իմաստը՝ անփոփոխակ, պահպանվում է:

ԳԼՈՒԽ 2
«ՆԱԽԱՆՁ» ԵՎ «ENVY» ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԵՐԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Ելնելով փիլիսոփայական և հոգեբանական բազմաթիվ բառարանների սահմանումներից՝ կարող ենք փաստել, որ նախանձը համամարդկային զգացում է, որը հաճախ առաջանում է, երբ մարդ չունի ինչ-որ բան (հատկանիշ, ունեցվածք, հարստություն, բնավորության գիծ և այլն), որը շատ է ձգտում ունենալ: Արդյունքում նա կամ չարանում է՝ չստանալով իր ակնկալիքը, կամ էլ, ընդհակառակը, լցվում է եռանդով՝ ձեռք բերելու իր համար ցանկալի:

Ըստ հոգեբանական բառարանի՝ *նախանձը* սահմանվում է որպես «չարժառիթի ձեռքբերման դրսևորում, երբ ինչ-որ մեկի հասարակական հաջողությունների ձեռքբերումների իրական կամ մտացածին առավելությունները՝ նյութական արժեքներ,

հաջողություններ, կարգավիճակ, անձնական հատկանիշներ և այլն, ընկալվում են որպես սեփական «ես»-ի արժեքի սպառնալիք և ուղեկցվում աֆեկտիվ ապրումներով ու գործողություններով: «Սափտակ նախանձը» անձի շարժառիթ է, երբ ուրիշի հաջողությունը ստեղծագործական ակտիվության և մրցակցության ձգտման խթան է: Նախանձի ծայրահեղ ձևը «սև նախանձն է»՝ բացասական զգացում, որը դրդում է իրագործել չարամիտ գործողություններ՝ ուրիշի հաջողությունը, բարիքները, ուրախությունը ոչնչացնելու համար (Սալիերի սինդրոմ՝ ուղիղ ագրեսիա)» (Головин 1998:135):

Նախանձը, լինելով անձի ներքին դրսևորում, ուղղակիորեն դիտարկելի չէ: Սակայն նրա ձևավորումը, իմաստավորումը, արտահայտումը, նաև հաղթահարումը տեղի են ունենում տվյալ լեզվամշակութային հասարակության մեջ և տվյալ լեզվում գոյություն ունեցող կարծրատիպերի հիման վրա: Այսպիսով, *նախանձի* զգացումի լեզվականացումը տարբեր լեզուներում ինքնատիպ է: Սույն աշխատանքում փորձ է արվել վերհանելու և վերլուծելու հայ և անգլիական լեզվամշակույթներում *նախանձի* ընկալման առանձնահատկությունները, նմանությունները և տարբերությունները, որոնք առավել վառ պատկերված են երկու լեզուների լեզվական մակարդակում, քանի որ լեզվում են լավագույն կերպով դրսևորվում ցանկացած լեզվակրի ազգային և մշակութային առանձնահատկությունները, ինչպես նաև այս կամ այն հասկացությունների վերաբերյալ բարոյական, հոգեբանական և հասարակական ընկալումները:

2.1 «ՆԱԽԱՆՁ» ԵՎ «ENVY» ԱՐՄԱՏՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԵՎ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Սույն ենթագլուխը ներկայացնում է «*նախանձ*» և «*envy*» իմաստային դաշտերում ընդգրկված բառիմաստային խմբերի (գոյական, բայ, ածական) համեմատական վերլուծությունը հայերենում և անգլերենում: Տարբեր աղբյուրներից դուրս ենք գրել «նախանձ»/«*envy*» իմաստային դաշտերը կազմող հայերեն 182 և անգլերեն 170 լեզվական միավոր: Ընդհանուր առմամբ վերլուծել

ենք *նախանձ/envy* իմաստային դաշտերի մեջ մտնող հայերեն 40 և անգլերեն 51 գոյական, հայերեն 37 և անգլերեն 21 բայ, հայերեն 60 և անգլերեն 42 ածական, հայերեն 45 և անգլերեն 56 դարձվածք և ասացվածք: Փորձել ենք ուրվագծել նշված իմաստային դաշտերի *միջուկը, մոտակա և հեռավոր եզրերը*: Մինչ «նախանձ» և «envy» իմաստային դաշտերին անդրադառնալը հարկ ենք համարում ներկայացնել բառիմաստային խմբերի միջուկային անդամների ծագումնաբանությունը, քանի որ, կարծում ենք, հարկ է ուսումնասիրել հասկացության արմատները, պարզել իմաստային զարգացման միտումները, գտնել իմաստային ընդհանրությունները: Բացի դրանից այն թույլ կտա ավելի հստակ պատկերացնել նշված իմաստային դաշտերը:

Այսպիսով, հայերենում **նախանձ** արմատի ստուգաբանության գիտական մեկնաբանությունը կարելի է գտնել Յ.Աճառյանի «*Հայերեն արմատական բառարան*»-ում (տե՛ս Աճառյան 1926, այսուհետ՝ ՅԱԲ), Գ. Ջահուկյանի «*Հայերեն ստուգաբանական բառարան*»-ում (տե՛ս Ջահուկյան 2010, այսուհետ՝ ՅՍԲ):

Յ. Աճառյանը *նախանձ* բառը ներկայացնում է որպես «*նախանձ, չարանալը*»: Լեզվաբանը վկայում է, որ նախանձող մարդը *նախ* իր *անձն* է վնասում և ապամյուսներին, այսինքն՝ «*նախանձ*» բառը կազմված է «*նախ*» և «*անձն*» բառերից: Նաև չի հերքում, որ *նախանձ* բառը կարող է լինել *նա* մասնիկի և *խանձիլ/ել, խանդալ* բայերի միացությունը, այսինքն՝ «*նախանձ*» բառն առաջացել է *նա* և *խանդ(ձ)* բառերի համադրությամբ (ՅԱԲ 1926:420-421):

Գ. Ջահուկյանի «*Հայերեն ստուգաբանական բառարան*»-ում **նախանձ** արմատը ներկայացվում է որպես «*նախանձ, չարություն*»: Նշվում է նաև, որ *նախանձ* արմատի ծագումն անհայտ է, և միայն անհերքելի է կապը «*խանդ*» բառի հետ (ՅՍԲ 2010:560):

Այսպիսով, նպատակահարմար գտանք քննության ենթարկել **խանդ** բառի ծագումը և գտնել **նախանձ** բառի հետ տրամախաչման բոլոր տարբերակները:

Յ. Աճառյանը *խանդ* բառը բացատրում է որպես «*սրտի ու ժգինք բերմունք սիրով, գուրթով, նախանձով և ուրիշ կրթով*»: Ըստ նրա ներկայացրած ստուգաբանության՝ «*խանդ*» բառը բնիկ հայկական է,

ծագել է հնդեվրոպական նախալեզվի *khnd* կամ *qnd* արմատից, որի հիմնական նշանակությունն է «*վառել, բորբոքել, փայլել*»: Այս նույն արմատի հետզուգորդ է *խանձ* արմատը (նաև գրված է *խանծ*): Ըստ լեզվաբանի՝ հայերենում վերջնաձայն *դ* և *ծ* հնչյունները դրանց նախորդող ռնգականի պատճառով են (ՅԱԲ 1926:328-329):

Գ. Ջահուկյանը և Յ. Մարտիրոսյանը, ինչպես և Յ. Աճառյանը, ներկայացնում են **խանդ** արմատի նույն իմաստները. այն է՝ *խանդ* «*ուժգին կիրք, եռանդ, սրտի բորբոքվածություն, գորով, սեր*» (ՅԱԲ 2010:315-316, Martirosyan 2009:326): Յատկանշական է, որ Գ. Ջահուկյանը *խանդը* համարում է դրական զգացում՝ այն կապելով սիրո, կրքի, նույնիսկ եռանդի հետ: «*խանդ*» արմատի ծագման հարցում Գ.Ջահուկյանը նույնպես այն կարծիքին է, որ այն հնդեվրոպական ծագում ունի, և վերջինս համեմատում է հնդեվրոպական *khand* կամ *khnd-(s)kand, (s)kend* («*լուսավորել, վառվել, այրվել*») արմատից ռնգայինից հետո *տ/դ* անցումով: Այսպիսով, կարելի է փաստել, որ *խանդ* բառի սկզբնական նշանակությունն ինչպես հայերենում, այնպես էլ շատ այլ լեզուներում եղել է «*վառել, բորբոքել, փայլել, լուսավորել, սպիտակ պայծառություն բերել*»:

Խոսելով անգլերենի «*envy*» (*նախանձ*) արմատի ծագման մասին՝ նշենք, որ, համաձայն *Online Etymological Dictionary*, այսուհետ՝ OED) (<http://www.etymonline.com>) անգլերեն ստուգաբանական բառարանի տվյալների, **envy** (*նախանձ*) գոյականն անգլերենը փոխառել է 13-րդ դարի վերջերին՝ 1250-1300թթ., լատիներեն «*invidia*» բառից (*in* «մեջ» նախածանցից և *vidēre* «տեսնել» արմատից), որն ունեցել է *envy, grudge, jealousy, ill will, rivalry* (*նախանձ, խանդ, չարակամություն, մրցակցություն*) նշանակությունները: Միջին անգլերենում այն ստացել է *envie* ձևը, որն իր հերթին եկել է հին ֆրանսերենից: Արդեն 10-րդ դարում այն ձեռք է բերել «*envy, jealousy, rivalry*» (*նախանձ, խանդ, մրցակցություն*) նշանակությունները:

To envy (*նախանձել*) բայը փոխառվել է հնդեվրոպական *weid* արմատից, որը նշանակում է «*իմանալ, տեսնել*»: Այն առաջացել է 14-րդ դարի վերջերին լատիներեն *invidēre* հիմքից, որը նշանակել է «*to envy, to hate*» (*նախանձել, ատել*), ավելի վաղ ունեցել է «*to look askance at*»,

«look at (with malice)», «cast an evil eye upon» (նայել՝ խեթ, չարու թյամբ, քի նախնդրու թյամբ նայել) նշանակությունները: Յին ֆրանսերենում եղել է *envier* ձևը, որը նշանակել է «*envy, be envious of, to look maliciously at, cast an evil eye upon, to grudge*»՝ *նախանձել*, *չարամտորեն/անբարյացակամ նայել*, *չար աչքով նայել*, *չարակամել*, *ոխպահել*: Յին ֆրանսերենի նշված ձևից միջին անգլերեն է փոխանցվել *envien* տարբերակը, որից էլ առաջացել է ներկայիս *envy* ձևը:

Envious (*նախանձոտ*) ածականի սկզբնաղբյուրն է լատիներեն *invidiosus* բառը, որը նշանակել է «*full of envy, envious*»՝ «*նախանձով լցված*», հետագայում՝ 13-րդ դարում, հին ֆրանսերենում *envieus* բառն է եղել, որը նշանակել է «*envious, jealous*»՝ «*նախանձոտ, խանդոտ*», դրանից էլ 14-րդ դարում անգլերենում առաջացել է *envious* ձևը:

Ըստ ստուգաբանական տվյալների՝ **jealousy** (*խանդ*) բառը ծագել է 12-րդ դարում հին ֆրանսերենի *gelousie* կամ *jaalousie* բառերի արմատներից և նշանակել է «*enthusiasm, zeal, love, longing, jealousy*»՝ «*խանդավառու թյուն, սեր, բուռն ցանկություն, խանդ*» (ժամանակակից ֆրանսերենում՝ *jaloux*): Յին ֆրանսերենից այն անցել է միջին անգլերեն *gelusie* կամ *jelosie* ձևով (13-րդ դարում), որից էլ ներկայիս *jealousy* բառն է: Նշենք, որ հին ֆրանսերենն էլ իր հերթին այն փոխառել է լատիներենի *gelos* արմատից:

Jealous (*խանդոտ*) ածականի արմատը ևս փոխառվել է հին ֆրանսերենից՝ *jalos* կամ *gelos* արմատից, որը նշանակում էր «*keen, zealous, avaricious, jealous*»՝ «*ենանդուն, ենանդոտ, ազահ, խանդոտ*» (ժամանակակից ֆրանսերենում՝ *jaloux*): Յին ֆրանսերենից էլ այն 14-րդ դարի վերջում անցել է միջին անգլերեն *jalos* կամ *jealous* ձևով: Յատկանշական է, որ այս բառը սկզբնապես եղել է հունարենում *zēlos* ձևով, նշանակել է *նախանձ*, *խանդոտ*, բայց ավելի հաճախ օգտագործվել է դրական իմաստով՝ *խանդավառու թյուն, ենանդ, մրցակցություն*: Վերջինս փոխանցվել է հետդասական լատիներեն՝ որպես *zēlosus*, որից ավելի ուշ առաջացել է *zēlos* ածականը և նշանակել է «*նախանձախանդի, մրցող*»: Եվ հենց լատիներենից էլ հետագայում անցել է ֆրանսերենին: Տվյալ ստուգաբանական բառարանում հանդիպել ենք նաև *jealous* բառի աստվածաշնչյան

մեկնաբանությանը (վաղ 13-րդ դար)՝ որպես «*tolerating no unfaithfulness*»՝ «անհավատարմությանը ունչ հանդուրժող»:

Այսպիսով, ամփոփելով հայերենի **նախանձ** և անգլերենի **envy** արմատների ստուգաբանական տվյալները՝ կարելի է հավաստել, որ հայերենի **նախանձ** և **խանդ** բառերը առաջացել են հնդեվրոպական արմատներից, իսկ անգլերենի **envy** և **jealousy** բառերը ծագել են Լատիներենից՝ ուղղակի կամ միջնորդավորված ձևով (հին ֆրանսերենի միջոցով): Հարկ է նշել նաև, որ հայերենում **նախանձ** և **խանդ** բառերը ունեցել են *իմաստային* ընդհանրություններ, ավելին, **նախանձ** բառն առաջացել է **նա** և **խանդ(ձ)** բառերի համադրությամբ, ինչը չենք կարող ասել անգլերենի **envy** և **jealousy** բառերի համար. **envy** բառն ունեցել է *նախանձ* բացասական իմաստը, իսկ **jealousy** բառը ունեցել է *խանդավարությանը ունչ* դրական իմաստը: Սակայն ժամանակակից անգլերենի բացատրական և հոմանիշների բառարաններում տվյալ բառերը համարվում են հոմանիշներ և կարող են որոշ համատեքստերում փոխարինել միմյանց:

Հաշվի առնելով հայերենի և անգլերենի ստուգաբանական բառարանների տվյալները՝ ներկայացնենք հայերենի «**նախանձ**» և անգլերենի «**envy**» իմաստային դաշտերի գույքադրական վերլուծությունը:

Նշենք, որ իմաստային դաշտերը ներկայացնելիս հետևել ենք 2.Պոպովայի և Ի.Ստերնինի տեսությանը, այն է՝ կիրառելով *բաղադրական վերլուծության* մեթոդը, առանձնացրել ենք **նախանձ** և **envy** իմաստն արտահայտող գոյականների, բայերի և ածականների բառիմաստային խմբերի *միջուկը*, *կենտրոնական*, *մոտակա* և *հեռավոր* եզրերը:

Յուրաքանչյուր բառիմաստային խումբն ուրվագծելու համար անհրաժեշտ է որոշել այդ խմբի սահմանները և բառային կազմը: Բառիմաստային խմբերի կազմի սահմանազատման համար անհրաժեշտ է տվյալ խմբի անդամների նշանակության մեջ *սեռային իմակի* բացահայտումը՝ հենվելով այդ բառերի բառարանային բացատրությունների վրա: Ապա անհրաժեշտ է վերհանել իմաստային դաշտի *միջուկային բաղադրիչը*, որը պարունակում է այդ դաշտի միավոր դարձած մյուս անդամների *ընդհանրական կարգային իմակը*:

Հայ երեւոյցում **նախանձ** իմաստային դաշտի միջուկային բաղադրիչներն են **նախանձ** գոյականը, **նախանձել** բայը, **նախանձ (նախանձոտ)** ածականը, անգլերեւոյցում **envy** իմաստային դաշտի միջուկային բաղադրիչներն են՝ **envy** գոյականը, **to envy** բայը և **envious** ածականը:

Միավորելով տարբեր բացատրական բառարանների, հայ երեւոյցում Է.Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան, այսուհետ՝ ԱՐԲԲ 1976:1048), Ս.Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան», այսուհետ՝ ՀԲԲ 1944:431), ՀՍՍՀ ԳԱ ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, այսուհետ՝ ԺՀԼԲԲ: 1969:11), անգլերեւոյցում՝ *A New English Dictionary on Historical Principles*, այսուհետ՝ NEDHP), *Roget's Thesaurus of English Words and Phrases Online* (<http://www.thesaurus.com>), այսուհետ՝ RTEWPO, *Oxford Advanced Learner's Dictionary*, այսուհետ՝ OALD 2006:491), *Merriam-Webster Dictionary and Thesaurus* (<https://www.merriam-webster.com>), այսուհետ՝ MWDT ներկայացրած տվյալները՝ կարող ենք փաստել, որ հայերենի **նախանձ** գոյականը ունի երեք նշանակութայուն, **նախանձել** բայը՝ չորս նշանակութայուն, **նախանձ (նախանձոտ)** ածականը՝ չորս նշանակութայուն:

Ընդհանրացնելով բացատրական բառարաններից քաղված տվյալները՝ կարող ենք նշել **նախանձ** գոյականի, **նախանձել** բայի և **նախանձ (նախանձոտ)** ածականի հետևյալ ընդհանրական հատկանիշները՝

- 1) *նախանձի գագուցում ուրիշի առավել ությունները տեսնելիս, նախանձով, չարութայամբ վերաբերել մեկին, ով ունի իրենից շատ առավել ություններ, ուրիշի առավել ություններին նախանձող*
- 2) *խանդ, խանդել, խանդոտ*
- 3) *Բարի նախանձ, բարի նախանձով լցվել, նախանձախնդիր վերաբերմունք ունեցող, նախանձախնդրութայուն նարտահայտող*
- 4) *Չարութայուն, չարութայամբ լցվել՝ ջանալով վնասել, վրեժխնդիր, քիսախնդիր*

Անգլերեւոյցում **envy** գոյականը ունի երեք նշանակութայուն, **to envy** բայը ունի երեք նշանակութայուն, **envious** ածականը՝ երկու

նշանակություն: Ընդհանրացնելով բացատրական բառարաններից քաղված տվյալները՝ կարող ենք նշել *envy* գոյականի, *to envy* բայի և *envious* ածականի հետևյալ ընդհանրական հատկանիշները՝

- 1) *Վրդովմուկ չլինել, ցավի, նախանձի զգացում ուրիշի առավել ությունները տեսնելիս, նախանձով լցվել, նախանձել, նախանձով լցված*
- 2) *Նույն առավել ություններն ունենալ ու ցանկություն, ցանկանալ ունենալ ու նույն առավել ություններից, նախանձելի, նախանձ շարժող, ուրիշի առավել ություններն ունենալ ցանկացող, մրցող*
- 3) *Ոխ վրեժխնդրություն, ոխով լցված*

Համակարգելով հայերենի վերը նշված բացատրական բառարանների տվյալները՝ կարող ենք փաստել, որ հայերենում **նախանձ, նախանձել, նախանձ (նախանձոտ) միջուկային բաղադրիչները** կարող են արտահայտել *չարություն զգացում*, որն առաջանում է այն դեպքում, երբ նախանձողը, համեմատելով իրեն ուրիշի հետ, զգում է, որ այդ ուրիշն իրենից շատ առավել ություններ ունի: Անշուշտ, *նախանձ* ն այս իմաստով կրում է խիստ բացասական իմաստ, քանի որ նախանձողի մեջ առաջացնում է սրտնեղության, տխրության զգացում: Պետք է նշել, որ *նախանձը* կարող է դրդել նաև կատարելու կտրուկ քայլեր՝ խոչընդոտելով դիմացինի հաջողությունները և վնասելով նրան: Մեկ այլ իմաստով ուսումնասիրվող զգացումը կարող է առաջանալ սիրող մարդու մեջ, երբ նանկատում է, որ կարող է կորցնել սիրած անձին, այսինքն՝ իր սիրելին ուրիշին է նախընտրում: Այս դեպքում *նախանձը* նման է *խանդի*, ավելին՝ հոմանիշ է *խանդ* բառին: Այստեղ թեև նախանձը *սիրո* հետևանքով է առաջանում, սակայն բացասական զգացում է: Հարկ է նաև նշել, սակայն, որ *նախանձը* միշտ է, որ ունի բացասական իմաստ. հայերենում գոյություն ունի, այսպես կոչված, «բարի *նախանձ*» արտահայտությունը, որն առաջանում է այն ժամանակ, երբ նախանձողը, տեսնելով ուրիշի առավել ությունները, լցվում է եռանդով՝ մրցելու, նրան նմանվելու ցանկությամբ, որը դրդում է անձին նախաձեռնելու, գործելու և հաղթանակ տանելու:

Ընդհանրացնելով վերոնշյալ տվյալները՝ հայերենի «**նախանձ**»

իմաստային դաշտի կենտրոնում ներկայանում է հետևյալ *սեռային իմակը՝ **ուրիշի առավել ությունները տեսնելիս չարության, նաև բարի նախանձի զգացում:***

Ի մի բերելով անգլերենի վերը նշված բացատրական բառարանների տվյալները՝ կարող ենք փաստել, որ անգլերենում **envy, to envy, envious միջուկային բաղադրիչները** ունեն **ուրիշի առավել ության գիտակցման հետևանքով առաջացած չարակամություն, ազահություն, ոխի զգացում** և միաժամանակ **այդ առավել ությունները ունենալու ցանկություն** իմաստները: Պետք է նշել, որ **նախանձի զգացումը** անգլերենում, ինչպես և հայերենում անձի մեջ առաջացնում է **վրդովմունքի զգացում**, ինչը երբեմն կարող է հանգեցնել **ոխի զգացումի** առաջացմանը:

Ընդհանրացնելով վերոնշյալ տվյալները՝ անգլերենի «**envy**» իմաստային դաշտի կենտրոնում ներկայանում է հետևյալ *սեռային իմակը՝ **ուրիշի առավել ության գիտակցման հետևանքով առաջացած չարության զգացում և միաժամանակ այդ առավել ությունները ունենալու ցանկություն:***

Չարկ է նշել, որ հայերենի «**նախանձ**» և անգլերենի «**envy**» իմաստային դաշտերի *միջուկային բաղադրիչները* բազմիմաստ բառեր են և մտնում են տարբեր հոմանիշային շարքերի մեջ, որոնց անդամները ընդգրկվել են այդ դաշտերում, քանի որ բոլորն էլ որոշ տարբերությամբ պարունակում են *ընդհանրական կարգային իմակները:*

Չիմք ընդունելով վերոնշյալ տվյալները՝ հոմանիշների, բացատրական և ստուգաբանական բառարաններից դուրս ենք գրել երկու լեզուների **նախանձ/envy գոյական, նախանձել/to envy բայ, նախանձ (նախանձոտ)/envious ածական-միջուկային բաղադրիչների** հետ *ընդհանրական կարգային իմակ ունեցող բառերը* և փորձել ուրվագծել վերջիններիս կազմած բառիմաստային խմբերը՝ ըստ *կենտրոնական, մոտակա հեռավոր* եզրերի:

Կենտրոնական եզրի անդամները օժտված են կիրառության բարձր հաճախականությամբ, քանի որ ունեն առավել *ընդհանրական իմաստ*, ոճաբանորեն չեզոք են ու բնորոշվում են կարգային իմաստի միանշանակությամբ:

Այսպիսով, հայերենում **նախանձ** իմաստային դաշտի **կենսոդոնական եզրի** անդամներն են՝ **գոյականներ**՝ *նախանձ, նախանձ ու թյուս, բայեր*՝ *նախանձել, նախանձեցնել, ածականներ*՝ *նախանձ, նախանձոտբառերը*:

Անգլերենում *envy* իմաստային դաշտի **կենսոդոնական եզրի** անդամներն են՝ **գոյականներ**՝ *envy, enviousness, envying, enviously (հնգ.), բայ*՝ *to envy, ածականներ*՝ *envious, envying, envied* բառերը:

Ուսումնասիրվող իմաստային խմբի *մոտակա* եզրի միավորները պարունակում են բառիմաստային խումբը բնութագրող ընդհանրական հատկանիշները. այս եզրում ընդգրկված միավորների միմասը բառակազմորեն բարդ կառուցվածքներ են (հայերենում մեծ թիվ են կազմում **նախանձ** հիմքով կազմված բառերը), այդ իսկ պատճառով ներառվել են հենց այս եզրում, մյուս միավորները թեև իրենց կառուցվածքով պարզ են, սակայն հնացած կամ բարբառային ձևեր են, հետևաբար նույնպես տեղ են գտել նույն եզրում:

Հայերենում **նախանձ** իմաստային դաշտի **մոտակա եզրի** անդամներն են՝ **գոյականներ**՝ *նախանձանք (հնգ.), նախանձ ու մն (հնգ.), խանդանք (հնգ., հվդ.), խանդ ու թյուս (հնգ.), բախլ ու թյուս (հնգ., բրբռ.), մախանք (հնգ.), խեռն ու թյուս (բրբ.), չարանախանձ ու թյուս, չարախանձ ու թյուս, հաչաղանք (յաչաղանք) (հնգ.), աչք ու թյուս (բրբ.), չարակն ու թյուս (հնգ.), նախանձակց ու թյուս (հնգ.), նախանձահ ու զ ու թյուս (1-ին իմաստով), նախանձ կոտ ու թյուս (ժող.), նախանձոտ ու թյուս (ժող.), նախանձ արեկ ու թյուս (ժող.), նախանձակոծ ու թյուս (հզվդ.), նախանձամտ ու թյուս, նախանձոր ու թյուս (հզվդ.), նախանձորդ (հզվդ.), նախանձել ի ու թյուս (1-ին իմաստով), խանդավոր ու թյուս (հնգ.), հաչաղ կոտ ու թյուս (հնգ.), հաչաղ ու թյուս (հնգ.), չար ու թյուս, չարամտ ու թյուս, օծ ու թյուս (փխբ.), խանդ, խանդանք (հնգ., հվդ.), խանդավոր ու թյուս (հնգ., հվդ.), ստորանախանձ ու թյուս (հնգ., հվդ.), երկրանախանձ ու թյուս (հնգ., հվդ.), գետնանախանձ ու թյուս (հնգ., հվդ.) **բայեր**՝ *նախանձեցնել (հնգ.), խանդել, խանդավորել (հնգ.), խվալ (խվել) (հնգ.), խանդավորել (հնգ.), խանդալ (հնգ.), նախանձավորել (հնգ.), խանդավորել (հնգ.), նախանձվել (բրբռ.), նախանձ արեկել, նախանձեց ու ցանել (հնգ.), հաչաղել (հնգ.), մախալ (հնգ.), բախլել**

(հնգ., բրբռ.), խախլ ել (հնգ.), խեթալ (հնգ.), խեթանալ (հնգ.), խեթահարել (հնգ.), չարակնել (հնգ.), ակնահարել (հնգ.), աչքիլ (աչքել) (բրբ.), աչքըռել (բրբ.), ակն(ը)ռել (բրբ.), հաչաղել (յաչաղել) (հնգ.), չարանալ, չարամտել (հնգ.), չկամենալ, ճաքել (փխբ.), պատռ(վ)ել (փխբ.), տրաք(վ)ել (փխբ.), վառ(վ)ել (փխբ.) **ածականներ**` նախանձկոտ (ժող.), նախանձաբեկ, նախանձավոր (2-րդ իմաստով, հնգ.), նախանձախուց, խանդավոր (հնգ.), խեթասիրտ (հնգ.), հողանախանձ (հնգ.), նախանձամիտ, խեռն (բրբ.), խեռնոտ (բրբ.), բախլ ող (հնգ.,բրբ.), դյուրանախանձ (հնգ.), նախանձաղավ, նախանձախառն, նախանձավառ, նախանձափոփոլր, վատանախանձ, նախանձընդդեմ (հնգ.), նախանձարկու (հնգ.), նախանձողական(հզվ.), նախանձախեղդ, նախանձահեղձ, նախանձախանդ, օձնփոր(փոխ), նեխած (փոխ), նախանձորդ (1-ին իմաստով), նախանձագին, նախանձ(ե)ալի (1-ին իմաստով), նախանձալիք (հնգ.), նախանձալից, նախանձալուկ (հզվ.), նախանձակից (1-ին իմաստով), չարաչք, չարակն (հնգ.), չարակնոտ (հնգ.), չարակնյա (հնգ.), դժնակն (հնգ.), աչքիլող (հնգ.), չարաչք (հնգ.), հաչաղկոտ (յաչաղկոտ) (հնգ.), չարանախանձ, չկամ, չարամիտ, քիսախնդիր, վրեժխնդիր, նախանձահույզ (2-րդ իմաստով), խանդոտ, խանդացող (հնգ.), խանդավոր (հնգ.), խվան (բրբ.), գետնանախանձ (հնգ.), ստորանախանձ (հնգ.), երկրանախանձ (հնգ.):

Անգլերենում **envy** իմաստային դաշտի **մոտակագրի** անդամներն են` **զոյականներ**` jealousy, jealousy (հնգ.), jealousy (հզվդ.), jealousy (հնգ.), covetousness, coveting, covetise (հնգ.), covetiveness (հնգ.), desire, desiring (հզվդ., հնգ.), desirousness (հզվդ., հնգ.), longing, lust, craving, cupidity, hankering, malice, maliciousness, malevolency (հնգ.), malevolentness (հզվդ.), malignance, malignancy, malignantness (հնգ.), malignation (հնգ.), maligne (հնգ.), malignment (հզվդ.), malevolence, malignity, spite, spitefulness, jaundice, grudge, grudging, grudging, heartburning, resentment, resentment (հնգ.), resenting, bitterness, indignation, animosity, antipathy, hatred, hate, emulation, emulousness (հզվդ.) emulosity (հնգ.), rivalry, rivalis (հնգ.), rivalry, rivalryship(2-ին իմաստով) **բայեր**` covet, crave, hanker, desire, long, lust (հնգ.), yearn, pine, grudge, begrudge, resent, hate, jaundice (փխբ.), jealousy (հնգ., բրբ.), malign (հնգ.), malignify (հզվդ.), malice (հնգ.), spite, emulate, rival, rivalize (2-ին իմաստով) **ածականներ**` jealous, jealousy(y), malicious, malice (հնգ.), malicious, malignant, maligning, malicious (հնգ.), malicious (հնգ.), malevolent, malevolous (հնգ.), grudging, spiteful, begrudging, covetous(1-ին

իմաստով), covetable, coveted, coveting, aspiring, desirous, desireful (հնգ., հզվդ.), longing, yearning, yearnfull, craved, emulous of (2-րդ իմաստով), emulating, emulative, emulatory (հնգ.), (2-ին իմաստով), rival, rivalrous (2-ին իմաստով), jaundiced (փխբ), invidious, resentful, resenting, resentive, distrustful, suspicious.

Յեռավոր եզրի անդամները հարանշանակային իմաստ պարունակող բառեր են (այստեղ են ընգրկվում նաև դարձվածային միավորները), կամ որոնց բառային նշանակությունների մեջ ընդհանրական կարգային իմակն ավելի թույլ է արտահայտված, քան միջուկային և կենտրոնական եզրերի անդամների մոտ:

Հայերենում **նախանձ** իմաստային դաշտի **հեռավոր եզրի** անդամներն են՝ **գոյականներ**՝ նախանձախնդրոլթյուն, փոյթ (հնգ.), եռանդ, նախանձավորոլթյուն, նախանձասիրոլթյուն, նախանձարկոլթյուն (հնգ.), նախանձելիոլթյուն (2-րդ իմաստով), նախանձահոլզոլթյուն (2-րդ իմաստով), **բայեր**՝ տենչալ (հնգ.), ըղծալ (հնգ.), ցանկալ (հնգ.), փախագել (հնգ.), փոլթալ (հնգ.) **ածականներ**՝ նախանձավոր (1-ին իմաստով (հնգ.), նախանձահոլզ (1-ին իմաստով), նախանձորդ (2-րդ իմաստով), նախանձակից (2-րդ իմաստով), նախանձախնդիր, նախանձասեր (հզվդ.), բարենախանձ, նախանձառու (հզվդ.), նախանձելի (2-րդ իմաստով), փախագելի (հնգ.), ցանկալի (հնգ.), բաղծալի (հնգ.), տենչալի (հնգ.):

Անգլերենում **envy** իմաստային դաշտի **հեռավոր եզրի** անդամներն են՝ **գոյականներ**՝ emulation, emulousness (հզվդ.) emulosity (հնգ.), rivalry, rivalis (հնգ.), rivalry, rivalship, **բայեր**՝ emulate, rival, rivalize **ածականներ**՝ rival, rivalrous, emulous, emulative, emulating, emulatory (1-րդ իմաստով), greedy, grasping, avaricious, rapacious, covetous (2-րդ իմաստով):

1. Հայերենի «նախանձ» և անգլերենի «envy» գոյականների բառիմաստային խմբերը

Հիմք ընդունելով 2. Պոպովայի և Ի. Ստերնինի ներկայացրած տեսական դրոլթները՝ փորձ է արվել խմբավորել հայերենի «նախանձ» և անգլերենի «envy» գոյականների բառիմաստային խմբերի անդամները՝ ըստ տարբերակիչ իմաստային իմակների:

Ուսումնասիրելով հայերենի **նախանձ** գոյականի բառիմաստային խմբի կենտրոնական եզրի անդամների բառային

իմաստները՝ կարող ենք առանձնացնել մեկ ենթախումբ, որտեղ ընդգրկված գոյականներն ու նեն հետևյալ *տարբերակիչ իմաստային իմակը՝ **ուրիշի առվել ությ ու նները տեսնելիս առաջացած նախանձի զգացում:***

Այս ենթախմբում տեղ են գտել **Նախանձ, Նախանձ ու թյ ու ն** գոյականները:

Նախանձը ուրիշի հաջողությունից, բարեկեցությունից, առավել ությ ու նից և այլնից մարդու մեջ ծագող չարության զգացումն է: Օրինակ՝ *Ոչ միայն մեր ծաղկահյուսությունը, այլև աստվածների միջնորդությամբ էլ չես կարող մարդու միջից հանել **Նախանձը**, որը կվերանա միայն այն ժամանակ, երբ աշխարհում մնա միայն մի մարդ* (տե՛ս Արևելահայերենի ազգային կորպուս (<http://www.eanc.net>), այսուհետ՝ Արևակ):

Նախանձը կարող է ունենալ նաև **խանդ** իմաստը: Օրինակ՝ *Իսկ **Նախանձը**, այ դախսի **Նախանձը** բուռն սիրուց է առաջանում* (Արևակ):

Նախանձ ու թյ ու ն գոյականն ունի տվյալ բառիմաստային խմբի միջուկային բաղադրիչ **Նախանձ** գոյականի բոլոր հատկանիշները, հաճախ կիրառվող բառ է և ոճաբանորեն չեզոք. այն կազմված է *Նախանձ* հիմքից և *-ությ ու ն* վերջածանցից: Օրինակ՝ *Բայց դե, **Նախանձ ու թյ ու ն** ես անում, չես թողնում ապրենք...* (Արևակ):

Հիմք ընդունելով վերոնշյալ բացատրական բառարանների սահմանումները և վերլուծելով **Նախանձ** գոյականի բառիմաստային խմբի այս եզրի անդամների բառային իմաստները՝ կարող ենք առանձնացնել **հինգ** ենթախումբ, որոնցում ընդգրկված գոյականներն ու նեն հետևյալ *տարբերակիչ իմաստային իմակները՝*

- 1) **Նախանձը որպես զգացում**
- 2) **Նախանձը որպես հատկանիշ, չար արարք, վարքագիծ**
- 3) **Նախանձը որպես չարության դրսևորում, չար վերաբերմունք, չար մարդու արարք**
- 4) **խանդ**
- 5) **Ստորանախանձ ու թյ ու ն, գետնանախանձ ու թյ ու ն**

1) Նախանձը որպես զգացում

Այս ենթախմբում տեղ են գտել հետևյալ գոյականները՝ **Նախանձանք, Նախանձ ու մն, խանդանք, խանդ ու թյ ու ն, բախ ու թյ ու ն,**

մախանք, իւեռնու թյ ու ն, չարանախանձ ու թյ ու ն, չարախանձ ու թյ ու ն, հաջ աղանք, աջ քռ ու թյ ու ն, չարակն ու թյ ու ն: Քանի որ տվյալ ենթախմբի միավորները հիմնականում հնացած, բարբառային ձևեր են, Արևել ահայ երեսի ազգային կորպուսային բազան չունի բոլոր միավորներով օրինակներ:

Նշված ենթախմբի միավորները նպատակահարմար ենք գտել դասակարգել երկու բառախմբով՝

ա) **Նախանձ**, որի միավորներն են **Նախանձ անք, Նախանձ ու մն, Խանդանք, Խանդ ու թյ ու ն, Բախ ու թյ ու ն, մախանք, իւեռնու թյ ու ն, չարանախանձ ու թյ ու ն, չարախանձ ու թյ ու ն** գոյականները,

բ) **Նախանձ աջ ք, չար աջ ք**, որտեղ դասվում են **հաջ աղանք, աջ քռ ու թյ ու ն, չարակն ու թյ ու ն** գոյականները:

Առաջին բառախմբի բոլոր գոյականները հնացած կամ բանաստեղծական ոճին հատուկ բառեր են:

Նախանձ անք և Նախանձ ու մն բառածևերը *Նախանձի* հնացած ձևերն են (տե՛ս Սուքիասյան, Յայոց Լեզվի հոմանիշների բառարան, այսուհետ՝ ՅԼՅԲ 1967:478): Կորպուսային տվյալներն ու բառարաններն այս բառերով օրինակներ չեն տալիս:

Խանդանք բառը ևս հնացած ձև է, որը հիմնականում օգտագործվել է չափածոյում:

Նույն արմատից է առաջացել **Խանդ ու թյ ու ն** գոյականը, որը հնում նույնպես նշանակել է *Նախանձ* (ՅԼՅԲ 1967:256): Կորպուսային աղբյուրն այս բառով ևս օրինակներ չի տրամադրում: Տվյալ բառն ունի նաև *խանդ* իմաստը, հետևաբար այն տեղ է գտել նաև **Խանդ տարբերակիչ իմակում**:

Բախ ու թյ ու ն գոյականը *Նախանձի* (բախիլ-նախանձոտ, բախել-նախանձել) բարբառային տարբերակն է: Օրինակ՝ *Էլ ո՞վ կտար մտքումը բարկ ու թյ ու ն, չար ու թյ ու ն, Նախանձ, ատել ու թյ ու ն, չկամ ու թյ ու ն, Բախ ու թյ ու ն, բոլորը, բոլորը ջնջվել, փչացել էին* (Արևակ):

Մախանք գոյականը տեղ է գտել *Նախանձ* գոյականի հոմանիշների շարքում (տե՛ս Գայեան, «Բառարան գանձարան հայերեն Լեզուի», այսուհետ՝ ԲԳՂԼ 1938:318): Այս բառը նույնպես հնացած ձև է և

օգտագործվել է բանաստեղծական ոճով՝ արտահայտելու այնպիսի զգացումներ, ինչպիսիք են *Ներքին չարոթյունը, նախանձը, խանդը* (ՅԱԲ, 1926՝ *մախ նախանձ*): Օրինակ՝ *Աշխարհից այսքան հիասթափված՝ այնուամենայնիվ հեղինակը հավատում է մարդկությանը-Մարդ արարածը իր նմանի հանդեպ **մախանք** չունի, պաշտամունք ունի* (Արևակ):

հեռնոթյուն գոյականն իր առաջին իմաստով նշանակում է *նախանձ*, որը նույնպես բարբառային ձև է (տե՛ս Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, այսուհետ՝ ՀԼՀԲԲ 2009:418):

Չարանախանձոթյուն, **չարախանձոթյուն** գոյականն արտահայտում է *չարանախանձ մարդու վարքագիծ*: Տվյալ բառերը բարդածանցավոր են՝ *չար+ա+նախանձ (խանձ)+ոթյուն*, այդ իսկ պատճառով տեղ են գտել ոչ թե *կենտրոնական*, այլ *մոտակա* զրույցում:

Երկրորդ բառախմբում տեղ գտած միավորների հիմքը *աջ (ք)* կամ *ակ(ն)* է:

Հաջ աղանք (յ աջ աղանք) գոյականն իր առաջին իմաստով նշանակում է *չարակնոթյուն*, *աջքով տալը*, սակայն երկրորդ իմաստով հոմանիշ է *նախանձ* և *նախանձոթյուն* գոյականներին: Տվյալ գոյականը նույնպես հնացած է (ՅԱԲ 1926՝ *յ աջ աղ՝ նախանձ*) (ՀԼՀԲ 1967:369):

Աջ քոթյուն գոյականը բարբառային ձև է, որը նշանակում է «*չար աջքի գալը, չար աջք*»:

Չարակնոթյուն գոյականը կազմվել է *չարակն* ածականից (1. *չար աջք* ունեցող, 2. ուրիշ լավը տեսնել չուզող, *նախանձ*), որը ցույց է տալիս *չարակնի հատկոթյուն*, *չուզող մարդու արարք, վերաբերմունք*: Այն իր մեջ կրում է *նախանձի* հատկանիշը: Բառակազմորեն այն բարդածանցավոր գոյական է՝ կազմված *չար+ակն* (աջք) արմատներից և *-ոթյուն* վերջածանցից: Այս բառը համարվում է հնացած: Օրինակ՝ *Նրանք նաև եղբորը եղբոր դեմ էին հանում, ազգականին ազգականի՝ միմյանց նկատմամբ առաջացնելով նախանձ, չարակնոթյուն, գրգռոթյուն և կատարյալ ատելոթյուն* (Արևակ):

2) Նախանձը որպես հատկանիշ, չար արարք, վարքագիծ

Այս ենթախմբի միավորները հիմնականում բարդ բառեր են կամ

հնացած, բարբառային ձևեր՝ կազմված *-ոլթյոլն* (հազվադեպ *-որդ*) վերջածանցով: Դրանք են՝ **Նախանձահողոլթյոլն** (1-ին իմաստով), **Նախանձկոտոլթյոլն**, **Նախանձակցոլթյոլն**, **Նախանձոտոլթյոլն**, **Նախանձաբեկոլթյոլն**, **Նախանձակոծոլթյոլն**, **Նախանձամտոլթյոլն**, **Նախանձորդոլթյոլն**, **Նախանձորդ** (գոյ.), **Նախանձելիոլթյոլն** (1-ին իմաստով), **Խանդավորոլթյոլն**, **հաջադկոտոլթյոլն**, **հաջադոլթյոլն** գոյականները:

Նախանձահողոլթյոլն գոյականը *Նախանձի զգացումից հողզվելը*, *տանջվելն* է: Հարկ է նշել, որ առաջին իմաստով այս գոյականը դասվում է *մոտակա* եզրին, սակայն իր երկրորդ իմաստով այն նշանակում է *Նախանձախնդրոլթյոլն*, բարի *Նախանձ* և կարող է հարել *հեռավոր* եզրին:

Նախանձկոտոլթյոլն, **Նախանձաբեկոլթյոլն** և **Նախանձոտոլթյոլն** գոյականներն ունեն նույն նշանակոլթյոլնը, այն է՝ *Նախանձի, չարոլթյան վարքագիծ*: Բառերի կիրառոլթյոլնը կարելի է հանդիպել ժողովրդական խոսքում:

Նախանձակոծոլթյոլն գոյականն իր իմաստի մեջ պարունակում է *Նախանձի* հատկանիշը, ցույց է տալիս *Նախանձից տակնու վրալի նելը* և հաճախակի կիրառոլթյոլնն չունի (տե՛ս Գաբամաճեան, Նոր բառագիրք Հայերեն Լեզուի, այսուհետ՝ ՆԲՅԼ 1910:1008):

Նախանձամտոլթյոլն գոյականը ցույց է տալիս *Նախանձամիտլի նելը*, *հատկոլթյոլնը* և *Նախանձամիտարարքը*:

Նախանձորդոլթյոլն գոյականը ցույց է տալիս *Նախանձորդի* (Նախանձանձի) հատկոլթյոլնը, արարքը, վերաբերմունքը: Այս բառի կիրառոլթյոլնը սահմանափակ է, ինչպես նաև *Նախանձորդ* գոյականինը:

Նախանձորդ գոյականը նշանակում է *ուրիշին Նախանձող, չարակնող*:

Օրինակ՝ *Նա Նախանձորդներ ոլնի* (ՅԲԲ 1944: 432):

Նախանձելիոլթյոլն գոյականն առաջին իմաստով նշանակում է *Նախանձ շարժելը*, երկրորդ իմաստով՝ *օրինակելիոլթյոլն*, հետևաբար այն տեղ է գտել նաև *հեռավոր* եզրում:

Նախանձակցոլթյոլն գոյականը հնացած ձև է և նշանակում է *ուրիշին Նախանձելով նրա հետ մրցելը*, *նրան գերազանցել*

ցանկանալը:

Խանդավորութիւն գոյականը տվյալ ենթախմբում ընդգրկվել է իր երկրորդ իմաստով, այն է՝ *խանդանքի, խանդութիւն վարքագիծը* (առաջին իմաստը՝ *խանդ*): Տվյալ բառը հատուկ է բանաստեղծական ոճին, նաև համարվում է հնացած ձև:

Չաչ աղութիւն (*հաչ աղանքի արարք*) և **հաչ աղկոտութիւն** գոյականները *նախանձութիւն* հնացած ձևերն են, որոնք բնորոշում են *նախանձի վարքագիծ, արարք, հաչ աղկոտի ինելը*:

3) **Նախանձը որպէս չարութիւն դրսևորում, չար վերաբերմունք, չար մարդու արարք**

Տվյալ ենթախմբին պատկանող միավորներն առանձնանում են այն հատկանիշով, որ նախանձի զգացումը միջնորդված է *չարութիւն, չարամտութիւն* հատկութիւնով: Այս ենթախմբի անդամներն են՝ **չարութիւն, չարամտութիւն, օձութիւն** գոյականները:

Չարութիւն գոյականն իր իմաստներից մեկով ցույց է տալիս *չարակնութիւն* և *նախանձ*: Օրինակ՝ *Դու նրան վատաբանում ես չարութիւնսից, որովհետև նաքեզանից բարձր է* (ՅԲԲ 1969:16):

Չարամտութիւն գոյականը նշանակում է *չարամիտ լինելը, նենգութիւն, չար միտք*: Օրինակ՝ *Այս հարցը նա տվեց չարամտութիւնով, որպէսզի ինձ որոգայ թի մեջ ձգե* (ՅԲԲ 1944:14):

Begrudging (1.խնայող 2.նախանձոտ) ածականն առաջին հիմաստով նշանակում է *խնայող, դժկամորեն* տվող, իսկ երկրորդ հիմաստով՝ *նախանձոտ*: Օրինակ՝ *Seriously, Wide Awakes begrudging attitude towards the Lower Or mean's attempts to boost its morale is as shameful as it is wrong* (BNC).

Emulous, emulating, emulative, emulatory (հնց.) (2-րդ հիմաստով), **rival, rivalrous** (2-րդ հիմաստով) ածականները ընդգրկվել են *մոտակա* եզրում առաջին հիմաստով, իսկ *հեռավոր* եզրերում երկրորդ հիմաստով: Օրինակ՝ *His fame collected round him a host of followers, emulous of his sanctity* (<http://sentence.yourdictionary.com>). *Who is more envious, contentious, emulating a wrath full against them than he?* (NEDHP 1970:135). *All, with emulative zeal demand to fill the number of the elected band* (NEDHP 1970:135). *He was shot by a member of a rival gang* (<http://www.oxfordlearnersdictionaries.com>). *They would tend to independency,*

to **rivalrous** competition (NEDHP 1970:717).

2) **Նույն առաջնությունը ունենալու և ցանկություն և նեցող**

Նշված ենթախմբի միավորներն են **longing** (բուռն կերպով ցանկացող), **desirous** (ցանկալի), **desireful** (հնց., հզվդ.), **aspiring** (ձգտող, տենչացող), **yearning**, **yearnfull** (**հնց.**), (ցանկալի, տենչալի), **craved** (ցանկալի, բարձալի), **covetable**, **coveted**, **coveting**, **covetous** (1. ցանկացող 2. ազահ) ածականները նշանակում են ցանկալի, ցանկություն և նեցող: Հատկանշական է, որ, բացառությամբ **craved** և **covetous** ածականների, մյուս միավորները կարող են նախանձ արտահայտել միայն համատեքստում: Օրինակ՝ *There were concerned looks from burly introns, and longing admiration from boys (BNC). There was a picture in her mind of short desirous legs and sunburnt heels (BNC). Every thing was either vehemently disireful, or extremely terrible (NEDHP 1970:247). Aimed at young families, small business users and aspiring professionals, the car is the first new model to emerge from Rover since the 800 series in 1986 (BNC). Shall I tell her that you did not come running to me, that instead you melted in my arms after looking at me since. I came today with large, yearning eyes? (BNC). They probably think I'm some sex craved monster (BNC). Be aware of the clandestine manoeuvrings of jealous colleagues or covetous rivals Wedmsday (BNC).*

3) **Վրդովված, վիրավորական, վիրավորվող**

Այս ենթախմբում միավորվել են **resentful**, **resenting**, **resentive**, **invidious** ածականները: Հարկ է նշել, որ այս միավորներում նախանձ իմաստը համատեքստային է:

Resentful, **resenting**, **resentive**, (1. զայրացած 2. ոխակալ, հիշաչար) ածականը նշանակում է վրդովված, զայրացած, նեղացած, վիրավորված, հիշաչար, ոխակալ: Օրինակ՝ *He felt their resentful eyes burning the nape of his neck (BNC). He in a resenting manner told Buonfadio, that...he had deserved to be treated as he had been (NEDHP 1970:510). From the keen resentive North...The Guardian came (NEDHP 1970:510).*

Invidious (1. վրդովվեցուցիչ 2. ատելի) ածականը նշանակում է վիրավորական, վրդովվեցուցիչ, նաև ունի ատելի իմաստը, որից էլ ենթադրվում է նախանձելու հատկանիշը: Օրինակ՝ *In previous years he had forbidden staff to bring their own booze; so as to avoid making an invidious*

distinction (BNC). This will avoid **invidious** comparisons between standards and procedures of different family health services authorities and permit interdistrict comparisons of results (BNC).

4) Կասկածամիտ, խանդոտ ենթախմբում ընդգրկել ենք **jealous, jealousy(y)**, (1.խանդոտ 2.ենանդուս 3.նախանձ), **distrustful** (կասկածամիտ, կասկածելի), **suspicious** (կասկածամիտ, կասկածելի) ածականները, որոնք ունեն կասկածամիտ, չվստահող լինելու հատկանիշը, որը գուգակցվում է *նախանձի* և *խանդի* զգացումների հետ: Օրինակ՝ *In the Counterlife Henz, the “distrustful fellow” who distrust his distrustful brother’s “wallowing heroes”, is at one with the creator of those heroes, and with the creator’s creator* (BNC). *Being a suspicious soul I also ran a competing companies fest disk on the system* (BNC). *In a moment of jealous frenzy, she cut the sleeves off all his shirts* (CALD 2008:572). *Then the Priest shall take the jealousy offering out of the woman’s hand* (NEDHP 1970:563).

Envious (նախանձոտ) ածականի բառիմաստային խմբի *հենավոր եզրի* անդամների իմաստները վերլուծելով՝ նպատակահարմար ենք գտել առանձնացնել **երկու** ենթախումբ, ուր ընդգրկված ածականներն ունեն հետևյալ ընդհանուր տարբերակիչ իմաստային իմպլիկացիաները՝

1) **Ազատ**

2) **Մրցող, մրցակցող**

1) **Ազատ**

Այս ենթախմբում ներառել ենք այն ածականները, որոնք արտահայտում են *ազատ, անկուշտ, ժլատ* լինելու հատկանիշ: Դրանք են **greedy** (1. ազատ 2. ժլատ 3. ատակեր), **grasping** (ազատ, ժլատ), **avaricious** (կծծի, ազատ), **rapacious** (1. գիշատիչ 2. անկշտում, ազատ, աչքածակ), **covetous** (ազատ, ընչաքաղց՝ 2-րդ իմաստով) ածականները: Օրինակ՝ *She had wanted to fall in love, she had willed it, and her body had produced the lover, close to her heart, fed by her own blood, watered by own needy greedy wanting* (BNC). *A greedy, grasping, lascivious creature* (BNC). *It was as Gillaray’s avaricious wow arch was more of an agrant than the voluptuary suffering from the horrors of dissipation* (BNC). *His evidence indicates sites of low status disappearing both before and after the Black Death, with relatively few being eliminated by the well-recorded activities of rapacious landlords*

(BNC).

2) Մրցող, մրցակցող ենթախմբում տեղի են ենք համարել առանձնացնել **emulous, emulating, emulative, emulatory** և **rival, rivalrous** (1.մրցող 2. նախանձից մրցող, փափագող) ածականները: Այս բառերն ընգրկվել են *հենավոր եզրում* մառաջին իմաստով:

Emulous` Օրինակ` *He is not envious but **emulous** of your attainments* (<https://www.foboko.com>).

Ընդհանրացնելով *նախանձ* իմաստն արտահայտող *ածականների* բառիմաստային խմբի վերլուծությունը հայերենում և անգլերենում` նշենք, քանակային գերակշռությունն առկա է հայերենում: Նշենք, որ թե՛ հայերենում (**նախանձավոր, նախանձահույզ, նախանձորդ, նախանձակից, նախանձելի**) և թե՛ անգլերենում (**emulous, emulating, emulative, emulatory, rival, rivalrous**) կան ածականներ, որոնք իրենց տարբեր իմաստներով անդամակցել են թե՛ *մոտակա* և թե՛ *հենավոր* եզրերին: Հարկ է նշել, որ, *նախանձ* իմաստն արտահայտող ածականների բառիմաստային խմբերը հայերենում և անգլերենում ներկայացնում են թե՛ իմաստային որոշ ընդհանրություններ և թե՛ տարբերություններ: *Կենտրոնական* եզրի միավորներն ունեն նույն տարբերակիչ իմակները` **ուրիշի առաջել ությունները տեսնելիս նախանձի զգացումով լցվող**: Երկու լեզուներում առկա են *մոտակա* եզրի անդամների գրեթե համընկնող տարբերակիչ իմակներ` բացառությամբ հայերենի **ստրանախանձ, գետնանախանձ** տարբերակիչ իմակի, որն առկա է անգլերենում: Սակայն *հենավոր* եզրում հայերենում առանձնացրել ենք **բարի նախանձ ու նեցող** իմաստային բաղադրիչներ պարունակող միավորների խումբը, որը չենք հանդիպել անգլերենում: Իսկ անգլերենում առկա են **ազահ** և **մրցակցող** տարբերակիչ իմակներ պարունակող միավորների ենթախմբերը, որոնք չկան հայերենում:

2.2 «ՆԱԽԱՆՁ» ԵՎ «ENVY» ԻՄԱՍՏՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱԿՈՐՆԵՐԻ ԶՈՒԳՈՐԴԱՅԻՆ ԴԱԾՏԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Իմաստային տիպաբանության հիմքում դրված է անձի և նրան

շրջապատող աշխարհի փոփոխարարությունների, դրանց տարբեր դրսևորումների նկարագրությունը: Այդ խնդրի լուծման հիմքում ընկած է *իմաստային դաշտի* գաղափարը: Իմաստային դաշտ ասելով՝ կարելի է հասկանալ այն դարձվածային միավորների ամբողջությունը, որոնց մեջ առկա է իմաստային կապևորոնք, միշտաբար տարբերակիչ հատկանիշների կողքին, ունեն իմաստային մեկ ընդհանուր հատկանիշ, որը տալիս է դարձվածային միավորների իմաստային կառուցվածքի ամբողջական բնութագիրը (տե՛ս Եղիազարյան 2007:13): Իմաստային դաշտերի տեսական ըմբռնումները (տե՛ս Ножин, Попова, Стернин) ցույց են տալիս, որ դարձվածային միավորներն անհրաժեշտ է ընդգրկել իմաստային դաշտի *եզրային* գոտում, քանի որ վերջիններս ոճաբանորեն նշութավորված են և հաճախադեպ են:

«Նախանձ» իմաստն առկայացնող **հայերեն** դարձվածքները և ասացվածքները³ դուրս են գրվել հիմնականում Ա.Սուքիասյանի, Ս.Գալստյանի «*Յայոց լեզվի դարձվածաբանական բառարան*»-ից, նաև միջլեզվական համարժեքները վերհանելու նպատակով օգտվել ենք Լ.Դեմուրյանի «*Անգլերեն առածներ և ասացվածքներ*», Ս.Սեֆերյանի, Լ.Յովհաննիսյանի և Ա.Լազարյանի «*English-Armenian Phraseological Dictionary*», Ա.Ղանալանյանի «*Յայկական առածանի*»-ից, իսկ **անգլերեն** միավորները՝ *Longman Dictionary of Contemporary English, Comprehensive English-Russian Phraseological Dictionary, The Oxford Dictionary of Proverbs, A Dictionary of American Proverbs, The Penguin English Proverbs, The Multicultural Dictionary of Proverbs, Dictionary of Proverbs, Ancient and Modern Foreign and British, The Old and New Testaments, Russian-English Dictionary of Proverbs and Sayings, <http://www.multitran.ru>, Ա.Նազարյանի «Անգլերեն դարձվածքների ուսումնական համառոտ բառարան*»-ից, Ե.Ազարովայի «*Пословицы и поговорки; английские, немецкие, французские с русским переводом*» բառարանից, Ա.Կուկինի «*Англо-русский фразеологический словарь*»- բառարանից:

Ուսումնասիրության համար ընտրված հայերեն 45 և անգլերեն 56 դարձվածքները և ասացվածքները դասակարգել ենք ըստ գուգորդային դաշտերի՝ ելնելով **Նախանձի** զգացումի հատկանիշներից, այն է՝ **Նախանձ-չարականություն, Նախանձ-**

³ Դարձվածքները և ասացվածքները ընդգրկել ենք «դարձվածային միավոր» եզրույթի ներքո (տ՛ես Եղիազարյան 2007:11)

վրեժխնդրություն, նախանձ-ցալ, նախանձ-ցանկություն, նախանձ-շողոքորթություն:

1. Նախանձ - չարակամություն:

Հայ երեւնում այս խմբում ընդգրկվել են այն միավորները, որոնք արտահայտում են *չարակամությունից, չարությունից, չար մտադրություններից* առաջացած *նախանձի* իմաստը: Այստեղ ընդգրկված բոլոր միավորներում առկա է **աչք** բաղադրիչը: Դա կարելի է բացատրել այն փաստով, որ հայ լեզվամտածողության մեջ *նախանձն* առաջանում է, երբ մարդն իր աչքով է տեսնում ուրիշի հաջողությունը, որից էլ առաջացել են «**աչք**» կազմական բաղադրիչով բացասական հարանշանակային դարձվածքները՝ **աչքը չվերցնել**՝ *մեկին չհանդուրժել, նախանձել, մեկի հաջողությունը չտանել, աչքը վերցնել* (հարցականով)՝ *նույնն է՝ աչքը չվերցնել, աստված չար աչքից պահի* (ըստ սնոտիապաշտության)՝ *աստված գերծ պահի այն փորձանքից, որ կարող է գալ «չար աչքից» (նախանձից, խարդախությունից), չար աչք ունենալ (իեթ աչք ունենալ)*՝ *նախանձոտ հայացք, նայվածք ունենալ, որ դժբախտությունն, վնաս է պատճառում, չար աչքով նայել/մտիկ տալ՝ անբարյացակամ վերաբերմունք ցույց տալ՝ վատը ցանկանալ, չար աչքի գալ/դիպել՝ մեկի նախանձոտաչքից անհաջողությունն ունենալ:*

Այս խմբում կարող ենք նշել նաև հետևյալ ասացվածքները, որոնցից պարզ է դառնում, որ անձին ամենաշատը նախանձելու առիթ է տալիս հաջողակ մարդը՝ **Բախտալոր մարդը շատ նախանձողներ կուրենա Անպափվ մարդուն նախանձող չկա**

Ինչպես հայ երեւնում, այնպես էլ անգլերեւնում *նախանձը* չար մարդու արարք է, չարագործությունն և անգլիական ժողովրդական խոսքը դրավկայությունն է: Այս գուգորդային դաշտը ձևավորող խմբում ընդգրկվել են մի շարք դարձվածային միավորներ: Այստեղ դարձվածքներն արտացոլում են անգլերենի լեզվակրի՝ *չար աչքի* մասին սնահավատ պատկերացումները, ինչն առկա է նաև հայ լեզվամտածողության մեջ: Բերենք օրինակներ՝ **to beware of an evil eye** – *հեռո՛ւ մնա՛ գգու շացի՛ր չար աչքից, to cast an evil spell on smb* – *աչքով տալ մեկին*: Հետաքրքրական է **to be green with envy** դարձվածքը, որը

նշանակում է *խանդեղ*, նաև *նախանձեղ* (տե՛ս Նազարյան 2000:72) (բառացի՝ *նախանձից, չարակամության նից կանաչ ել*): Այս տեղ առկա է անգլիական լեզվամտածողության արտացոլանքը, ըստ որի՝ *նախանձը* կանաչ գույնի հետ է գուգորդվում, և ուրիշի հանդեպ նախանձով լցված մարդը կանաչում է: **The green-eyed monster** արտահայտությունն օգտագործելով «Օթելլո» ողբերգության մեջ՝ Վ. Շեքսպիրը նախանձը նմանեցրել է կանաչ աչքերով հրեշի հետ (O! Beware, my lord, of jealousy; It is the green-eyed monster which doth mock the meat it feeds on. (<http://nfs.sparknotes.com/othello>): Կանաչ գույնի՝ որպես նախանձի խորհրդանիշի մեկ այլ օրինակ է **to look through green glasses** դարձվածքը, որը նշանակում է *նախանձեղ* (բառացի՝ *նայել կանաչ ակնոցներով*):

Ասացվածքների օրինակները ցույց են տալիս, որ չարակամ *նախանձը* ամենավատ թշամին է՝ ուժեղ և անմահ. **An evil eye can crack a stone** - *Չար աչքը կարող է քար տրաքացնել (կոտրել), Envy never dies.* - (բառացի. *նախանձը երբեք չի մահանում*), **Envy feeds on the living; it ceases when they are dead** - (բառացի. *նախանձը սնվում է կենդանի մարդկանցով և մեռնում է նրանց հետ*), **Envy is the basest of all enemies.**- (բառացի՝ *նախանձը բոլոր թշամիներից ամենավատն է*): Սակայն այն երբեք չի առաջանում ազնվականի հոգում. **Envy never dwells in noble soul.** - (բառացի՝ *Ազնվականը նախանձ չի լինում*): Անգլիացու պատկերացմամբ՝ վեհանձն ազնվականը բարձր է ստոր և անպատիվ արարքներից, ավելին, անգլերենի լեզվակիրը համեմատում է *նախանձողին* նշան հետ, որը հաչում է հաջողակ մարդկանց վրա. **The dog of envy barks at celebrity** – (բառացի՝ *նախանձ շունը հաչում է հայտնիների վրա*), **Envy is what inclines us to speak the virtuous rather than of the wicked.**- (բառացի՝ *նախանձը ստիպում է խոսել պարկեշտներից, ոչ թե չար մարդկանցից*):

2. **Նախանձ - ցավ:**

Հայերենում այս գուգորդային դաշտը ձևավորող միավորներն առանձնանում են այն հատկանիշով, որ *նախանձը ցավ է* պատճառում հենց իրեն՝ նախանձողին: Այս խմբում ընդգրկված որոշ դարձվածային միավորներում **աչք** բաղադրիչից բացի առկա են **վոր** և

սիրտ բաղադրիչները: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ հայերենի լեզվակրի համար մարմնի հենց այս մասերն են «վնասվում» նախանձից: **աչքը ծակել՝** նախանձ առաջացնել, չհանդուրժել, չտանել, տհաճություն պատճառել, **աչքը (աչքերը) հանել՝** մեկի նախանձը շարժել, **աչքը տրաքվել՝** նախանձել, չարակամել, **աչքը ծակել՝** նախանձել, **սիրտը տրաքել՝** նախանձել ուրիշին, սիրտը պայթել լավը տեսնելով, սիրտը տրաքացնել՝ նախանձ առաջացնել, **փորը պատվել՝** սաստիկ նախանձել, **ինքն իրեն (իրան) ուտել կամ ինքզինքը ուտել՝** զայրույթից (նախանձից, խանդից) բորբոքվել, **իր միսը կրծոսել՝** ինքն իր մեջ բարկանալ (կարող է նախանձից, խանդից), **դափնիները հանգիստչ են տալ իս** (գրք)՝ մի բանի կամ ինչ-որ մեկի հաջողությանը նախանձել (առաջացել է Աթենքի հայտնի քաղաքական գործիչ Թեմիստոկլեսի հետևյալ արտահայտությունից՝ «Միլթիադես՝ ս, դափնիները թույլ չեն տալ իս ինձ քնելու» (ՅԼԴԲ 1975:185):

Այս խմբում կարող ենք նշել նաև ասացվածքներ, որոնք արտահայտում են *ցավի* իմաստը: Չարկ է նշել, որ տվյալ միավորներում *ցավը* և *տառապանքը* վնաս է պատճառում թե՛ նախանձի առարկա դարձած անձին և թե՛ նախանձողին՝ **Բոլոր ցավերին բժշկություն կաբայց նախանձին՝ ոչ: Ասեղ իւթողը մախթ կստանա Ինչ փրթես քո ամանը, կգաքո գդալը: Չար ու զողին աստված չար կտա Չարությունը չարություն կբերի: Տախալե դուռ ծեծողի երկաթե դուռն են ծեծում: Ինչ որ անես, քեզ կանես: Փչածդ գդալ իդ սիսի գա**

Ինչպես ցույց են տալիս տվյալ խմբում նշված ասացվածքները, հայկական լեզվամտածողության մեջ **նախանձը** անպատիժ է, այն բովանդակի կանոնով ետե գալիս և ցավ պատճառում չարագործին:

Ինչպես հայերենում, այնպես էլ անգլերենում *նախանձը ցավ է* պատճառում հենց իրեն՝ նախանձողին: Այն կարող է *այրել*, *թուևավորել*, *հյուծել*, *կուրացնել* նախանձողին. **to burst with envy** - պայթել նախանձից, **to say out of sour grapes** - նախանձից «թթվել», **to eat one's heart out** - նախանձից ինքն իրեն ուտել (նաև խանդել), **to be sick with envy** - նախանձից հիվանդանալ, **to be squint-eyed with envy** - կուրանալ /շիլանալ նախանձից, **venomed shafts of envy** - նախանձի թուևավոր աղեղները, **to broil with envy** - այրվել նախանձից, **to be**

consumed with envy - հյուսվել նախանձից, **to explode with envy** - պայթել նախանձից, **to be poisoned with envy** - թուլնավորված լինել նախանձից: Այս խմբում տեղ գտած ասացվածքները նույնպես փաստում են, որ **նախանձը** ցավ է պատճառում ոչ միայն այն անձին, ում նախանձում են, այլ ավելի շատ նախանձողին. **Envy envies itself.** - (բառացի՝ **Նախանձն ինքն իրեն ուտում է**), **Envy eats nothing but its own heart.** - (բառացի՝ **Նախանձը միայն մարդու սիրտն է մաշեցնում**), **Envy shoots at others and wounds herself.** - (բառացի՝ **Նախանձողը կրակում է ուրիշների վրա, բայց վիրավորում է սեփական անձը**), **Envy and wrath shorten the life.** - (բառացի՝ **Նախանձը և զայրույթը կարճացնում են կյանքը**), **Envy never enriched any man.** - (բառացի՝ **Նախանձը ոչ մեկին չի հարստացրել**), **The envious man shall never want woe.** (բառացի՝ **Նախանձող մարդը չի ուրախանում**), **Envy never has a holiday.** - (բառացի՝ **Նախանձողը չի ուրախանում**), **Love and envy make a man pine.** - (բառացի՝ **Սերն ու նախանձը/խանդը մարդուն տանջում են**), **An envious man waxes lean with the fatness of his neighbour.**-(բառացի՝ **Նախանձոտ մարդը նիհարում է հարևանի գիրույթով նից**, **If envy were a rash, the whole town would be ill.**- (բառացի՝ **Եթե նախանձը ցանկներ, ամբողջ քաղաքը կհիվանդանար**), **Envy is a two-edged sword.** - (բառացի՝ **Նախանձն երկծայրանի թուր է**), **Envious man grows lean.** - (բառացի՝ **Նախանձոտ մարդը նիհարում է**), **Envious man is a squint-eyed fool.** - (բառացի՝ **Նախանձոտ մարդը շիլաքանի /կույր հիմար է**), **The envious heart procures mickle smart.** - (բառացի՝ **Նախանձոտ սիրտը ցավ/կսկիծ է առաջացնում**), **Envious heart freteth itself.** - (բառացի՝ **Նախանձոտ սիրտը ինքն իրեն մաշեցնում է/տանջում է**), **As a moth graves at a garment so does envy consume a man.** - (բառացի՝ **Ինչպես ցեցն է ուտում հագուստը, այնպես էլ նախանձն է հյուսում /մաշեցնում մարդուն**), **Envy and wrath shorten the life.** - (բառացի՝ **Նախանձը և զայրույթը կարճացնում են կյանքը**):

Ինչպես հայերենում, այնպես էլ անգլերենում ժողովրդական խոսքը հորդորում է զերծ մնալ **նախանձից**, քանի որ նախանձողը վերջի վերջո անհաջողությամբ կհանդիպի իր չարարարքների համար. **He that mischief hatches mischief catches.** - **Չարույթյուն կամեցողը չարույթյան կհանդիպի**, **He that blows in the dust fills his eyes with it.** - (բառացի՝ **Ով փչում է փոշու մեջ, իր աչքերը լցվում է այդ փոշով**),

Envy never does a good turn but when it means an ill one. - (բարացի՝ Նախանձը միշտ վատ հետևանք է ու նենու մ):

3. Նախանձ - վրեժխնդրություն:

Հայերենում այս գուգորդային դաշտում տեղ են գտել այն դարձվածային միավորները, որոնք ունեն **վրեժխնդրություն, ոխի** իմաստ և մեր կողմից ընդգրկվել են նախանձի **ոխ** իմաստն առկայացնող խմբում, սակայն հարկ է նշել, որ տվյալ միավորներում **նախանձի** իմաստը համատեքստային է: Այս ենթախմբում ասացվածքներ չեն ընդգրկվել: Բերենք դարձվածքների հետևյալ օրինակները՝ **օձնություն անել՝ նենգություն, չարակամություն, խարդախություն անել, նախանձել, փորը, միսքը սատանա մտնել (փորի մեջ սատանա լինել)՝ չար լինել, փորը օձ մտնել՝ մեկին վնասելու չար դիտավորությունից հանգիստ չունենալ, ոխ առնել՝ վրեժխնդիր լինել, բոստանը քար գցել՝ վնաս հասցնել, առամները չիջիկացնել, կրծսել կամ կրծսացնել՝ ոխի, վրեժի զգացմունք տածել (փխբ):**

Հայկական պատկերացումներում **օձ** նունի հակադիր իմաստներ՝ և՛ վրիժառու է, և՛ նենգ, և՛ բարիքներ, գանձեր առաքող, և՛ հովանավոր: Այն նաև իմաստություն, ողջամտություն, ճարտար լեզվի խորհրդանիշ է (օր.՝ **օձի լեզու, օձի խելք**) (Մանուկյան 30: 2015): **Օձ** բառադրիչ պարունակող դարձվածային միավորները ունեն բացասական նշանակություն, այն է՝ **ոխ** և **վրեժխնդրություն**:

Անգլերենում նույնպես տեղ են գտել այն դարձվածային միավորները, որոնք արտահայտում են **վրեժխնդրություն, ոխերիմություն** իմաստը: Ինչպես և հայ, այնպես էլ անգլերենի լեզվակրի համար նախանձ տածող անձը անում է ամեն ինչ, որ խանգարի ուրիշի հաջողություններն: Այս խմբում տեղ են գտել հետևյալ դարձվածային միավորները՝ **to put smb's pipe out - խանգարել հաջողությանը, to steel /stead the spotlight - խանգարել հաջողությանը, to put smb off his stribe/off his strock - խանգարել մեկին, to stand in smb's light - (բարացի՝ մեկի լույսը փակել, խանգարել), to have it in for sb - ցանկություն ունենալ վնասել մեկին, to cut the ground from (under) sb/sb's feet - խափանել մեկի ալ անները, to bear/ nurse/ have/ hold a grudge**

against smb - նախանձ, նենգություն ու նենայ ինչ - մեկի հանդեպ
Տվյալ իմաստային բաղադրիչ պարունակող ասացվածքներ չենք հանդիպել :

4. Նախանձ - ցանկություն:

Հայերենում այս գուգորդային դաշտը ձևավորող դարձվածքները և ասացվածքները արտահայտում են **ցանկություն** իմաստը, որը երբեմն առաջացնում է, երբ անձը, տեսնելով ուրիշի հաջողությունները, նախանձով էլցվում և ցանկանում հասնել այդ նույն նվաճումներին: Բերենք դարձվածքների հետևյալ օրինակներ՝ **աչքը վրան մնալ**՝ (միայն II կամ III դեմքով)՝ *նախանձել*, *չկամություն անել*, **աչք տնկել (կամ ցցել) (մի բանի)**՝ *նախանձով նայել մի բանի*, **աչք տեսնել**՝ **առանը չկտրել**՝ (խսկց.) *ցանկանալ*, *բայց չկարողանալ հասնել*, **աչք տես բերնե կարոտ** (բրբ.)՝ *ցանկանալ*, *բայց չկարողանալ հասնել*, **աչքը վրան մնալ**՝ *փախազել (նաև նախանձել)*: Այստեղ կարող ենք դասել նաև հետևյալ ասացվածքները՝ **Հարևանի հարսը սիրուն է: Հարևանի մառանից գաթի հոտ կուգա Ձուռնի ձայնը հեռվից հրաշալի է թվում: Հեռու տեղի հացը մեծ կերևա**

Վերոնշյալ ասացվածքներից պարզ է դառնում, որ ուրիշի հաջողությունների մասին եղած պատկերացումները երբեմն խաբուսիկ են լինում. այն ինչ ուրիշինն է, միշտ լավն է թվում, սակայն ժողովրդական իմաստությունը հուշում է, որ հարկավոր չէ համեմատվել կամ նախանձել: Նշված միավորներն արտացոլում են հայերին հատուկ էգզոտիզմը՝ ընդգրկելով հայկական մշակույթին հատուկ պատկեր՝ **զուռնա գաթա** Տվյալ բառերի ընտրությունը պատահական չէ. զուռնայի ձայնը լսվում այն տնից, որտեղ տիրում է ուրախության և երջանկության մթնոլորտը, իսկ գաթան թխվում է հարուստի, այլ ոչ թե աղքատի թոնրում՝ ահա այն բոլոր հանգամանքները, որոնք կարող են դժբախտի և աղքատի նախանձն արթնացնել: Հետաքրքրական է **հարս** բառի կիրառությունը ասացվածքներում: Այստեղ նույնպես վառ կերպով պատկերված է հայ մարդու կերպարը: Ինչպես հայ տնի է, հայկական ընտանիքում լավ, հնազանդ հարս ու նենայ ու հանգամանքը չափազանց կարևորվում է:

Հարսը ընտանիքի պատիվն է, պարծանքը: Ով էլ ավ հարս չունի, «անբախտ է» իրեն համարում և կարող է նախանձով և ցվել այն մարդու հանդեպ, ով «արժանացել է այդ բախտին»:

Անգլերենում այս խմբում տեղ են գտել զուգորդային դաշտը ձևավորող այն միավորները, որոնք, ինչպես և հայերենում, արտահայտում են այնպիսի *ցանկություն* իմաստ, երբ անձը տեսնում է դիմացինի ձեռքբերումները և փափագում է ունենալ դրանից: *Նախանձի* առարկան երբեմն այնքան էլ արժանի չէ հիացմունքի, որքան թվում է, պարզապես՝ «արգելված խնձորը քաղցր է»: Այս խմբում ընդգրկել ենք միայն ասացվածքներ. ***The girl looks fine, but she isn't mine.*** - *հմմտ. Լավն է, ախոսս իմը չէ*, ***Grass is always greener on the other side of the fence.*** - *հմմտ. Հարևանի հարսը սիրուն է, It is good fish if it were but caught.* - (*բառացի՝ Լավ ձուկ կլիներ, եթե բռնվեր*):

5. Նախանձ - շողոքորթություն:

Յետաքրքրական է, որ միայն անգլերենում է առանձնացվել ***նախանձ - շողոքորթություն*** զուգորդային դաշտը ձևավորող խումբը, որում ընդգրկել ենք հետևյալ ասացվածքները՝ ***Envy is a kind of praise.*** - (*բառացի՝ Նախանձը գովեստի տեսակ է*), ***Envy is a left-handed praise.*** - (*բառացի՝ Նախանձը կեղծ գովեստ է*), ***Envy is the sincerest form of flattery.*** - (*բառացի՝ Նախանձը ամենաանկեղծ շողոքորթությունն է*):

Այս խմբում ընդգրկված միավորները վառ կերպով արտացոլում են ազգային էզդամտածողության և հոգեբանության յուրահատկությունները: *Նախանձը* անգլիացու պատկերացմամբ կարող է շողոքորթել, կեղծ գովք անել՝ ըստ երևույթին՝ քողարկելու համար նախանձողի չարությունը, թաքցնելու նրա չարակամությունը: Ինչպես հայտնի է, անգլիացին իր խառնվածքով ավելի զուսպ է և գերադասում է քողարկել իր զգացմունքները, հետևաբար, երբ *նախանձում* է, երբեմն գերադասում է կեղծ գովասանք անել դիմացինին՝ չմատնելու իր չարակամ մտադրությունները: Հարկ է նշել, որ հայերենում նման իմաստ արտահայտող դարձվածքներ կամ ասացվածքներ չեն առանձնացվել:

Այսպիսով, ***նախանձ*** իմաստն արտահայտող հայերեն և անգլերեն դարձվածային միավորների ուսումնասիրությունը փաստում է, որ

քանակային առումով հայերենում և անգլերենում դրանք գրեթե նույնական են: Դա կարելի է բացատրել այն փաստով, որ հույզերը (դրական կամ բացասական) համընդհանուր են և տարբեր լեզուներում առկայ անում են նույն համամասնությամբ:

Հարկ է նշել, որ թե՛ հայերենում և թե՛ անգլերենում առկա *նախանձ* արտահայտող միավորների իմաստը համատեքստային է: Այն հայտ է, որ զուգադրվող լեզուների լեզվակիրների լեզվամշակութային առանձնահատկությունները մասամբ տարբեր են, սակայն կան նաև ընդհանրություններ: Մասնավորապես, թե՛ հայերենում, թե՛ անգլերենում գոյություն ունեն *չարակամություն* և *վրեժխնդրություն* իմաստային բաղադրիչ պարունակող միավորներ, որոնք առկայ անում են համընդհանուր **չար աչքի** մասին սնահավատ պատկերացմամբ: Անգլերենում **նախանձ-չարակամություն** զուգորդային դաշտը ձևավորող խմբում ընդգրկված միավորներում խորհրդանշանի դեր է կատարում *կանաչ* գույնը, որը նախանձի հետ է զուգորդվում՝ **green with envy, to look through green glasses**: Հայերենում այս խմբում տեղ գտած որոշ դարձվածքներ, օրինակ՝ **իր միսը կրծոտել, ինքն իրեն (իրան) ու տել**, *նախանձ* իմաստից բացի, արտահայտում են նաև *խանդի* իմաստ, որը կարելի է բացատրել հայերենում *նախանձ* և *խանդ* բառերի արմատների ծագումնաբանական ընդհանրությամբ: Թե՛ հայերենում և թե՛ անգլերենում **նախանձ-չարակամություն** զուգորդային դաշտը ձևավորող խմբում ընդգրկված միավորներում նկատելի է այն փաստը, որ *նախանձ* առաջանում է հավասար դիրքում գտնվող մարդկանց միջև:

Հայերենում **նախանձ-ցավ** զուգորդային դաշտը ձևավորող խմբում ընդգրկված միավորներում առկա են **աչք, վոր, սիրտ** բառերը, որոնք հայերենի լեզվակրի համար *նախանձից* ամենաշատն են «վնասվում»: Երկու լեզուներում էլ *նախանձը ցավ է* պատճառում ոչ միայն այն անձին, ում նախանձում են, այլ և նախանձողին: Բացի այդ, ինչպես ցույց են տալիս երկու լեզուներում տվյալ զուգորդային դաշտերում նշված ասացվածքներ՝ *չարամիտ մտադրությունները* անպատիժ չեն մնա. *նախանձը կցավեցնի* նախանձողին:

Նախանձ - վրեժխնդրություն զուգորդային դաշտը ձևավորող դարձվածքները և ասացվածքները վերլուծելիս պարզ է դառնում, որ հայերենում առկա միավորը՝ **օձուկություն անել**, վառ պատկերում է հայկական մշակույթում ընդունված խորհրդանիշը, մինչդեռ անգլերենի տվյալ խմբում ընդգրկված դարձվածքները չունեն ընդհանուր խորհրդանիշային պատկեր:

Չայերենում և անգլերենում առանձնացրել ենք **Նախանձ-ցանկություն** զուգորդային դաշտը ձևավորող դարձվածքներ ու ասացվածքներ: Ուշագրավ է, որ հայերենի միավորները վառ կերպով արտացոլում են ազգային լեզվամտածողության և հոգեբանության յուրահատկությունները՝ ընդգրկելով հայկական մշակույթին հատուկ բաղադրիչներ՝ **զուռնայ գաթա**

Չետաքրքրական է, որ միայն անգլերենում է առանձնացվել **Նախանձ- շողոքորթություն** զուգորդային դաշտը ձևավորող խումբը: Մտքերի և հույզերի արտահայտման անգլիական հոգեբանությանը հատուկ է չեզոքությունը, գսպվածությունը: Ասել է թե՛ **Նախանձը** կարող է շողոքորթել, կեղծ գովք անել՝ քողարկել ու համար նախանձողի չարամտությունը:

Այսպիսով, դարձվածային միավորների ուսումնասիրությունը և զուգարումը հետաքրքրական է և կարևոր, քանի որ դրանք տվյալ լեզվամշակույթի խոսքում ու արտացոլանքն են, և դրանց միջոցով կարելի է գաղափար կազմել լեզվակիրների մշակութային արժեքների, հոգեբանության և լեզվամտածողության մասին:

ԳԼՈՒԽՅ

«ENVY» ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԻ ԱՌԿԱՅԱՑՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ ԵՎ ԴԱՇՏԻ ՄԻԱԿՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐԺԵՔՈՒ ԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒ ԹՅՈՒՆՈՒՄ

Ինչպես թարգմանություն, տեսություն, այնպես էլ գեղարվեստական թարգմանություն հիմնական խնդիրն է ուսումնասիրել այն բոլոր օրինակաբանությունները, կանոններն ու օրենքները, որոնք նկատելի են բնագրի և թարգմանության միջև, ինչպես նաև իմիբերել թարգմանություն ընթացքում առաջացած խնդիրները, վերհանել թարգմանություն մեջ փոխանցվող բառային, շարահյուսական, լեզվաոճական, գեղարվեստական արտահայտչամիջոցները, գտնել դրանց թարգմանական դժվարությունների հաղթահարման ուղիները, որոնք էլ իրենց հերթին կբերեն թարգմանչի առջև ծառայած ամենակարևոր խնդրի իրականացմանը, այն է՝ ստեղծել գեղարվեստական երկին համարժեք թարգմանություն:

Ինչպես Դ. Համբարձումյանը նշում է, «Գեղարվեստական թարգմանությունը, ինքնին ստեղծագործական գործունեություն է լինելով, ակնհայտորեն առնչվում է և՛ գրականությանը, և՛ լեզվին, ինչպես նաև երկու լեզուների հարաբերմանը և թարգմանություն մեջ այլ լեզվական միջոցների օգնությամբ բնագրի լեզվաոճական առանձնահատկությունների պահպանման ու արտացոլման խնդրին» (Համբարձումյան 2008:21):

Աշխատանքի այս հատվածում կուսումնասիրենք «envy» իմաստային դաշտի առկայացումը անգլերեն բնագրում և կկատարենք համեմատական վերլուծություն հայերեն թարգմանություններում: Չուգադրվող լեզուների լեզվական միավորների անհամապատասխանությունը, ինչպես նաև աշխարհընկալման տարբերությունները կարող են հանգեցնել բնագրի տեքստի և թարգմանության անհամարժեքությանը: Հետևաբար, շատ կարևոր է պահպանել թարգմանության համարժեքությունը՝ **քերականական, իմաստային, ոճական**, ինչպես նաև **գործաբանական** մակարդակներում:

Որպես ուսումնասիրություն նյութը՝ ընտրել ենք 19-րդ դարի

անգլիացի գրող **Ու. Թեքերեյի** «**Ունայ նության տնավաճառ**», 20-րդ դարի ամերիկացի գրող **Ջ.Լոնդոնի** «**Մեծ տան փոքրիկ սիրու հին**» և 20-րդ դարի անգլիացի գրող **Դ.Յ. Լորենսի** «**Լեդի Չաթըրլիի սիրեկանը**» վեպերը, որոնք, ըստ մեզ, լավագույնս են առկայացնում **նախանձի** ընկալման առանձնահատկությունները, քանի որ նշված վեպերի հերոսները կյանքի փնտրտուքների մեջ, բախվելով բազմաթիվ խոչընդոտների, վերապրում են տարբեր զգացողություններ, այդ թվում՝ նաև՝ **նախանձի** զգացում: Նշված գեղարվեստական վեպերի ընտրությունը, վերլուծությունը և համեմատությունը պայմանավորված է նաև այն փաստով, որ նպատակ ենք ունեցել պարզել, թե ինչ տարբերակիչ իմաստային բաղադրիչներ է ստացել **նախանձ** իմաստը տարբեր դարաշրջաններում, տարբեր մշակումներում, և որոնք են ընդհանրություններն ու տարբերությունները: Հայերեն թարգմանության համարժեքությունը վերհանելու նպատակով վերլուծել ենք նշված ստեղծագործությունների թարգմանությունները՝ Ս.Ալեմյանի «**Ունայ նության տնավաճառ**», Կ.Սիմոնյանի «**Մեծ տան փոքրիկ սիրու հին**» և Ա.Արսենյանի «**Լեդի Չաթըրլիի սիրեկանը**»:

Քանի որ «**նախանձ**» իմաստային դաշտում ընդգրկված թե՛ *կենտրոնական*, թե՛ *մոտակա* և թե՛ *հեռավոր* եզրերի (հայերենում՝ *նախանձ*, *խանդ*, *ատելություն*, *ոխ*, *նախանձախնդրություն* ևն, անգլերենում՝ *envy*, *jealousy*, *malice*, *grudge*, *resentment* ևն) բառային միավորները այդքան էլ հաճախադեպ չեն գեղարվեստական տեքստի հյուսվածքում, մեր աշխատանքում, որպես վերլուծության ևս մեկ բաղադրատարր, ընդգրկել ենք նաև այս հասկացությունն առկայացնող *համատեքստային* շերտը:

Հաշվի առնելով «**նախանձ**» իմաստն առկայացնող լեզվական միավորների իմաստային դաշտի վերլուծության արդյունքները՝ կարող ենք առանձնացնել ուսումնասիրվող գեղարվեստական տեքստերում արտացոլված իմաստային տարբերակիչ բաղադրիչները: Վերոնշյալ վեպերից դուրս գրված օրինակների վերլուծությունը ցույց է տալիս, որ «**նախանձ**» իմաստային դաշտի լեզվական միջոցները բաժանվել են հետևյալ տարբերակիչ իմաստային խմբերի՝ **չարակամություն**, **ատելություն**, **զայրույթ**,

թշնամուտը ունի (մրցակցություն), խանդ, վրեժխնդրություն, ցանկություն:

1. **Նախանձ** իմաստն առկայացել է **չարակամություն** տարբերակիչ բաղադրիչով:

Այս խմբում հիմնականում ընդգրկվել են անգլերենի **envy** իմաստային դաշտի *մոտակագրի* միավորները, օրինակ՝ **grudge, spite, spiteful, enviable, envy** բառերը և հայերեն նշված միավորները թարգմանվել են **չարակամություն, չարություն, նախանձ, նախանձել** բառերով, որոնք ներառված են հայերենի **Նախանձ** իմաստային դաշտի *մոտակագրում*: Տվյալ տարբերակիչ իմաստային բաղադրիչը պարունակող խումբը ներկայանում է և՛ բառային միջոցների, և՛ համատեքստային առկայացմամբ:

Օրինակ 1.

«This is blessed news, m'am - indeed, m'am,» the housekeeper said; «and the good old times is returning, m'am. The dear little feller, to be sure, m'am; how happy he will be! But some folks in May Fair, m'am, will owe him a grudge, m'am»; and she clicked back the bolt which held the window-sash and let the air into the chamber (Thackeray W.«Vanity Fair», p. 372).

- *Լավ եղավ, մե՛մ,- ասաց սպասուհին: - Ոնց որ հին ժամանակները վերադառնան, մե՛մ: Փոքրիկի համար լավ եղավ, էստեղ իրեն շատ լավ կգգա: Բայց Մեյ Ֆեյրում, մե՛մ, շատերը նրան կնախանձեն,- և նա ետքը լուսամուտի փեղկի սողնակը, որպեսզի սենյակը օդափոխվի (Թեքերեյ Վ., Ունայնություն տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 524):*

Վեպում սպասուհին կարծում էր, որ շատ-շատերը կնախանձեին տղային, որը դարձել էր այդ մեծ ունեցվածքի ժառանգորդը:

But some folk in May Fair, m'am, will owe him a grudge հատվածը թարգմանվել է **Բայց Մեյ Ֆեյրում, մե՛մ, շատերը նրան կնախանձեն** նախադասությամբ: Անգլերենի **to owe smb a grudge** դարձվածքն ունի **առավ ունենալ մեկի վրա** նշանակությունը (ՅԼԴԲ 1975:82) և նշված դարձվածքի հայերեն *զուգահեռ դարձվածային համարժեքն* է: Սակայն թարգմանիչը գերադասել է կիրառել *ազատ (փոփոխուն)* բառի հնարը և թարգմանել է **կնախանձեն** բայով, որը տվյալ հատվածում

իմաստայ ին առու մով ճիշտ է:

Օրինակ 2.

*Ah, my beloved readers and brethren, **do not envy poor Becky** prematurely - glory like this is said to be fugitive (Thackeray W.«Vanity Fair», p. 377).*

*Իմ սիրելի՛ ընթերցողներ և եղբայրներ, ժամանակից շուտ **մի՛ նախանձեք իեղճ Բեկիին**, նման փառքն, ասում են՝ անցողիկ է (Թեքերեյ Վ., Ունայնու թյան տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 531):*

Բեկին փառքի մեջ էր և վայելում էր կյանքի հաճույքները: Հեղինակը մտավախություն ունի, որ նույնիսկ մարդիկ կնախանձեն իր հերոսուհուն, չարությունք կլցվեն նրահանդեպ:

***Don't envy poor Becky** հատվածը թարգմանվել է **մի՛ նախանձեք իեղճ Բեկիին** նախադասությամբ, և կիրառվել է *համարժեք* թարգմանություն:*

Օրինակ 3.

Let the ladies envy her triumph (Thackeray W.«Vanity Fair», p. 506).

***Թող տիկնայք նախանձեն նրա հաղթությանը** (Թեքերեյ Վ., Ունայնու թյան տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 686):*

Հեղինակը կարծում է, որ եմիլիան վերջապես հանգիստ կվայել իր կյանքը Դոբբինի հետ, քանի որ նաարժանի է դրան, իսկ տիկնայք թող նախանձեն նրան:

Let the ladies envy her triumph հատվածը թարգմանվել է ***թող տիկնայք նախանձեն նրա հաղթությանը*** նախադասությամբ, որտեղ թարգմանիչը կիրառել է *համարժեք* թարգմանություն:

Օրինակ 4.

*Dobbin, who was a friend of the General commanding the division in which their regiment was, came laughing one day to Mrs. Osborne, and displayed a similar invitation, which **made Jos envious**, and George wonder how the deuce he should be getting into society (Thackeray W.«Vanity Fair», p. 211).*

Դոբբինը, լինելով իրենց դիվիզիայի հրամանատար գեներալի

մոտիկ մարդը, մի օր ծիծաղելով եկավ միսիս Օսբորնի մոտ և ցույց տվեց նման մի հրավիրատոմս, և այդ **շարժեց Ջոզի նախանձը**, ինչ պես և Ջորջի գարմանքը, թե ինչ պես կարողացավ նա սողոսկել այդպիսի շրջանի մեջ (Թեքերեյ Վ., Ունայնոթյան տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 304):

Ջոզը նախանձով լցվեց, երբ Դոբբինի ձեռքին տեսավ հրավիրատոմսերը, որ այդքան երագում էր ունենալ:

Անգլերենի **made Jos envious** հատվածը հաղորդվել է հայերեն **շարժեց Ջոզի նախանձը** թարգմանությամբ: Նկատում ենք քերականական խոսքի մասային փոխակերպման կիրառություն՝ ածականը փոխակերպվել է գոյականի, իսկ **made** բայի փոխարինումը **շարժեց** բայով՝ *հարմարեցման* հնարի օրինակ է:

Օրինակ 5.

*All the world was at Paris during this famous winter: to have seen the stars and cordons in Rebecca's humble saloon would have made **all Baker Street pale with envy.*** (Thackeray W.«Vanity Fair», p. 260).

Ամբողջ Բեյկեր-ստրիտը Ռեբեկայի խոնարհ սալոնում շքանշաններն ու պատվանշանի ժապավենները տեսնելիս՝ **նախանձից կղճգուներ** (Թեքերեյ Վ., Ունայնոթյան տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 370):

Սնափառ հասարակությունը նախանձում էր Ռեբեկային, քանի որ վերջինս հաջողությունների էր հասել. խանդի զգացումը պարուրել էր լեդիներին:

Ինչ վերաբերում է թարգմանական խնդրին, նշենք, որ թարգմանիչը **pale with envy** հատվածը հաղորդել է **նախանձից կղճգուներ** թարգմանությամբ, որտեղ կիրառվել է *խոսքի մասային փոխակերպում*, մասնավորապես՝ **pale** ածականը փոխարինվել է **կղճգուներ** բայով:

Օրինակ 6.

He knew it would not change him from an ownerless dog, whom everybody begrudges its golden collar, into a comfortable society dog (Lawrence D. H. «Lady Chatterley's Lover», p. 22).

Գիտեր, որ այն չէր փոխել ու անտերուսն շան իր ճակատագիրը, որի ոսկյա վզնոցին բուրն են նախանձում և ինքը երբեք բարեկեցիկ տան ձեռնառուն շնիկ չէր դառնալ ու (Լորենս Դ.Յ., Լեդի Չաթըրլի իի սիրեկանը, թարգմ.՝ Արսենյան Ա., էջ 62):

Միքաել իսը հասկանում էր, որ շատերը կնախանձեին իրեն, եթե իմանային, որ Կոնիի հետ մտերմացել էր: Բայց նա չէր կարող հանդուրժել հարուստի «շնիկ» լինելը:

...everybody begrudges its golden collar` որի ոսկյա վզնոցին բուրն են նախանձում հատվածում նկատում ենք, որ *begrudge* բայը թարգմանվել է **նախանձել** բայով: Հոմանիշների բառարանների տվյալների համաձայն անգլերենում *begrudge* բայը համարվում է *envy* բայի հոմանիշը: Վերջինիս առաջին իմաստն է *խնայել*, *դժկամությամբ տալ*, իսկ երկրորդ իմաստով՝ *նախանձել*: Թարգմանիչը, ելնելով համատեքստի իմաստից, գերադասել է **նախանձել** բայը և կատարել է *համատեքստային նկարագրական* թարգմանություն, ինչը, կարծում ենք, համարժեքորեն հաղորդել է բնագրի իմաստը:

Օրինակ 7.

We bust apart, and say spiteful things about one another. <...> It's a curious thing that the mental life seems to flourish with its roots in spite, ineffable and fathomless spite. Always has been so! Look at Socrates, in Plato, and his bunch round him! The sheer spite of it all, just sheer joy in pulling somebody else to bits (Lawrence D.H.«Lady Chatterley's Lover», p. 29).

Մենք վիճում - բաժանվում ենք իրարից և չար բաներ ասում իրար մասին <...> Չարմանալի է, որ մտավոր կյանքը կարծես ծաղկում է, մինչդեռ դրա արմատները չարության մեջ են թաղված, անասելի, անհասկալի չարության: (Լորենս Դ.Յ., Լեդի Չաթըրլի իի սիրեկանը, թարգմ.՝ Արսենյան Ա., էջ 73):

Քլիֆորդի ընկերը վերլուծում է այն չարակամությունն ու նախանձը, որ մարդիկ տածում են միմյանց հանդեպ: Բամբասանք, չարախոսություն, կեղծ հաճոյախոսություն. ահա այն մթնոլորտը, որն առկա է մտավորականների շրջանում:

Անգլերենի *we say spiteful things* հատվածը հաղորդվել է **մենք չար**

քաներ առում իրար մահն թարգմանությունը ամբ, որտեղ թարգմանիչը կիրառել է *հարմարեցման* հնարը և հատվածը հայլեզվամտածողությունը բնորոշ ձևով է թարգմանել: Կառաջարկեինք **չարստել** բայը՝ թարգմանությունը առավել բարեհունչ դարձնելու նպատակով:

The mental life seems to flourish with its roots in spite, ineffable and fathomless spite հատվածը հաղորդվել է **մտավոր կյանքը կարծես ծաղկում է, մինչդեռ դրա սրմաները չարություն մեջ են թաղված, անասելի, անհասկ չարություն** թարգմանությունը: Այստեղ թարգմանիչը **roots in spite** փոխաբերությունը թարգմանելիս օգտագործել է *հավելման* հնարը՝ ավելացնելով **թաղված** բառը, նաև *հարմարեցման* հնարը, քանի որ հայլեզվամտածողությունը բնորոշ է տվյալ բառի կիրառությունը, ինչպես, օրինակ, **վշտի մեջ թաղվել, պարսերի մեջ թաղվել** և այլն: Հարկ է նշել, որ *spite*, *և՛ չարություն* գոյականները անգլերենի *envy* և համապատասխան հայերենի *նախանձ* իմաստային դաշտերի *մոտակագրերի* միավորներ են:

Օրինակ 8.

She was thrilled to come to Wragby; thrilled to talk to Lady Chatterley, my word, different from the common colliers' wives! She said so in so many words. Yet one could see a grudge against the Chatterleys peep out in her; the grudge against the masters (Lawrence D.H.«Lady Chatterley's Lover», p. 69).

Նա սրդողած էր մեկնում Ռագբի, սրդողած էր զրուցում և եղի Չաթըրլի իի հետ, դե իհարկե հանքափորերի հասարակ կանանց հետ չես համեմատի: Բառերով շատ բան էր ասում: Բայց նկատելի էր նաև թաքուն նախանձը Չաթըրլի իի հանդեպ չար նախանձը տերերի հանդեպ (Լորենս Դ.Հ., *Լեդի Չաթըրլի իի սիրեկանը, թարգմ.*՝ Արսենյան Ա., էջ 136):

Միսիս Բոլթընը թեև հավատարիմ ծառա էր Չաթըրլիների տանը, սակայն, աղքատ խավի ներկայացուցիչ և ինտելիգենտ, թաքուն նախանձում էր, չար նախանձով էր և ցված վերջիններիս հանդեպ, քանի որ նրանք էլ էին «տերեր»:

Yet one could see a grudge against the Chatterleys peep out in her: the grudge

against the masters հատվածը հաղորդվել է **բայց նկատելի էր նաև թաքուն նախանձը Չաթըրլիների հանդեպ չար նախանձը տերերի հանդեպ** թարգմանու թյամբ, որտեղ կատարվել են մի շարք փոխակերպումներ: Նշենք, որ **grudge** (1. անոթսալ 2. նախանձել . 3. չարակամել) գոյականն իր իմաստներից մեկով հոմանիշ է անգլերենի **envy** գոյականին: Յետևաբար, թարգմանիչը կատարել է *համատեքստային նկարագրական* թարգմանություն՝ բնագրի իմաստային կաղապարը պահպանելու համար: **A grudge peep out** բառակապակցությունը թարգմանվել է՝ **նկատելի էր թաքուն նախանձ** արտահայտություն: **Չար նախանձ** բառակապակցության մեջ **չար** ածականի կիրառումը հանգեցրել է *հավելման* հնարի գործածմանը:

Օրինակ 9.

And when she thought of him, the old, old grudge against the world rose up, but especially against the masters, that they had killed him. They had not really killed him. Yet, to her, emotionally, they had. And somewhere deep in herself because of it, she was a nihilist, and really anarchic. In her half-sleep, thoughts of her Ted and thoughts of Lady Chatterley's unknown lover commingled, and then she felt she shared with the other woman a great grudge against Sir Clifford and all he stood for (Lawrence D.H.«Lady Chatterley's Lover», p. 122).

Եվ նրան հիշելիս՝ հոգու մեջ զարթնեց հին, շատ հին ոխն աշխարհի, սակայն հատկապես տերերի հանդեպ որ սպանել էին նրան: Իրականում, նրանք չէին սպանել: Բայց իր հոլյգերում համարում էր, որ հենց նրանք էին սպանել: Եվ այդ պատճառով հոգու խորքում նա ինչ-որ տեղ ոչնչապատ էր, իրականում՝ անիշխանական: Կիսաարթմանի խոհերն իր թեդի և լեդի Չաթըրլիի անհայտ սիրեկանի մասին միախառնվել էին, հետո զգաց, որ կիսում էր այդ կնոջ ու ժգին ոխակալ ու թյունը սըր Քլիֆորդի և այն ամենի հանդեպ ինչը նա պաշտպանում էր (Լորենս Դ.Յ., Լեդի Չաթըրլիի սիրեկանը, թարգմ.՝ Արսենյան Ա., էջ 222):

Տիկին Բուլթընը իր ամուսնուն հիշելիս կրկին վերապրում էր այն հին ոխի զգացողությունը տերերի հանդեպ, որոնք դիզել էին իրենց հարստությունը խեղճ բանվորների տառապանքի և, նույնիսկ, կյանքի հաշվին:

Անգլ երենի *grudge against the world rose up but especially against the masters* հատվածը հաղորդվել է **հոգու մեջ զարթնեց ոխն աշխարհի, հատկապես տերերի հանդեպ** թարգմանությամբ: Ինչպես նկատում ենք, հայ երեն թարգմանության մեջ *հավելման* հնարի միջոցով, թարգմանիչն ավելացրել է **հոգի** բառը, որով նակրկին ցանկանում է բևեռել հայ ընթերցողի ուշադրությունը հերոսուհու խոր հոգեկան ապրումների վրա:

Քանի որ, ինչպես արդեն նշել ենք, **grudge** գոյականը բազմիմաստ է (1. *ախոռուսալ* 2. *նախանձել*, 3. *չարակամել*), թարգմանիչն օգտագործել է *նկարագրական համատեքստային* թարգմանություն: Որոշ համատեքստերում համարժեք է համարել տվյալ բառի համար **նախանձ**, մյուս օրինակներում՝ **ոխ** կամ **չարակամություն** իմաստները: Այստեղ ունենք *համատեքստային համարժեքի* օրինակ, երբ բազմիմաստ բառի իմաստը վեր է հանվում համատեքստային շերտում:

Օրինակ 10.

He had run away from a millionaire home when he was thirteen. He had won enviable college honors when he was twenty-one and after that he had known all the purple ports of the purple seas. (London J. «The Little Lady of the Big House», p. 22).

*Տասներեք տարեկան հասակում փախել էր տնից, որը թողել էր միլիոնատեր հայրը. երբ դեռ քսանմեկ տարեկան էլ չկար, **ավարտեց համալսարանը**, իսկ հետո վճռեց բավարարություն տալ բոլոր հեքիաթային ծովերը տեսնելու իր գայթակղությունը (Լոնդոն Ջ., Մեծ տան փոքրիկ տիրուհին, թարգմ.՝ Սիմոնյան Կ., էջ 419):*

Դիկը հարուստ խավի ներկայացուցիչ էր և կարող էր իրեն թույլ տալ սովորել նախանձելի բուլեջում:

He had won enviable college հատվածը *գեղջման* հնարի կիրառմամբ հաղորդվել է **ավարտեց համալսարանը** թարգմանությամբ. բաց է թողնվել **enviable** ածականը: Սակայն, կարծում ենք, թարգմանությունն ավելի լիարժեք կլիներ, եթե թարգմանվեր **նախանձելի համալսարանը** բառակապակցությամբ: Ինչ վերաբերում է **to win college honors** հատվածի իմաստի հաղորդմանը, նշենք, որ թարգմանիչը չի պահպանել գործաբանական կաղապարը, քանի որ իմաստը թարգմանել է **ավարտել** չեզոք բայով, այնինչ **to win college**

honors նշանակում է **գերազանցությանը ավարտել** և տվյալ համատեքստում ունի հարանշանակային արժեք. այն կիրառվել է շեշտելու համար պատանու հաջողակ կյանքի փաստը և այն, որ նրան հաջողվում էր հաղթանակել նաև այլ ոլորտներում: Կառաջարկեինք **Նրան բախտ էր վիճակվել սովորել ու նախանձել ի համալ սարանում** թարգմանությունը՝ բնագրի իմաստը լիովին հաղորդելու համար:

Օրինակ 11.

*Many scores of carriages, with blazing lamps, blocked up the street, to the disgust of No. 100, who could not rest for the thunder of the knocking, and of 102, who **could not sleep for envy** (Thackeray W.«Vanity Fair», p. 378).*

Բոցավառ լապտերներով մի քանի տասնյակ կառքեր փակում էին փողոցը, ի հեճուկս թիվ 100-ի, որը հանգիստ չուներ աղմուկից, և թիվ 102-ի, որը **նախանձից չէր կարողանում քնել** (Թեքերեյ Վ., Ունայնություն տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 532):

Բեկին երեկույթներ էր կազմակերպում, և կառքերը փակում էին փողոցները: Հարևաններից շատերը աղմուկից չէին կարողանում քնել, իսկ մյուս մասն էլ՝ նախանձից:

Couldn't sleep for envy հատվածը հայերեն է թարգմանվել **նախանձից չէր կարողանում քնել** ամբողջական համարժեքով:

Օրինակ 12.

*The happiness, the superior advantages of the young women round about her gave Rebecca inexpressible **pangs of envy** (Thackeray W.«Vanity Fair», p. 10).*

Ռեբեկայի շրջապատի դեռատի աղջիկների երջանկությունը և գերազանց առավելությունները նրան **նախանձի անարտահայտելի ցավ ու տանջանք** էին պատճառում (Թեքերեյ Վ., Ունայնություն տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 18):

Ռեբեկան, գիտակցելով իր շրջապատի աղջիկների առավելությունները՝ խորին ցավ էր ապրում, որ ինքն ընդամենը մի աղքատ կարգի աղջիկ էր: Նախանձի զգացումը տանջում էր նրան:

Թարգմանության առումով **pangs of envy** բառակապակցությունը թարգմանվել է թիրախ լեզու **նախանձի ցավ ու տանջանք**

արտահայտությունը: Այստեղ թարգմանիչը կիրառել է *հավելում* թարգմանական հնարը՝ ավելացնելով **տանջանք** գոյականը, ինչի հետևանքով թարգմանչին հաջողվել է հաղորդել բնագիր տեքստի զգայական ուժգնությունը: Հարկ է նշել, որ տվյալ իմաստային խմբում *չարակամություն* իմաստն առկայացել է նաև *համատեքստային* շերտում:

Օրինակ 13.

...of which affair not one line appeared in the daily press, but which affair was secretly provocative of ticklish joy and delight in all the chancelleries of Europe (London J. «The Little Lady of the Big House», p. 43).

Ի դեպ, այդ մասին ոչ մի տող չթափանցեց մամուլ, բայց և չարափինդ ուրախություն պարծառեց եվրոպական բոլոր մինիստրություններին (Լոնդոն Ջ., Մեծ տան փոքրիկ տիրուհին, թարգմ.՝ Սիմոնյան Կ., էջ 458):

Դիկի հետ պատահածը չարակամորեն ուրախացրել էր մինիստրություններին, քանի որ միլիոնատեր պատանին միշտ էլ նախանձի առարկա էր իր շրջապատում:

...was secretly provocative of ticklish joy and delight հատվածը հաղորդվելով **բայց և չարափինդ ուրախություն պարծառեց եվրոպական բոլոր մինիստրություններին** թարգմանությունը՝ թարգմանիչը դիմել է *զեղչման* հնարին՝ առաջին հատվածից (*was secretly provocative*) կրճատելով **secretly** մակբայը, որը բերել է բնագրի և թարգմանության միջև որոշակի իմաստային անհամապատասխանություն: Մեկ այլ՝ **joy and delight** հատվածում թարգմանիչը օգտագործել է *զեղչման* հնարը՝ թարգմանելով այն միայն **ուրախություն** բառով, քանի որ **joy** և **delight** բառերը, համաձայն բառարանային տվյալների, որոշ համատեքստերում հոմանիշներ են:

2. Նախանձ իմաստն առկայացել է **առել ություն** տարբերակիչ բաղադրիչով:

Այս խմբում հիմնականում ընդգրկվել են անգլերենի **envy** իմաստային դաշտի *մոտակա եզրի* միավորները, օրինակ՝ **hate, hatred**: Սակայն հայերենում տվյալ միավորները թարգմանվել են **առել ություն** բառով, որը հայերենի **նախանձ** իմաստային դաշտում

ընդգրկված չէ: Յարկ է նշել, որ համատեքստային շերտը տվյալ խմբի օրինակներում ընդգրկված չէ. *Նախանձ* իմաստն առկայացել է միայն բառային միջոցներով: Այս իմաստային խումբն առավելագույնս առկայացել է *Ու.Թեքերեյի «Ունայնոլթյան տոնավաճառ»* վեպում, մինչդեռ *Ջ.Լոնդոնի «Մեծ տան փոքրիկ սիրուհին»* վեպում նման օրինակներ չենք հանդիպել:

Օրինակ 1.

When Miss Sharp had performed the heroical act mentioned in the last chapter, and had seen the Dictionary, flying over the pavement of the little garden, fall at length at the feet of the astonished Miss Jemima, the young lady's countenance, which had before **worn an almost livid look of hatred**, assumed a smile that perhaps was scarcely more agreeable, and she sank back in the carriage in an easy frame of mind. (W.Thackeray «Vanity Fair», p.7).

Երբ միսս Շարպը կատարեց վերջին գլխում հիշատակված հերոսական արարքը և տեսավ, թե ինչպես բառարանը, թռչելով փոքրիկ պարտեզի սալարկած ճանապարհի վրայով, ընկավ ապշած միսս Ջեմայմայի ոտքերին, նրա **դեմքը**, որ մինչև այդ **առել ու թյան զգացմունքից կապրել էր**, շողաց մի տեսակ ժպիտով, որը հազիվ թե այդ զգացմունքից ավելի հաճելի լիներ, և նա ետընկավ կառքի մեջ՝ հոգեպես թեթևացած (Թեքերեյ Վ., Ունայնոլթյան տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 10):

Այս վեպում Բետտին աղքատաղջիկ էր և բազմիցս արհամարհվում էր ուսուցիչների կողմից, հետևաբար վերջինս նախանձով և առել ու թյամբ էր լցվում իրեն շրջապատող սաների հանդեպ:

Անգլերենի **had worn livid look of hatred** արտահայտությունը թարգմանվել է թիրախ լեզու **դեմքը առել ու թյան զգացմունքից կապրել** բառակապակցությամբ: Տվյալ հատվածում կիրառվել է *քերականական փոխակերպում*, մասնավորապես *խոսքիմասային փոխակերպում*, ավելացել է **զգացում** բառը, այսինքն՝ օգտագործվել է *բառային հավելում* հնարը: Թարգմանիչը աղբյուր լեզվում առկա ոճական հնարները, մասնավորապես **livid look** մակդիրը և **to wear a look of hatred** փոխաբերությունը թարգմանելիս աղբյուր լեզվի հարանչանակային արժեքը թարգմանությունում չի պահպանել:

Օրինակ 2.

«*I hate the whole house*», continued Miss Sharp in a fury. «*I hope I may never set eyes on it again. I wish it were in the bottom of the Thames, I do; and if Miss Pinkerton were there, I wouldn't pick her out, that I wouldn't*» (Thackeray W.«*Vanity Fair*», p.7).

– **Ես ասում եմ այդ ամբողջ տունը**, - գայրացած շարունակեց միսս Շարպը, - հոստով եմ, որ այլ ևս երբեք չեմ տեսնի: Լավ կլիներ, որ այդ տունը թեմզայի տակն անցներ, այո: Իսկ եթե միսս Պինկերտոնն էլ մեջը լիներ, նրան դուրս չէի բերի, չէ՛ի բերի (Թեքերեյ Վ., Ունայնոթյան տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 14):

Վեարում նկարագրվում է Բետիի հոգեվիճակը դպրոցում: Նացանկանում էր փախչել այդ ատելի տեղից, որտեղ մշտապես արհամարհված էր: Իր շրջապատում բոլորը հարուստների երեխաներ էին, իսկ ինքը մի սովորական աղքատ նկարչի աղջիկ էր: Նախանձի և ատելության զգացումները նրա հոգում միահյուսվել էին իրար:

Տվյալ օրինակում ***I hate the whole house*** հատվածը թարգմանվել է **Ես ասում եմ այդ ամբողջ տունը** բացարձակ համարժեքով:

Օրինակ 3.

«*And in their further disputes she always returned to this point, «Get me a situation - we hate each other, and I am ready to go*» (Thackeray W. «*Vanity Fair*», p. 11).

Յետագավեճերի ժամանակ Ռեբեկայն միշտ վերադառնում էր դեպի այս կետը.

Մենք ասում ենք իրար, ես պատրաստ եմ գնալ ու, միայն թե ինձ մի տեղ ճարեցեք (Թեքերեյ Վ., Ունայնոթյան տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 19):

Այս օրինակում նույնպես **համարժեք թարգմանություն** է, երբ անգլերենի **we hate each other** հատվածը թարգմանվել է հայերեն՝ **մենք ասում ենք իրար** համարժեքով:

Օրինակ 4.

When Sir Pitt Crawley heard that Rebecca was married to his son, he broke out into a fury of language, which it would do no good to repeat in this place, as indeed it sent poor Briggs shuddering out of the room; and with her we will shut the door upon the figure of the frenzied old man, wild with hatred and insane with baffled desire (Thackeray

W.«Vanity Fair», p. 117).

Երբ սըր Պիտ Կրոուլիսն լսեց, որ Ռեբեկան ամուսնացել է իր որդուն հետ, այնպես բռնկվեց, դուրս թափելով անվայել բառերի մի հեղեղ (որը հարմար չէ այստեղ կրկնել), որ խեղճ Բրիգսը ստիպված եղավ սարսռելով փախչել սենյակից: Այստեղ էլ մենք փակելու ենք դուռը **մոլեգնած ծեր մարդու վրա, որը ատելու թյուր ունից այդ վայրագ սեսքն էր ստացել ու չհրականացված ցանկություն ունից ինչ ազարվել** (Թեքերեյ Վ., Ունայնությունն տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 172):

Երբ Պիտ Կրոուլիսն իմացավ, որ Ռեբեկան ամուսնացել է իր որդուն հետ, ատելու թյուր լցվեց՝ գիտակցելով, որ Բետտին ընտրել է երիտասարդ տղամարդու և հօդս ցնդեցրել իր ցանկությունները:

Անգլերենի *frenzied old man, wild with hatred and insane with baffled desire* հատվածը հաղորդվել է **մոլեգնած ծեր մարդը, որը ատելու թյուր ունից այդ վայրագ սեսքն էր ստացել ու չհրականացված ցանկություն ունեցից ինչ ազարվել** թարգմանությամբ: Թարգմանիչն օգտագործել է *չարահյուսական փոխակերպում* հնարը, մասնավորապես՝ հետադաս բացահայտիչը՝ հայերեն նախադասության կառուցվածքը ճիշտ կառուցելու նպատակով:

Օրինակ 5.

And, as **the hatred of vice** is always a progress towards virtue, Mrs. Bute Crawley endeavoured to instil her sister-in-law a proper abhorrence for all Rawdon Crawley's manifold sins: of which his uncle's wife brought forward such a catalogue as indeed would have served to condemn a whole regiment of young officers (Thackeray W.«Vanity Fair», p. 135).

Եվ քանի որ **ատելու թյուր ունը դեպի մարդկային մոլություններն ու մեղքերը** միշտ հանդիսանում են մի քայլ դեպի առաքինությունը, ուստի միսիս Բյուտ Կրոուլիսն ջանք չէր խնայում իր տալ ոչ մեջ ներարկելու առանձին մի գարշանք՝ Ռոդոն Կրոուլիսի բազմապիսի հանցանքների նկատմամբ, և նրա հորեղբոր կինը այնպիսի մի ընդարձակ ցուցակ էր մեջտեղ բերել, որը հիրավի, կարող էր ծառայել, որպես մեղադրական ակտ՝ դատապարտելու երիտասարդ սպաների մի ամբողջ գունդ (Թեքերեյ Վ., Ունայնությունն տոնավաճառ,

թարգմ.՝ Ալ Եմյան Ս., Էջ 200):

Վեպուժմ միսիս Բյուլտը ջանք չէր ինչայ ուժ, որ չարախոսեր Ռոդան Կրոուլի մասին ծեր տիկնոջ մոտ, ով իր ողջ ժառանգությունը թողել էր այդ տղային: Նախանձը և ատելությունը միախառնվել են Բյուլտի հոգում:

The hatred of vice արտահայտությունը թարգմանվել է հայերեն **ատելությունը դեպի մարդկային մոլություններն ու մեղքերը**: Այստեղ առկա է *հավելման* հնարը՝ **դեպի մարդկային** բառերի հավելումը: Անգլերենում **vice** բառն ունի համատեքստային տարբեր իմաստներ, այն է՝ *արատ, չարիք, անբարոյականություն, մոլություն, պակասություն, վատ սովորույթ*: Թարգմանիչը գերադասել է կիրառել *նկարագրական թարգմանություն*՝ **vice** բառի իմաստը հաղորդելու համար: Վերջինս չունի **մեղք** իմաստը, սակայն թարգմանիչը, ընդհանրացնելով տվյալ բառի բոլոր իմաստները և փորձելով ընդգրկել **vice** բառի իմաստային ամբողջ ծավալը՝ դրանք միավորելով **մոլորություն** և **մեղք** բառերի ներքո՝ բոլորն էլ համարել է **մեղք** (*չարիքը, անբարոյականությունը, մոլորություն, վատ սովորույթները*): Յետևաբար, թարգմանիչն իր սուբյեկտիվ կարծիքն է արտահայտել տվյալ հատվածում, ինչը հանգեցրել է գործաբանական անհամարժեքության: Կառաջարկել ենք **ատելությունը դեպի մարդկային թերությունները** թարգմանությունը՝ պահպանելու համար բնագիր տեքստի իմաստային կաղապարը:

Օրինակ 6.

Some few sneered at him and hated him. Some, like Dobbin, fanatically admired him. And his whiskers had begun to do their work, and to curl themselves round the affections of Miss Swartz (Thackeray W.«Vanity Fair», p. 149).

Մի քանիսը քամահրում, առում էին նրան: Որոշ երիտասարդներ էլ, ինչպես Դոբբինը, մոլեգնաբար **սքանչացել էր** նրանով: Եվ նրա բեղերը սկսել էին իրենց գործը կատարել. ու նորվել միսս Սուորոցի սրտի շուրջը (Թեքերեյ Վ., Ունայնության տոնավաճառ, թարգմ.՝ Ալ Եմյան Ս., Էջ 221):

Վեպուժմ Ջորջը մեծ համակրանք էր վայելում իր շրջապատում: Նրա հերոսական կերպարը «ոտնակոխ էր արել» բոլոր երիտասարդ

պճնամուլ երին: Այդ պատճառով բոլորն ատելությամբ էին լցված Ջորջի հանդեպ:

Անգլերենի **Some few sneered at him and hated him** նախադասությանը թարգմանվել է **Մի քանիսը քափառում, ատում էին նրան** նախադասությամբ, որտեղ **to sneer** բայն ունի **ծիծաղել, քմծիծաղել** իմաստը: Սակայն թարգմանիչը, կիրառելով *փոխառուցման* հնարը, թարգմանել է այն **քափառել** բայով, որը, համաձայն Ս. Մալխասյանցի բացատրական բառարանի, նշանակում է **սրհամարհել, բանի տեղ չդնել** (ՐԲԲ 1944:543): Ակնհայտ է, որ թարգմանիչը չի հաղորդել **to sneer** բայի իմաստը, որը հանգեցրել է բնագիր տեքստի և թարգմանության գործաբանական անհամարժեքության:

Օրինակ 7.

«It's a shame, by Heavens», said George, working himself up into passion and enthusiasm as he proceeded, «to play at fast and loose with a young girl's affections - and with such an angel as that - one so superior to the people amongst whom she lived, that she might have excited envy, only she was so good and gentle, that it's a wonder anybody dared to hate her. If I desert her, sir, do you suppose she forgets me?» (Thackeray W. «Vanity Fair», p. 153).

Ամոթ է, երկի՛նքը վկա,- ասաց Ջորջը, ավելի ու ավելի հուզվելով ու խանդավառվելով,- ամոթ է խաղալ երիտասարդ աղջկա զգացմունքների հետ, այն էլ այնպիսի մի հրեշտակի, որպիսին նա է, մի աղջիկ, որը այնքան բարձր է իր միջավայրից, որ կարող է նախանձի աղբյուր հանդիսանալ, այնքան բարի ու քնքուշ, որ զարմանալի է, թե կարող են գոյություն ունենալ անձնավորություններ, որ թույլ տան իրենց ատել նրան: Եթե ես լքեմ նրան, սըր, կարծում եք, թե նա կմոռանա՞ ինձ (Թեքերեյ Վ, Ունայնության տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 225):

Նշված վեպում Ջորջի հայրը դեմ էր որդու ամուսնությունը, սակայն որդին համառորեն պնդում էր իր կարծիքը և փաստում, որ Էմիլիան բարձր է այդ սնափառ միջավայրից, որն էլ պատճառ էր հանդիսացել նրա հանդեպ աղջիկների նախանձի և ատելության դրսևորման:

She might have excited envy, ...it's a wonder anybody dared to hate her
 հատվածը թարգմանիչը ներկայացրել է հետևյալ կերպ՝ **Մի աղջիկ..., որ կարող է նախանձի աղբյուր հանդիսանալ...թե կարող են գոյ ությ ու ն ու նենալ անձ նախորոթյ ու ններ, որ թույլ տան իրենց ատել նրան:** Անգլերենում *to excite* բայն ունի **արթնացնել** փոխաբերական իմաստը, սակայն թարգմանիչն օգտագործել է *հարմարեցման* և *հավելման* հնարները՝ ավելացնելով **աղբյուր** բառը, որը բնորոշ է հայ լեզվամշակույթին և ունի **սխառտ՝ առիթ** փոխաբերական իմաստը (օր.՝ **զայրույթի աղբյուր, խանդի աղբյուր, նախանձի աղբյուր.** տե՛ս՝ **աղբյուր - վիպ. սխառտ, առիթ** (ԱՅԲԲ 1976:23): Կարծում ենք, այս հատվածը հայերեն համարժեքով՝ այն է՝ **Նա կարող էր նախանձ առաջացնել**, թարգմանելը առավել տեղին կլիներ: Ինչ վերաբերում է **dared to hate her** հատվածին, որը թարգմանիչը հաղորդել է **թույլ տան իրենց ատել նրան** թարգմանությամբ, կառաջարկեինք **որ համարձակվեն ատել նրան** տարբերակը՝ պահպանել ու համար **to dare** բայի իմաստային կառավարը: Կիրառելով *փոխառուցման* հնարը՝ թարգմանիչը չի պահպանել նախադասության գործաբանական արժեքը՝ փոքր-ինչ *մեղմացնելով to dare* բառի իմաստը:

Օրինակ 8.

She was naturally of a kindly and forgiving disposition. Now that the cause of jealousy was removed, her dislike for Rebecca disappeared also, and she remembered the latter's invariable good words and good humour (Thackeray W.«Vanity Fair», p. 181).

Նա բնականից բարի ու ներող տրամադրության տեր կին էր, և այժմ, երբ այլ ևս նախանձել ու բան չկար, նրա խորշանքը Ռեբեկայի հանդեպ անհետացել էր, և նա հիշում էր վերջինիս անփոփոխ բարի խոսքերն ու զվարթամտությունը (Թեքերեյ Վ., Ունայնության տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 264):

Միսիս Բյուրեղ այլ ևս չէր ատում և նախանձում Ռեբեկային, քանի որ վերջինս զրկվել էր ժառանգությունից: Բացի այդ նրան հաջողվել էր պահել լեդի Կրոուլիի տունը «բռնակալական լծի տակ»:

Անգլերենի *the cause of jealousy was removed* հատվածը թարգմանիչը հաղորդվել է **Նախանձել ու բան չկար** թարգմանությունը՝ կիրառելով *խոսքի մասային փոխակերպման* հնարը: Ինչպես նշել ենք, թե՛ հայերենի **Նախանձ** և **խանդ** և թե՛ անգլերենի **envy** և **jealousy** գոյականներն ունեն իմաստային ընդհանրություններ և որոշ համատեքստերում համարվում են հոմանիշներ: Այնուհայտե, որովհետև համատեքստում առկա է **jealousy** և **envy** բառերի իմաստային ընդհանրություն և թարգմանիչը այն *համարժեքորեն* թարգմանել է հայերեն **Նախանձ** բառի միջոցով:

... *her dislike for Rebecca disappeared* հատվածը թարգմանվել է **Նրա խորշանքը Ռեբեկայի հանդեպ անհետացել էր** *համատեքստային համարժեքով*, սակայն **dislike** բայը, ունենալով չեզոք իմաստ անգլերենում, հայերեն թարգմանվել է ոչ թե համապատասխան **ատել ու թյուր** *համարժեք* գոյականով, այլ հեղինակը տեքստի արտահայտչականությունը ու ժգնացնել ու նպատակով օգտագործել է **խորշանք** գոյականը:

Օրինակ 9.

Becky's former acquaintances hated and envied her; the poor woman herself was yawning in spirit (W. Thackeray, «Vanity Fair», p. 377).

Բեկիի նախկին ծանոթները ատում և նախանձում էին նրան, խեղճ կինն ինքը հոգու խորքում ձանձրույթից մեռնում էր (Թեքերեյ Վ., Ունայնություն տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 531):

Վեպում մարդիկ շարունակ չարախոսում էին և նախանձով ու ատելությամբ էին լցվում Բեկիի հանդեպ: Եվ Բեկին այդ ամենից հոգնել էր:

Becky's former acquaintances hated and envied her հատվածը թարգմանվել է *ամբողջական համարժեքով*՝ **Բեկիի նախկին ծանոթները ատում և նախանձում էին նրան** նախադասությամբ:

Օրինակ 10.

Mrs. Frederick Bullock, I say, flung glances of the bitterest hatred at the little upstart as he rode by with his hand on his side and his hat on one ear, as proud as a lord (Thackeray W.«Vanity Fair», p. 420).

Միսիս Ֆրեդերիկ Բալլոկը, որն ատելու թյամբ էր նայում փոքրիկ դուրսարձուկին, մինչ վերջինս ձիավարում էր, մի ձեռքը՝ կոնքին, գլխարկը՝ թեք, մի խոսքով՝ իսկական և որդի նման (Թեքերեյ Վ., Ունայ նու թյ ան տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 583):

Վեարում Տիկին Ֆրեդերիկ Բալլոկը ատելու թյամբ և նախանձով էր հետևում տղայի ձիավարմանը, քանի որ վերջինս արդեն հասուն ջենթլմեն էր և իր հորաքրոջ երեխաներին գրկել էր ժառանգությունից:

Mrs. Frederick Bullock flung glances of the bitterest hatred at the little upstart՝ միսիս Ֆրեդերիկ Բալլոկը, որն ատելու թյամբ էր նայում փոքրիկ դուրսարձուկին հատվածում թարգմանիչը **flung glances** հատվածը թարգմանել է **նայում էր** բայով՝ կիրառելով *քերականական փոխակերպում*, մասնավորապես՝ *խոսքիմասային փոխակերպում*, մինչդեռ կարելի էր թարգմանել **հայացք էր նետում համարժեքով: Bitterest hatred** բառակապակցությունը թարգմանվել է **ատելու թյում** գոյականով՝ չպահպանելով բնագիր տեքստի գործարանական և ոճական արժեքը: Թարգմանիչը օգտագործել է *գեղջման* հնարը: Կառաջարկեինք թարգմանել **նա նետեց դառը ատելու թյամբ հայացք** թարգմանությունը, որտեղ կպահպանվեր անգլերենում առկա ոճական հնար՝ մակդիրը:

Օրինակ 11.

He worshipped her with a queer, craven idolatry, like a savage, a worship based on enormous fear, and even hate of the power of the idol, the dread idol (Lawrence D.H. «Lady Chatterley's Lover», p. 94).

Քլիֆորդը երկրպագում էր նրան տարօրինակ, երկյուղած պաշտամունքով, վայրենու պես, որպես անասելի սարսափներով պարուրված պաշտամունքի առարկա, **նույնիսկ ատելու թյամբ և ցված՝ իր կուռքի ամենագորոթյան հանդեպ սարսափազդու կուռքի** (Լորենս Դ.Դ., Լեդի Չաթերլիի սիրեկանը, թարգմ.՝ Արսենյան Ա., էջ 179):

Քլիֆորդը նախանձում էր Կոնիին, այն պատճառով, որ վերջինս սիրված է անմնացորդ կերպով, նա ատում էր կուռքի ամենագորոթյունը, որ Կոնիին տարածում էր իր՝ Քլիֆորդի վրա: Ոչ

ոք չէր սիրել Քլիֆորդին և կուռք համարել, ինչպես որ նա էր սիրում ու պաշտում Կոնիին: Ահա ինչի համար էր Քլիֆորդը նախանձում Կոնիին:

Hate the power of the idol, the dread idol հատվածը հայերեն թարգմանվել է *հավելման և հարմարեցման* հնարներով՝ **առել ությամբ լցված՝ իր կուռքի ամենազորության հանդեպ սարսափազդու կուռքի՝** ավելացնելով **լցված** բառը: Բառի հավելումը պայմանավորված է հայերենի լեզվակրին հատուկ մտածելակերպով, ինչպես, օրինակ, **աչքերը կատաղության ու նից լցվեցին**, և այն փոխաբերաբար նշանակում է **որևէ զգացմունքի՝ ասրու մի բուն ուն արտահայտության ու ն ստանալ** (ԱՅԲԲ 1976:541):

3. Նախանձ իմաստն առկայացել է **զայրույթ** տարբերակիչ բաղադրիչներով:

Այս խմբում հիմնականում ընդգրկվել են անգլերենի *envy* իմաստային դաշտի *մոտակա եզրի* միավորները, օրինակ՝ **indignation, indignant, resentment, bitterness** բառերը և հայերեն տվյալ միավորները թարգմանվել են **զայրույթ, վրդովմունք** բառերով, որոնք ընդգրկված չեն հայերենի *նախանձ* իմաստային դաշտում:

Օրինակ 1.

The truth is, he was attached to the lady's maid in question, and indignant that she should have been robbed of her perquisites (Thackeray W.«Vanity Fair», p. 47).

Իրականությանն այն է, որ այս մարդը սիրահարված էր լեդիի սպասուհուն և զայրացած էր, որ նրան կողոպտել են, ուրիշին տալով այն, ինչ որպես հավելավարձ տալու էին նրան (Թեքերեյ Վ., Ունայնության տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 73):

Ճառաներից մեկը վրդովված էր, քանի որ նախանձում էր, որ Էմիլիայի գեղեցիկ զգեստը նվիրեցին ոչ թե իր սիրած աղջկան՝ տիկնոջ սպասուհուն, այլ Ռեբեկային:

He was indignant հատվածը թարգմանվել է **զայրացած էր ամբողջական համարժեքով**:

Օրինակ 2.

She felt almost upper class; and at the same time **a resentment against the ruling class smouldered in her. The Masters!** (Lawrence D.H.«Lady Chatterley's Lover», p. 69).

Կարծես ավելի բարձր խավից էր, բայց միաժամանակ **ներքուստ այրվում էր իշխողների հանդեպ վրդովմունքի զգացումից: Տերե՛ր են** (Լորենս Դ.Դ., Լեդի Չաթըրլի իի սիրեկանը, թարգմ.՝ Արսենյան Ա., էջ 136):

Վեպում միսիս Բոլթընը Քլիֆորդի հավատարիմ ծառան էր և իրեն բարձր խավին էր արդեն դասում: Սակայն ներքուստ նա նախանձում էր և վրդովվում, երբ հարուստները տերերի դերի մեջ էին մտնում՝ ինչն ո՞վ էին աղքատները պակաս:

A resentment against the ruling class smouldered in her հատվածում թարգմանիչն օգտագործել է *հավելման* հնարը՝ ավելացնելով **զգացում** գոյականը և հաղորդվել **ներքուստ այրվում էր իշխողների հանդեպ վրդովմունքի զգացումից** թարգմանու թյամբ:

Օրինակ 3.

And, deep down, there was a **profound grudge**. They «worked for hi». **And in their ugliness, they resented his elegant, well-groomed, well-bred existence.** «Who's he!» **It was the difference they resented** (Lawrence D.H.«Lady Chatterley's Lover», p. 167).

Խորքում **հիմնավոր նախանձն** էր: «Սրա համար ենք աշխատում»: Եվ **գիտակցելով, որ իրենք տգեղ էին ու սիւս, առում էին իրենց սիրոջ նրբաճաշակ, խնամված ու բարեկիրթ գոյ ու թյ ու նր:** «Ո՞վ եղավ որ»: **Առում էին** ոչ թե նրան, այլ նրա ու **իրենց միջև եղած Տարբերութունը** (Լորենս Դ.Դ., Լեդի Չաթըրլի իի սիրեկանը, թարգմ.՝ Արսենյան Ա., էջ 247):

Բանվորները նախանձում էին տերերին՝ գիտակցելով՝ որքան տգեղ էին իրենք, և որքան խնամված էին իրենց տերերը: Նախանձի զգացումը միանգույն վում է առել ու թյան և զայրույթի հետ:

Անգլերենի **and in their ugliness, they resented his elegant, well-groomed, well-bred existence** և **it was the difference they resented** հատվածները հաղորդվել են՝ **գիտակցելով, որ իրենք տգեղ էին ու սիւս, առում էին իրենց սիրոջ նրբաճաշակ, խնամված ու բարեկիրթ գոյ ու թյ ու նր** և **առում էին...իրենց միջև եղած Տարբերությունը**

թարգմանությամբ:

Տվյալ օրինակը հանդես է գալիս անգլերենի **envy** իմաստային դաշտում ընդգրկված **grudge** միավորով, մասնավորապես՝ **profound grudge** բառակապակցությունը թարգմանելով **հիմնալոր նախանձ համարժեքով**: Պետք է նշել, որ թե՛ **grudge** և թե՛ **նախանձ** գոյականները հայերենի **նախանձ** և անգլերենի **envy** իմաստային դաշտերի մոտակա եզրի անդամներ են, սակայն թարգմանիչը, կիրառելով *փոխատուցում* հնարը, անգլերենի բնագրի **resent** բայը հաղորդվել է թարգմանությունն հայերենի **նախանձ** իմաստային դաշտում չընդգրկված **ատել** բայով: Հատկանշական է, որ **resent** բայը, ըստ բառարանային տվյալների, չունի **ատել** իմաստը. այն նշանակում է *զայրանալ, վրդովվել, հուզվել, նեղանալ*: Սակայն թարգմանիչը, ելնելով համատեքստից, ընտրել է **ատել** բայը՝ էլ ավելի սաստկացնելու համար բացասական զգացումի դրսևորումը՝ կիրառելով կրկին *փոխատուցում* հնարը:

Օրինակ 4.

*And she fell to thinking of her Russell Square friends with that very same philosophical **bitterness** with which, in a certain apologue, **the fox is represented as speaking of the grapes.** (Thackeray W.«Vanity Fair», p. 46).*

*Եվ նա այժմ մտածում էր Ռասսել-սկվերի իր բարեկամների վերաբերյալ նույնպիսի փիլիսոփայական **դառնություն**, ինչպես առակի մեջ **աղվեսն է ներկայացված՝ խաղողի մասին խոսելիս** (Թեքերեյ Վ., Ունայնություն տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 72):*

Այս օրինակում **նախանձ** գոյականն առկայացել է **ցավ, տանջանք** իմաստներով:

Ռեբեկան ցավ էր ապրում նախանձից, երբ մտածում էր Ռասսել – սկվերում ապրողների անհոգ կյանքի մասին: Իսկ նա ստիպված էր գնալ աշխատելու և պետք է հաշտվեր, ինչպես ինքն էր ասում, «դաժան բախտի հետ»: Նա համոզում էր ինքն իրեն, որ ավելի լավ է ապրել ազնվական ընտանիքում, քան շփվել Սիթիի ռամիկ ժողովրդի հետ:

Թարգմանիչն այս օրինակում **bitterness** բառը, որը անգլերենի **envy** իմաստային դաշտում ընդգրկված միավոր է, թարգմանել է **դառնություն** և *համարժեքով*, սակայն վերջինս հայերենի **նախանձ**

իմաստային դաշտի միավոր չի համարվում:

Տվյալ հատվածում հանդիպում ենք *the fox is represented as speaking of the grapes* հատվածի **ինչպես առակի մեջ աղվեսն է ներկայացված՝ խաղողի մասին խոսելիս** թարգմանությունը: Յարկ է նշել, որ թե՛ անգլերենում, թե՛ հայերենում առկա է «Աղվեսի և խաղողի» առակը՝ վերցված Եզոպոսի առակներից, որը հիմք է ծառայել միջազգային դարձվածք-ասույթի առաջացմանը (*The fox couldn't reach the grapes he says «Those grapes are sour!», Աղվեսը չի կարողանում հասնել խաղողին և ասում է. «խաղողը խակ է»*): Յետևաբար, տվյալ ասացվածքը հաղորդելիս, թարգմանիչը կիրառել է *միջլեզվական գուճախեն համարժեքը*:

Օրինակ 5.

The particulars of Becky's costume were in the newspapers - feathers, lappets, superb diamonds, and all the rest. Lady Crackenbury read the paragraph in bitterness of spirit and discoursed to her followers about the airs which that woman was giving herself. Mrs. Bute Crawley and her young ladies in the country had a copy of the Morning Post from town, and gave a vent to their honest indignation (Thackeray W.«Vanity Fair», p. 359).

Բեկիի զգեստի մասին մանրամասները հայտնվեցին լրագրերում՝ փետուրներ, ծալքեր, սքանչելի ադամանդներ և այլն: **Լեդի Քրաքենբերին դառնացած կարդում էր պարբերությունը և իրեն տակավին ուշադրություն արժանացնողներին ասում, թե որքան է գոռոզացել այդ կինը: Միսիս Բյուտ Կրոուլին և նրա ջահել եղիները քաղաքից «Մորնինգ պոստ» էին ստանում և պարտում իրենց անկեղծ զայրույթը:** (Թեքերեյ Վ., Ունայնություն տնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 508):

Լեդի Քրաքենբերին, միսիս Բյուտ Կրոուլին և նրա երիտասարդ օրիորդները դառնություն ամբ էին կարդում լրագրերը: Բեկիի զգեստի մասին մանրամասները նրանց սրտում նախանձի և զայրույթի զգացումներ էին առաջացնում:

Lady Crackenbury read the paragraph in bitterness of spirit հատվածը թարգմանիչը հաղորդել է **Լեդի Քրաքենբերին դառնացած կարդում էր պարբերությունը** թարգմանություն ամբ: *In the bitterness of spirit*

բառակապակցությունը թարգմանվել է **դառնացած**, այսինքն՝ կիրառվել է *գեղջ ման* հնարը, կրճատվել է **spirit** բառը: Պետք է նշել, որ անգլերենի **envy** իմաստային դաշտի անդամ **bitterness** գոյականը թարգմանվել է՝ հայերենի **նախանձ** իմաստային դաշտի միավոր չհամարվող **զայրույթ** գոյականով: Անգլերենի **gave a vent to their honest indignation** հատվածը հաղորդվել է **սպարում էին իրենց անկեղծ զայրույթը** թարգմանությամբ: **To give a vent to feelings** դարձվածքը նշանակում է **զգացմունքներին ելք տալ, զգացմունքներն արտահայտել**: Հայերենում դրան համարժեք դարձվածք է՝ **սիրտը թեթևացնել**՝ *հուզմունքն անցկացնել, հանգստանալ, հանդարտվել* (ՋԼԴԲ 1975:526): **Պարսել** բառը, համաձայն Ա.Սուքիասյանի հոմանիշների բառարանի, նշանակում է՝ 1. *դատարկել (բոբ)*, 2. *սպառել (արևմտ)*, 3. *բանալ (սիրտը)*: Հետևաբար **սպարում** բայն այս տեքստում գործածվել է փոխաբերական երրորդ իմաստով: Այսինքն՝ հայերեն թարգմանության մեջ թարգմանիչը չի օգտագործել *զուգահեռ դարձվածային համարժեքը*, այլ կիրառել է *սովորական պատճենման* հնարը: Կարծում ենք, ավելի տեղին կլիներ այս հատվածը թարգմանել՝ **արտահայտում էին իրենց անկեղծ զայրույթը** հայերեն համարժեքով:

4. Նախանձ իմաստն առկայացել է **թշնամույթյուն** (*մրցակցություն*) տարբերակիչ բաղադրիչներով:

Այս խմբում ընդգրկվել են անգլերենի **envy** իմաստային դաշտի *մուտակա* միևնույն ժամանակ *հեռավոր եզրի rival, rivalry* միավորները, որոնք թարգմանվել են համապատասխանաբար **մրցակից, մրցակցություն** բառերով: Նշենք, որ հայերենի **նախանձ** իմաստային դաշտը չունի այս տարբերակիչ իմաստային խումբը: Հետաքրքրական է, որ նշված իմաստային խումբն առկայացել է միայն **ՈԼ.Թեքերեյի «ՈԼ նայ նույն ան տնավաճառ»** վեպում: Այդ փաստը կարելի է կապել այն հանգամանքի հետ, որ 19-րդ դարում անգլիական իրականությունը չի փայլել խաղաղությամբ. *թշնամույթյունը* ծնել է նաև **նախանձ**:

Օրինակ 1.

... it could not be expected that every one should be of the humble and gentle temper of Miss Amelia Sedley; should take every opportunity to vanquish Rebecca's **hard-heartedness** and **ill-humour**; and, by a thousand kind words and offices, overcome, for once at least, **her hostility** to her kind (Thackeray W.«Vanity Fair», p. 8).

... չի կարելի սպասել, որ ամեն ոք կուներնար միսս Էմիլիա Սեդլիի խոնարհ ու բարեկիրթ բնավորությունը և կօգտագործեր ամեն մի առիթ՝ մեղմել ու Ռեբեկայի **խատարտությունն** ու **հոռի տրամադրությունը** և հազար քնքուշ բառերով, ընկերական ազդեցությունը օգտագործելով՝ թեկուզ մեկ անգամ նրա **թշնամանքը** կփոխեր բարյացկամության (Թեքերեյ Վ., Ունայնության տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 16):

Միայն բարի Էմիլիան էր կարողանում փափկեցնել Ռեբեկայի խատարտությունը, որն առաջացել էր նախանձից և ատելությունից:

Թարգմանիչն օգտագործել է հայերեն **խատարտություն** և **թշնամանք** համարժեքները **hard-heartedness** և **hostility** բառերի համար: Հարկ է նշել, որ **ill-humour** բառն անգլերեն բացատրական բառարաններում ունի **վատ տրամադրություն** իմաստը, սակայն **հոռի** հնացած ածականի (ՐԲԲ 1944:893) միջոցով թարգմանչին հաջողվել է այս հատվածում հաղորդել բնագիր տեքստում առկա հարանշանակային իմաստը: Տվյալ դեպքում թարգմանիչը կիրառել է **փոխհատուցման** հնարը: Նշենք, որ **hard-heartedness** գոյականը **envy** իմաստային դաշտի **մոտակա** եզրի միավոր է, որը հայերենի **նախանձ** իմաստային դաշտի միավորով չի թարգմանվել:

Օրինակ 2.

A generous rivalry, no doubt, as to which should be most attentive to the dear sufferer in the state bedroom. Rebecca used to come out and comfort both of them; or one or the other of them rather (Thackeray W.«Vanity Fair», p. 95).

Անկասկած, դա **վեհանձն մրցակցություն էր**, թե իրենցից ով է ավելի ուշադիր լինել ու գլխավոր ննջասենյակում պառկած սիրելի տառապյալին: Ռեբեկան սովորաբար դուրս էր գալիս ու մխիթարում և՛ մեկին, և՛ մյուսին, երբեմն միասին, երբեմն առանձին (Թեքերեյ Վ., Ունայնության տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 144):

Նախանձի զգացումը ծեր տիկնոջը խնամողների մեջ թշնամանք էր առաջացրել, և նրանք մրցում էին՝ ձգտելով վայելել նրա

վստահությունը:

Անգլերեն **a generous rivalry** օբյեկտորեն ոճական հնարը հայերեն թարգմանվել է **վեհանձն մրցակցություն** համարժեքով: Թարգմանչին հաջողվել է պահպանել բնագիր տեքստի գործարանական արժեքը:

Օրինակ 3.

Becky had a dozen admirers in his place, to be sure, and could cut her rival to pieces with her wit. But, as we have said, she was growing tired of this idle social life (Thackeray W.«Vanity Fair» p. 272).

Բեկին, անկասկած, նրա փոխարեն ու ներտասնյակ երկրպագուներ և կարող էր իր սրամտությամբ կտոր-կտոր անել այդ մրցակցուհուն: Սակայն, ինչպես ասել ենք, նահողներ էր այդ աննպատակ աշխարհիկ կյանքից (Թեքերեյ Վ., Ունայնություն տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 389):

Վեարում գեներալն իր ամբողջ ուշադրությունն ուղղել էր դեպի միսիս Բրենտը, որին Բետտին նախանձում էր և համարում իր թշնամին: Պատճառն այն էր, որ նասովոր էր բոլորի ուշադրության կենտրոնում լինել: Թեև Բետտին կարող էր չեզոքացնել իր մրցակցուհուն, սակայն նա արդեն հոգներ էր պայքարելուց և այդ աննպատակ աշխարհիկ կյանքից:

Becky ... could cut her rival to pieces with her wit՝ Բեկին կարող էր իր սրամտությամբ կտոր-կտոր անել այդ մրցակցուհուն հատվածում **cut to pieces** դարձվածքը բառացի թարգմանվել է *համատեքստային համարժեք՝ կտոր-կտոր անել* դարձվածքով (տե՛ս Բեդիրյան, Չայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, այսուհետ՝ ՉԴԸԲԲ 2011:693):

Ինչ վերաբերում է **rival** բազմիմաստ բառին, նշենք, որ թարգմանիչը հաջողությամբ ընտրել է **մրցակցուհի** համարժեքը: Նշենք, որ **rival** գոյականը անգլերենի **envy** իմաստային դաշտի *հեռավոր* եզրի միավոր է, որը հաղորդվել է թարգմանություն և **մրցակցուհի** գոյականով, որը հայերենի **նախանձ** իմաստային դաշտի *հեռավոր* եզրի անդամ է:

Տվյալ իմաստային խմբում նույնպես առկա է օրինակ, որտեղ **թշնամություն**, **մրցակցություն** իմաստն արտահայտված է համատեքստային շերտում:

5. Նախանձ իմաստն առկայացել է **խանդ** տարբերակիչ բաղադրիչով:

Այս խմբում հիմնականում ընդգրկվել են անգլերենի **envy** իմաստային դաշտի *մոտակա եզրի jealousy, to be jealous* միավորները, որոնք հայերեն թարգմանվել են *նախանձ/ել* և *խանդ/ել* բառերով: Վերջիններս ընդգրկված են հայերենի **Նախանձ** իմաստային դաշտի *մոտակա եզրում*: Սակայն օրինակներից մեկում **to be jealous**-ի թարգմանություն համար հանդիպում ենք հայերենի *հեռավոր գոտու* և անդամակցող **Նախանձախանդի** ածականը: Տվյալ թարգմանություն ընտրության հետ համաձայն չենք, ինչի մասին կխոսենք համապատասխան օրինակի վերլուծության ընթացքում:

Հարկ է նշել, որ **Ջ.Լոնդոնի «Մեծ տան փոքրիկ սիրուհին»** վեպում հանդիպում ենք տվյալ իմաստային բաղադրիչը պարունակող միայն համատեքստային օրինակներ:

Արդեն նշել ենք, որ հայերենի **Նախանձ** և **խանդ** ու անգլերենի **envy** և **jealousy** գոյականներն ունեն իմաստային ընդհանրություններ և որոշ համատեքստերում համարվում են հոմանիշներ: Ստորև բերված օրինակներում առկա է **jealousy** և **envy** բառերի իմաստային ընդհանրություն, և թարգմանիչը դրանք *համարժեքորեն* թարգմանել է հայերեն **Նախանձ** բառի միջոցով:

Օրինակ 1.

«I think Miss is very clever», with the most killing sarcastic air. In fact, Mrs. Firkin had that natural jealousy which is one of the main principles of every honest woman (Thackeray W.«Vanity Fair», p. 75).

– *Կարծում եմ, որ օրիորդը շատ խելացի է:*

Իրապես, միսիս Ֆերկինը զերծ չէր բնական այն նախանձից, որը յուրաքանչյուր ազնիվ կնոջ հիմնական նախատարրերից մեկն է (Թեքերեյ Վ., Ունայնություն տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 114):

Միսս Կրոուլին համակրում էր Բետտիին, և այդ փաստը զայրացնում էր միսիս Ֆերկինին, ով տարիներ շարունակ ծառայել էր ծեր կնոջը, հետևաբար, խանդով էր լցվել Ռեբեկայի հանդեպ և նախանձում էր աղջկան, որին ծեր լեդին ավելի մեծ

արտոնությունները երտալիս, քան իրեն:

Այս օրինակում **նախանձ** գոյականը հանդես է եկել **խանդ** իմաստով: Թարգմանիչը **natural jealousy** բառակապակցությունը թարգմանվել է **բնական նախանձ** բառակապակցությամբ, որը տվյալ համատեքստում միանգամայն ընդունելի է: Իսկ **Mrs. Firkin had that natural jealousy** հատվածը վերարտադրվել է՝ **միսիս Ֆերկինը զերծ չէր բնական այն նախանձից** թարգմանությամբ, որտեղ կիրառվել է **հականշային թարգմանություն**:

Օրինակ 2.

*Seeing the evident partiality of Miss Crawley for the new governess, how good it was of Mrs. Bute Crawley **not to be jealous**, and to welcome the young lady to the Rectory, and not only her, but Rawdon Crawley, her husband's rival in the Old Maid's five per cents!* (Thackeray W.«Vanity Fair», p. 76).

Որքան բարի էր միսիս Կրոուլիին, որը տեսնելով միս Կրոուլիի ակներև կողմնապահությունը նոր դաստիարակչուհու հանդեպ, **չէր նախանձում** և ողջունեց երիտասարդ լեդիի մոտ տքը երիցատուն, և ոչ միայն նրա, այլ և Ռոդոն Կրոուլիի, որը ծեր օրինորդի հինգ տոկոս բերող դրմագլխի նկատմամբ իր ամուսնու մրցակիցն էր (Թեքերեյ Վ., Ունայնություն տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 117):

Միսիս Կրոուլիին չէր նախանձում կամ խանդում դաստիարակչուհուն, ում հանդեպ ծեր լեդին կողմնապահություն էր անում:

Այս օրինակում նույնպես **not to be jealous** արտահայտությունը թարգմանվել է **չէր նախանձում** բայով, քանի որ **նախանձ-խանդ** հոմանշային հարաբերությունը թույլ է տալիս դրանց փոխարձակիրառությունը որոշ համատեքստերում: Իրականացվել է **համարժեք** թարգմանություն:

Օրինակ 3.

*You need **not be jealous** about me, my dear Miss Briggs. I am a poor little girl without any friends, or any harm in me. I don't want to supplant you in Miss Crawley's good graces* (Thackeray W.«Vanity Fair», p. 93).

Դուք կարիք չունեք **նախանձելու ինձ**, իմ սիրելի՛ միսս Բրիգս:

ես մի փոքրիկ, խեղճ աղջիկ եմ՝ առանց որևէ բարեկամի, և իմ սրտում
ոչ մի վնասակար բան չկա: Ու չեմ ուզում ձեզ զրկել միս Կրոուլի
բարյացակամության հից ու գրավել ձեր տեղը (Թեքերեյ Վ.,
Ունայնության տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 141):

Վեարում միսս Բրիգսը խանդում էր Բետտիին, որին ծեր լեդին
բարյացակամ էր վերաբերվում, և աղջիկը հավատացնում էր միսս
Բրիգսին, որ երբևէ նպատակ չի ունեցել գրավել ու նրա տեղը և
կարիք չկար, որ նախանդեր կամ նախանձեր իրեն:

You need not be jealous about me հատվածը թարգմանելով **դուք կարիք
չունեք նախանձել ու ինձ՝** կրկին հաշվի է առնվել **նախանձ** և **խանդ**
գոյականների հոմանշությունը: Իրականացել է *համարժեք*
թարգմանություն:

Օրինակ 4.

*Firkin came downstairs in a tempest of jealousy, only the more dangerous because
she was forced to confine it in her own bosom (Thackeray W.«Vanity Fair», p. 148).*

Ֆերկինը վար իջավ լուռ՝ **նախանձի փոթորկով** բռնված և դաավել ի
վտանգավոր էր, որովհետև նա ստիպված էր այդ ամենը իր ներսում
պահել (Թեքերեյ Վ., Ունայնության տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս.,
էջ 142):

Ֆերկինը նախանձում և խանդում էր Բետտիին, քանի որ ինքը
հավատարիմ ծառայել էր լեդի Կրոուլին, իսկ այժմ վերջինս
գերադասում էր Բետտիին:

Անգլերենի **in a tempest of jealousy** հատվածի փոխաբերության
համար կիրառվել է *համարժեք* թարգմանություն՝ **նախանձի
փոթորկով** թարգմանությամբ:

Օրինակ 5.

*She was so naturally good and soft, that even Firkin was not jealous of her; and
the gentle Briggs thought her friend was less cruel to her when kind Lady Jane was by
(Thackeray W.«Vanity Fair», p. 250).*

Նա այնքան բնականից բարի ու քնքուշ էր, որ **նույնիսկ
Ֆերկինը չէր նախանձում**, իսկ ազնիվ Բրիգսը մտածում էր, թե իր
ընկերուհին այնքան դաժան չի վարվում իր հետ, երբ բարի լեդի

Ձեյնը նրա կոքին է (Թեքերեյ Վ., Ունայնության տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 358):

Լեդի Ձեյնը այն եզակի մարդկանցից էր, ում համակրում էր տիկին Կրոուլին: Լեդի Ձեյնը այնքան բարի և քնքնուշ էր, որ նույնիսկ Ֆերկինը չէր խանդում և նախանձում ծեր Լեդիի և Ձեյնի մտերմությանը:

Even Firkin was not jealous of her հատվածը թարգմանելով **նույնիսկ Ֆերկինը չէր նախանձում** թարգմանությունը ամբ` նորից հանդիպում ենք **նախանձ** և **խանդ** բառերի համատեքստային հոմանշությանը: Կիրառվել է *համարժեք* թարգմանություն:

Օրինակ 6.

The King took notice of her yesterday at the Tuileries, and **we are all jealous of the attention which Monsieur pays her** (Thackeray W.«Vanity Fair», p. 259).

Երեկ Տյուիլերիում նա արժանացավ թագավորի ուշադրությանը, և **մենք բոլորս նախանձում ենք այն վերաբերմունքի համար, որ Monsieur-ը ցուցաբերում էր նրա նկատմամբ** (Թեքերեյ Վ., Ունայնության տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 369):

Հասարակության բարձր խալի կանայք խանդով և նախանձով էին լցված Բետտի հանդեպ, որն արժանացել էր նույնիսկ թագավորի ուշադրությանը:

We are all jealous of the attention which Monsieur pays her հատվածի համար նույնպես կիրառվել է *համարժեք* թարգմանություն՝ **մենք բոլորս նախանձում ենք այն վերաբերմունքի համար, որ Monsieur-ը ցուցաբերել էր նրա նկատմամբ** թարգմանությունը, քանի որ *to be jealous of* և **նախանձել** բառերը հոմանիշներն են:

Օրինակ 7.

Between Mrs. Sedley and her daughter there was a sort of coolness about this boy, and **a secret jealousy** (Thackeray W.«Vanity Fair», p. 288).

Միսիս Սեդլիի և իր դստեր միջև գոյություն ունեցող մի տեսակ սառնություն, **թաքուն և մի նախանձ**` կապված երեխայի հետ (Թեքերեյ Վ., Ունայնության տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 412):

Վեպում մայրը և դուստրը տարածայնություններ ունեին

երեխայի դաստիարակության հարցում, և խնդիրն այնքան էր խորացել, որ վերածվել էր թաքուն նախանձի:

Անգլերենի *there was a sort of coolness about this boy, and a secret jealousy* հաղորդվել է **գոյություն ունեւ մի սեւակ սառնոյ ուն, թաքուն մի նախանձ՝ կապլած երեխայի հետ** թարգմանությամբ: Այս հատվածում *jealousy* գոյականը թարգմանվել է **նախանձ** գոյականով: Կիրառվել է *համարժեք* թարգմանություն:

Օրինակ 8.

Had he been less violent, or more dexterous, he might have succeeded in his supplications to Jos; but the civilian was not a little jealous of the airs of superiority which the Major constantly exhibited towards him (Thackeray W. «Vanity Fair», p. 502).

Եթե Դոբբինսն ավելի քիչ մոլեգնություն և ավելի մեծ ճշտապահություն ցուցաբերեր, գուցե Ջոզին ուղղված նրա թախանձանքները հաջողության հասնեին, **բայց վերջինս սակաւ նախանձախնդիր չէր Դոբբինսի վսեմության հանդեպ** (Թեքերեյ Վ., Ունայնություն տոնավածառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 681):

Ջոզն անհաջողակ էր, որն ամեն ինչ կորցրել էր կյանքում և ակնհայտ էր, որ նախանձով էր լցված Դոբբինսի հանդեպ, քանի որ վերջինս շատ սեւ էր:

...was not a little jealous հատվածը հաղորդվել է **սակաւ նախանձախնդիր չէր** թարգմանությամբ՝ *փոխատուցման* հնարի օգտագործմամբ: Բացատրական բառարաններում **նախանձախնդիր** ածականը ունի *ջերմեռանդ* դրական իմաստը և հայերենի **նախանձ** իմաստային դաշտի *հեռավոր եզրի* անդամ է: Իսկ *jealous* ածականը համաձայն անգլերենի բացատրական բառարանների՝ ունի բացասական՝ *խանդել* կամ *նախանձել* նշանակությունը և պատկանում է անգլերենի *envy* իմաստային դաշտի *մոտակա եզրին*: Յետևաբար, այստեղ չի պահպանվել բնագրի բացասական իմաստը: Կառաջարկելն էր թարգմանել **ոչ սակաւ նախանձով** թարգմանությունը: Սամիակ դեպքն է, որ *to be jealous of*-ը թարգմանվել է **նախանձախնդիր** բառով: Մյուս հատվածներում թարգմանիչը **նախանձախնդիր** բառի համար կիրառվել է *to be eager to* արտահայտությունը, որը նշանակում է **ցանկանալ, ուզել**: *Airs of superiority* փոխաբերությունը, թարգմանվել է **վսեմություն** գոյականով, որը հանգեցրել է բնագիր տեքստի

հարանշանակային իմաստի խախտման: Օգտագործվել է *կրճատման* հնարը:

Օրինակ 9.

*She had something anyhow that Connie hadn't got, and apparently couldn't have. Yes, Mrs Flint had flaunted her motherhood. And **Connie had been just a bit, just a little bit jealous.** She couldn't help it (Thackeray W.«Lady Chatterley's Lover», p. 114).*

Դե ինչ, նա ուներ այն, ինչը Կոնիս չուներ և, հավանաբար, երբեք չէր ունենա: Այո՛, տիկին Ֆլինթը մայրությունն իր աչքն է կոխում: **Եվ Կոնիս մի քիչ, շատ քիչ նախանձ էր նրան:** Անկարող էր դրանից փախչել (Լորենս Դ.Յ., Լեդի Չաթերլի իի սիրեկանը, թարգմ.՝ Արսենյան Ա., էջ 210):

Կոնիս նախանձով էր լցված տիկին Ֆլինթի հանդեպ, նախանդում էր տիկնոջը, քանի որ վերջինս մայր էր, մի բան, որը նրան տրված չէր:

Տվյալ հատվածում անգլերենի **be jealous**-ի թարգմանության համարը նտրելով **նախանձ էր** բայը՝ ունենք *համարժեքության* օրինակ, քանի որ **to be jealous** -ի իմաստերից մեկը հենց **envy՝ նախանձ էլ** իմաստն է:

Հարկ է նշել, որ **օրինակներ 10, 11**-ում *խանդի* իմաստը *համատեքստային* շերտում է առկայացել:

Օրինակ 10.

*«What sort of a person is this Miss Sharp, Firkin? I little thought, while enjoying my Christmas revels in the elegant home of my firm friends, the Reverend Lionel Delamere and his amiable lady, **to find a stranger had taken my place in the affections of my dearest, my still dearest Matilda!**» (Thackeray W.«Vanity Fair», p. 94).*

- Ինչ պիսի՞ անձնավորությունն է այս միս Շարպը, Ֆե՛րկին: Իմ ջերմ բարեկամների՝ արժանապատիվ Լայոնել Դելամերի և իր ազնիվ լեդիի վայելուչ տանը՝ վայելելով ծննդյան տոնի խրախճանքները, քիչ էի մտածում, թե ստիպված կլինեմ **տեսնել մի օտար մարդու, որը գրավել է իմ տեղը՝ իմ ամենասիրելի, ամենաթանկագին Մաթիլդայի սրտում** (Թեքերեյ Վ., Ունայնության տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 142):

Միսս Բրիգսը նախանձով և խանդով էր լցվել Ռեբեկայի հանդեպ, որը շատ կարճ ժամանակահատվածում կարողացել էր վայելել Մաթիլդայի սերը:

In the affection արտահայտու թյան թարգմանություն համար ընտրվել է **սրտում** թարգմանությունը: Անգլերենի **affection** բառը *սիրո, համակրանքի, մտերմության* հոմանիշն է (*love, attachment, devotion, fondness*), և նրա հոգնակի թվի կիրառությունը այս բոլոր զգացմունքների հավաքական դերի ցուցիչն է: Հայլեզվամշակույթին էլ բնորոշ է *սիրտ* բառը կիրառել այս կամ այն զգացմունքներն արտահայտելու համար: Այս է պատճառը, որ *հարաբերական համարժեքի և փոխաբերության* միջոցով թարգմանիչը սաստկացրել է արտահայտչականությունը:

Օրինակ 11.

«Lucky devil» was Graham's thought, not because of his host's vast ranch and the success and achievement of it, but because of the possession of a wonder-woman who could look unabashed and appreciative into his eyes as the Little Lady had looked (London. J«The Little Lady of the Big House», p. 79).

«Երջանիկ մարդ...» մտածեց Գրեհեմը, բայց ոչ այն պատճառով, Ֆորեսթը հարուստ կազմվածքի տեր է, այլ այն, որ Ֆորեսթին է պատկանում այդ սքանչելի կինը, որն առանց զմայլվելու, ամուսնուն է նայում այդքան պարզ ու երախտագետ հայացքով (*Լոնդոն Ջ., Մեծ տան փոքրիկ տիրուհին, թարգմ.՝ Սիմոնյան Կ., էջ 522*):

Գրեհեմը նախանձում էր Դիկին և «երջանիկ մարդ» համարում, որ նա Պաուլայի նման կին ուներ: Մինչդեռ իրեն ոչ մի կին այդքան երախտապարտ չէր եղել, որքան այդ կինն էր երախտապարտ իր ամուսնուն:

Lucky devil հատվածը թարգմանվել է **երջանիկ մարդ** բառակապակցությամբ: Համաձայն բառարանային տվյալների՝ **lucky devil** արտահայտությունն ունի **բախավոր մարդ** թարգմանությունը: Սակայն հայերենի **բախավոր** և **երջանիկ** բառերն ունեն տարբեր հարանշանակային արժեքներ այն իմաստով, որ մարդու բախորդ հայմտածելակերպում կախված չէ մարդուց, իսկ երջանիկ մարդը հենց ինքն է իրեն այդպես զգում: Անգլերենում նույնպես գոյություն

ուևնի *lucky* և *happy* բառերի իմաստային տարբերությունը, այն է՝ **բախտավոր** կամ **հաջողակ** և **երջանիկ**: Այսպիսով, այս հատվածում կիրառվել է *փոխառուցման* հնարը, և տեղի է ունեցել գործարանական անհամարժեքություն:

6. Նախանձ իմաստն առկայացել է **վրեժխնդրություն** տարբերակիչ բաղադրիչներով:

Այս խմբում հիմնականում ընդգրկվել են անգլերենի *envy* իմաստային դաշտի *մոտակագրի* միավորները, օրինակ՝ **malice, grudge** բառերը, և հայերեն նշված միավորները թարգմանվել են **ոխ վրեժխնդրություն, չարակամություն, քիսախնդրություն** բառերով: Վերջիններս ևս ընդգրկված են հայերենի *նախանձ* իմաստային դաշտի *մոտակագրում*: Նշենք, որ *նախանձ* իմաստի *համատեքստային* առկայացումը այս տարբերակիչ իմաստային բաղադրիչով հաճախ է հանդիպում, բացառությամբ **Ջ. Լոնդոնի «Մեծ տան փոքրիկ սիրող հիս»** վեպի, որտեղ նմանատիպ օրինակներ չենք հանդիպել:

Օրինակ 1.

It was the lad who had peached upon him about the grocer's cart; but he bore little malice, not at least towards the young and small (W. Thackeray «Vanity Fair», p.31).

Դա այն փոքրիկ տղան էր, որը չարախոսել էր իր մասին բռնակառքի առնչությամբ: Բայց **Դոբբինի սրտում չարակամություն գրեթե չկար**, հատկապես փոքրերի ու թուլյլերի նկատմամբ (Թեքերեյ Վ., Ունայնության տոնավաճառ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 47):

Դոբբինը չարացած չէր այն տղայի նկատմամբ, որը չարախոսել էր իր մասին, քանի որ վերջինս էր և թուլյլ:

...*but he bore little malice* հատվածը հաղորդելով **բայց Դոբբինի սրտում չարակամություն գրեթե չկար** թարգմանությամբ՝ թարգմանիչն օգտագործել է տարբեր հնարներ: Կիրառվել է նաև *նկարագրական թարգմանություն*՝ **to bear little malice** դարձվածքի համար առաջարկելով **սրտում չարակամություն գրեթե չկար** թարգմանությունը: Բացի այդ, գործածվել է *հավելման* և *հարմարեցման* հնարները՝ ավելացնելով **սրտում** գոյականը: Այս

բառի ավելացումը կարևոր է հայ ընթերցողի համար և տիպիկ է հայ
լեզվամտածողությանը, քանի որ, ինչպես նշել ենք, հայերենի
լեզվակիրը բոլոր զգացմունքները իր սրտում է պահում:

Օրինակ 2.

*He was such a sharp landlord, that he could hardly find any but bankrupt tenants; and such a close farmer, as to **grudge** almost the seed to the ground, whereupon revengeful Nature **grudged** him the crops which she granted to more liberal husbandmen (Thackeray W.«Vanity Fair», p. 61).*

*Նա այնպիսի խիստ կալվածատեր էր, որ հազիվ թե կարողանար
վարձակալ գտնել, բացի սնանկացած մարդկանցից, այնպիսի հաշվող,
գծուծ գյուղատնտես էր, որ նույնիսկ սերմը **դժկամությամբ** էր
ցանում, և նույն ձևով էլ՝ **վրիժառու** բնությունը **դժկամությամբ**
էր աճեցնում բերքը, և ընդհակառակը՝ պարզաատրում էր հողի
առատածեռն մշակողներին (Թեքերեյ Վ., Ունայնության տոնավաճառ,
թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 92):*

Նշված հատվածում բնությունն անձնավորված է: Վերջինս ոխ է
պահում այն գծուծ գյուղատնտեսի հանդեպ, որը սերմը
դժկամությամբ է ցանել, որն էլ նրան վատբերք է պարգևում:

Revengeful Nature grudged him the crops հատվածը հաղորդվելով
վրիժառու բնությունը դժկամությամբ էր աճեցնում բերքը
թարգմանությամբ՝ կատարվել է *խոսքիմասային քերականական*
փոխակերպում: Իսկ *revengeful Nature* մակդիրը թարգմանիչը հաղորդել
է **վրիժառու բնությունն ամբողջական համարժեքով**:

Grudged the crops հատվածը հաղորդվել է որպես **դժկամությամբ էր
աճեցնում** թարգմանությամբ: Անգլերենի *to grudge* բայը համարվում
է անգլերենի *envy* իմաստային դաշտի *մոտակագրի* միավոր և ունի մի
քանի իմաստ (1. *նախանձել*, *չկամություն անել*, *ոխպահել*, 2. *ախոսալ*,
դժկամությամբ տալ), այդ իսկ պատճառով թարգմանիչն օգտագործել է
նկարագրական համատեքստային թարգմանություն:

Օրինակ 3.

«No!» she said. 'Is it a joke? Or malice?

He paused before he answered:

«Neither, I hope. I hope it may be a prophecy» (Lawrence D.H.«Lady Chatterley's Lover», p. 130).

- Չե՛մ էլ սեղ, - ասաց: **Կատա՛կ է: Թե՞ քինախնդրու թյ ու ն:**

Քլիֆորդը մի պահ դադար առավ, հետո պատասխանեց.

- Կարծու՛մ եմ, ո՛չ մեկը և ո՛չ էլ մյ ու սը: Յու սով եմ ճակատագիր է (Լորենս Դ.Յ., Լեդի Չաթըրլիի սիրեկանը, թարգմ.՝ Արսենյան Ա., էջ 235):

Քլիֆորդը կնոջ մասին զրպարտանքները համարում է նախանձի հետևանք՝ քինախնդրու թյ ու ն: Աղքատները միշտ էլ չարացած էին իր ընտանիքի հանդեպ՝ նրանք միայն նախանձում էին իր հարստությանը և, նրա կարծիքով, հարմար պահ էին ընտրել Կոնիից չարախոսելու համար:

Is it a joke? Or malice? հատվածը թարգմանիչը հաղորդել է **Կատա՛կ է, թե՞ քինախնդրու թյ ու ն** թարգմանությունը՝ կիրառելով *համարժեք* թարգմանություն: Յարկ է նշել, որ **malice** գոյականը անգլերենի *envy* իմաստային դաշտի *մոտակա* եզրի միավոր է, սակայն հայերենի **քինախնդրու թյ ու ն** գոյականը հայերենի *նախանձ* իմաստային դաշտում ընդգրկված չէ:

Օրինակ 4.

She had twelve intimate and bosom friends out of the twenty-four young ladies. Even envious Miss Briggs never spoke ill of her; high and mighty Miss Saltire allowed that her figure was genteel; and as for Miss Swartz, the rich woolly-haired mulatto from St. Kitt's, on the day Amelia went away, she was in such a passion of tears that they were obliged to send for Dr. Floss, and half tipsify her with salvolatile (Thackeray W.«Vanity Fair», p. 4).

Քսանչորս երիտասարդ լեդիներից տասներկուսը նրա մտերիմ, սրտակից ընկերներն էին: **Նույնիսկ նախանձոտ միսս Բրիգսը երբեք վատ բան չէր խոսում նրա մասին**, մեծամիտ և զորավոր միսս Սոլտայրը ընդունում էր, որ նա բարեկիրթ կերպարանք ունի, իսկ ինչ վերաբերում է հարուստ միսս Սոլորգին՝ Սենտ-Կիտից եկած բրդոտ մազերով խառնածինին, Էմիլիայի մեկնելու օրը այնպես դառն արտասվեց, որ ստիպված եղան բժիշկ Ֆլոսին կանչել և ցնդող աղով մասամբ թմրեցնել նրան (Թեքերեյ Վ., Ունայնություն

տոնաված առ, թարգմ.՝ Ալեմյան Ս., էջ 10):

